Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի առաջին եռամսյակ

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Դեն Սոլիս

Բովանդակություն

		ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԸ	2
Դաս 1.	28.12-03.01	ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ	5
Դաս 2.	04.01-10.01	ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ	14
Դաս 3.	11.01-17.01	ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՈԹՔ	23
Դաս 4.	18.01-24.01	ՀՈՐԴՈՐԵԼՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ	32
Դաս 5.	25.01-31.01	ԾԱՌԱՅԵԼՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ	41
Դաս 6.	01.02-07.02	ԾԱՌԱՅԵԼՈՎ «ՀԱՍԱՐԱԿ» ՄԱՐԴԿԱՆՑ	51
Դաս 7.	08.02-14.02	ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՄԵՐԺՎԱԾՆԵՐԸ	59
Դաս 8.	15.02-21.02	ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՆԵԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ	68
Դաս 9.	22.02-28.02	ԾԱՌԱՅԵԼՈՎ ԻԵԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ	77
Դաս 10.	01.03-07.03	ԾԱՌԱՅԵԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ	86
Դաս 11.	08.03-14.03	ԾԱՌԱՅԵԼՈՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ	95
Դաս 12.	15.03-21.03	ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԵՎ ՀՆՁՎՈՐՆԵՐԸ	103
Դաս 13.	22.03-28.03	ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ	112

ԵՐԵՎԱՆ
2014

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԸ

Սկզբում Աստված արարեց աշխարհը՝ կատարյալ և առանց մեղքի: Մարդիկ ցնծում էին իրենց Արարչին պատվելու, երկրպագելու և Նրան հետևելու առավելության համար: Այդպիսին պետք է մնար կյանքը ողջ հավիտենության ընթացքում:

Սակայն սատանան գայթակղեց մեր նախածնողներին՝ մարդկությանը զրկելով կեցության իմաստից, նպատակից և նշանակությունից: Ապստամբությունը աճեց և բազմապատկվեց՝ ընդգրկելով ողջ մոլորակը:

Քրիստոսի զոհաբերությունը միակ հույսը պարգևեց մեզ: Գողգոթայի փրկագնումը մեզ առաջարկում է ազատություն և միակ ելքը՝ ազատագրվելու անիմաստ և աննպատակ վիճակից: Մեղավոր մարդկանց ազատություն առաջարկվեց, ներում և նախնական վիճակին վերադառնալու հնարավորություն:

Աստված կոչ է անում բոլոր հավատացյալներին՝ դառնալու այդ անզուգական շնորհի լրաբերները, բանբերներ, որ հռչակում են աստվածային փրկագնումը սատանայից հարստահարված մարդկանց: Մենք պետք է կոչ անենք մարդկանց՝ Արարչին հետևելու, Նրան երկրպագելու և փառաբանելու: Քրիստոսի օրինակը մեզ համար պետք է դառնա աշակերտության նմուշը, օգնություն՝ իրականացնելու մեծ հանձնարարությունը: Մատթեոս 28.19,20:

Այդ պատճառով էլ այս եռամսյակի նյութը վերնագրվել է «Աշակերտություն»: Չնայած այս նյութը բազմաճյուղ է, տվյալ ձեռնարկում մենք կդիտարկենք աշակերտությունը որպես գործընթաց, որի միջոցով մենք դառնում ենք Հիսուսի հետևորդներ և հետևաբար՝ հոգիների լավագույն որսորդներ:

Ի վերջո, Հիսուսը օրինակ է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, հատկապես հոգիների փրկության գործում: Արդյո՞ք խելամիտ կլինի արդյունավետ ավետարանչության բանալիները որոնել հանրամատչելի հոգեբանության, զանգվածային մարկետինգի տեխնիկայի մեջ կամ լավ մտածված գովազդային ծրագրերում: Արդյո՞ք ավելի խելամիտ չի լինի՝ պարզապես հետևել Քրիստոսի օրինակին:

Ինչպե՞ս էր Հիսուսը գրավում Իր հետևորդներին: Ի՞նչ կարող ենք մենք սովորել Նրա օրինակով, ի՞նչը կարող է օգնել մեզ՝ առավել մեծ

հաջողությամբ դեպի Քրիստոսը տանելու շրջապատի մարդկանց: Ինչպե՞ս կարող ենք իրականացնել մեծ հանձնարարությունը:

Ինչպե՞ս էր կարողանում աշխատել Հիսուսը մարդկային այդքան տարբեր խմբերի հետ: Աղքատների ու հարուստների, կրոնական և ոչ կրոնական անձնավորությունների, իշխանություն ունեցողների և չունեցողների հետ: Ինչպե՞ս էր Հիսուսը բացում կարծրացած սրտերը, հույս տալիս մերժվածներին, քնքշորեն հպվում մանկական սրտերին, անտեսում էթնիկական և սոցիալական խոչընդոտները, որպեսզի աշակերտներ դարձնի մարդկանց: Ինչպե՞ս էր Նա հաղթահարում հարստության և հզորության ամրոցները, բացում կրոնական առաջնորդների ամբարտավանության բոժոժները և հույս վերածնում անբուժելի հիվանդությունների դեմ պայքարողների սրտում:

Սրանք պարզապես քննարկման հարցեր չեն, որոնք կարծիքների փոխանակում են խթանում. ավելի շուտ սա կարևոր նյութ է քրիստոնյաների համար, ովքեր կրքոտ ցանկություն ունեն Քրիստոսի օրինակին հետևելու, կորուսյալ գառներին դեպի սիրող Հովիվն առաջնորդելու:

Պողոսը նույնպես կոչ էր անում քրիստոնյաներին՝ հետևելու իր օրինակին, ինչպես ինքն էլ հետևում էր Քրիստոսի օրինակին: Անհնար է մտածել, որ 21-րդ դարի հավատացյալները ավելի ցածր չափանիշներ ընդունեն, քան այն, որ սահմանել է Սուրբ Հոգին Պողոսի միջոցով, առաջին դարում:

Եվ վերջում ցանկանում ենք նշել, որ Հիսուսին հետևելը չափազանց ընդարձակում է այն սահմանափակ պատկերացումները, որը նույնացնում է աշակերտությունը՝ սխալ վարքագիծը և սխալ սովորությունները ուղղելու մեթոդների հետ, ինչքան էլ որ կարևոր լինեն այդ ուղղումները: Աշակերտություն երևույթի համակողմանի ըմբռնումը չի կարող լիակատար լինել, եթե իր մեջ չի ներառում Հիսուսին հետևելու կրքոտ ցանկությունը և որպես գերբնական արդյունք՝ մյուսներին էլ Քրիսոսին տանելու կրքոտ փափագը:

Կամ, ինչպես մեզ տպավորիչ ասվել է. «Հենց որ մարդը գալիս է Քրիստոսի մոտ, նրա սրտում անմիջապես ցանկություն է հայտնվում՝ բոլորին պատմելու, թե ինչ թանկագին ընկեր է գտել ինքը՝ ի դեմս Հիսուսի: Փրկարար և սրբագործող ճշմարտությունը չպետք է թաքնված մնա հոգում: Եվ եթե մենք արդեն հագել ենք Քրիստոսի արդարությունը և ուրախությամբ ենք լցված մեր մեջ բնակվող Նրա հոգով, մենք չենք կարող լռել: Եթե ճաշակել ենք և տեսել, թե ինչքան բարի է Տերը, ապա ուրիշներին էլ պատմելու բան կունենանք… Մեր մեջ ջերմ ցանկություն

կառաջանա գնալ այն ճանապարհով, որով գնաց Հիսուսը» (Է.Ուայթ «Քայլեր դեպի Քրիստոս», էջ 78, 79):

Ահա թե ինչի մասին է այս եռամսյակի նյութը:

Դեն Սոլիսը ծնվել է Ամերիկայի Տեխաս նահանգում: Նա Անդրյուսի համալսարանի և Վերակազմավորված ասպվածաբանական ճեմարանի շրջանավարտ է: Ծառայում է եկեղեցում՝ որպես հովիվ, կոնֆերանսի բաժնի ղեկավար է և քոլեջի դասախոս: Կնոջ՝ Սինդիի հետ միասին, ով տարրական դասարանների ուսուցիչ է, դաստիարակել են երեք երեխա, ովքեր այժմ Տիրոջն են ծառայում Վաշինգտոնում, Կալիֆորնիայում և Թենեսիում:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ղուկաս 4.1-12, Մատթեոս 12.3 – 8, Մատթեոս 5.17 – 39, Ղուկաս 24. 13 – 32, Գործք 1.16 – 20:

Հիշելու համարը.

«Քննեցեք գրքերը որ դուք կարծում եք թե նրանցով ունեք հավիտենական կյանք, և նրանք են որ ինձ համար վկայում են» (Հովհաննես 5.39):

Օգտագործելով «հնոտիների» շուկայում գնած մետաղների ստուգման չափիչ սարքը՝ անգլիացի Թերի Հերբերտը հայտնաբերեց ոսկեջրած անգլոսաքսոնական զենք և արծաթյա հազվագյուտ իր: Դրանք թաղված էին ֆերմերների դաշտում, հողի շերտի տակ: Գտածոյի ենթադրյալ արժեքը գերազանցում էր ամերիկյան 5 միլիոն դոլարը:

Կեղտոտ, քարերով և աղբով լի դաշտում գանձ որոնողների նման մենք պետք է զգուշավորություն դրսևորենք, որպեսզի չկորցնենք երկնքից տրված իսկական գանձը՝ Հիսուս Քրիստոսին: Հավերժական հարստության իրենց որոնումների մեջ փարիսեցիները և սադուկեցիները նույնպես «փորփրում» էին հինավուրց Սուրբ Գրքերը: Ճակատագրի հեգնանքով գանձերի նրանց քարտեզը՝ Սուրբ Գիրքը, իրենց կողմից բացարձակապես սխալ էր կարդացվում, այնպես որ նրանք բոլորովին տեսադաշտից բաց էին թողել նրա էությունը՝ Հիսուսին:

Ուղղակի և անուղղակի ձևով Հիսուսն Իր աշակերտների դաստիարակության մեթոդաբանության մեջ էր ներդնում Սուրբ Գիրքը: Գանձերի «գլխավոր ստուգիչը» գտնվում էր մարգարեությունների մեջ, որ ցույց էին տալիս Իրեն: Ահա թե ինչու կորցնել Հիսուսին, նույնն է, թե տեսադաշտից բաց թողնել քարտեզի կողմնորոշիչ նշանը: Դրա համար էլ աշակերտների դաստիարակությանն ուղղված մեր բոլոր ջանքերը պետք է լիովին կենտրոնացած լինեն Հիսուսի և այն բանի վրա, ինչ Նա արել է մեզ համար:

ՄԻԱՇԱԲԹԻ, Դեկտեմբերի 29

Հիսուսը և Աստվածաշունչը

Քանի որ Հիսուսը բոլոր հավատացյալների օրինակն է, Սուրբ Գրքի վրա Նրա կենտրոնացվածության չափը առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում մեզ համար:

Կարդացե՛ք Ղուկաս 4.1-12 և 16-21 համարները: Ինչպե՞ս են այս համարները բացահայտում Հիսուսի վերաբերմունքը Աստվածաշնչի հանդեպ: _____

_____

_____

Պատմություններն այն փորձությունների մասին, որ ապրեց Քրիստոսը անապատում, ցույց են տալիս, որ, մեջբերում անելով Սուրբ Գրքից, Հիսուսը հետ էր մղում սատանայի բոլոր հարձակումները և փորձությունները: Ամենայն հավանականությամբ, 40 օր անապատում գտնվելու ժամանակ Սուրբ Գրքի մագաղաթները Հիսուսի մոտ չէին: Սա հստակ կերպով վկայում է, որ Քրիստոսը ժամանակ էր հատկացնում Աստվածաշնչից մեծ հատվածներ անգիր սովորելուն: Եթե անապատում Հիսուսը մեջբերում էր Մովսեսի գրած հատվածները, ապա այլ տեղերում Նա մեջբերում է հինկտակարանյան այլ հատվածներ: Մատթեոս 21.42, 22.43,44: Անկասկած է՝ Հիսուսը հիանալի գիտեր Հին Կտակարանը:

Սակայն պետք է նկատել նաև, որ ըստ Քրիստոսի խոսքերի՝ Սուրբ Գիրքը պարզապես փորձությունների դեմ պայքարի և անձնական սրբության հասնելու միջոց չէ: Քրիստոսը պնդում է, որ Սուրբ Գիրքը ցույց է տալիս Իրեն: Ժողովարան այցելելու ժամանակ, ինչի մասին կարելի է կարդալ Ղուկաս 4.16-30 համարներում, Հիսուսը մեջբերում է անում Եսայիայից և ապա հայտարարում, որ այդ տեքստը ցույց է տալիս Իրեն՝ որպես Օծյալի, որ պետք է ազատագրի հալածյալներին և ազատագրում հռչակի: Հիսուսը հասկանում էր, որ Ինքն իրականացնում է Օծյալի մասին մարգարեությունը, այդ պատճառով էլ ոչ միայն գիտակցում էր, որ Աստվածաշունչը մատնանշում է Իրեն, այլև անմիջապես սկսեց օգտագործել այն Իր ծառայության մեջ, որպեսզի շրջապատողներին էլ ցույց տա Իրեն:

Թեպետ Աստվածաշունչն իմանալը կարևոր է, այնուամենայնիվ, դա դեռ բավական չէ: Աստվածաշնչի որոշ հայտնի ուսումնասիրողներ և գիտակներ նույնիսկ հավատացյալներ չեն եղել: Այդ պատճա-

ռով էլ մենք պետք է հարցնենք մեզ՝ ինչպե՞ս հավաստիանալ, որ Աստվածաշնչի մեր ընթերցանությունը և ուսումնասիրությունը օգնում է մեզ՝ ավելի լավ ճանաչելու Հիսուսին և այն, ինչ Նա արել է մեզ համար: Այլ կերպ ասած՝ ինչպե՞ս անենք, որ Աստվածաշնչի ուսումնասիրությունը դառնա այն միջոցը, ինչը փոխում է մեր կյանքը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, դեկտեմբերի 30

Սուրբ Գրքի հեղինակությունը

Կարդացե՛ք հետևյալ համարները: Ի՞նչ են ասում մեզ նրանք այն մասին, թե ինչպես էր Հիսուսն ընկալում Աստվածաշունչը: Մատթեոս 5.17-20, 12.3-8, 15.3-11, Հովհաննես 10.34-37, 17.14-19, Ղուկաս 24,44: _____

_____

_____

_____

Երբ էլ Հիսուսը բանավիճում էր կրոնական առաջնորդների հետ, Նա ապավինում էր ո՛չ վերացական փիլիսոփայությանը, ո՛չ էլ նույնիսկ իր անձնական հեղինակությանը, այլ միայն Սուրբ Գրքին: Առանձնացնելով ճիշտը սխալից՝ Հիսուսն Իր փաստարկումները կառուցում էր Աստվածաշնչի հիմքի վրա: Երբ ընդդիմադիրները կասկածի տակ էին դնում Քրիստոսի վարդապետական դիրքը, Նա նրանց ուշադրությունն ուղղում էր Սուրբ Գրքի կոնկրետ հատվածների վրա: Դատողություններ անելով գործնական հարցերի շուրջը՝ Նա ունկնդիրների ուշադրությունը սևեռում էր դեպի աստվածային հայտնությունը: Քրիստոսը հասկանում էր, որ Իր սրբազան առաքելությունը այն բանի իրականացման մեջ է, ինչ իմասին խոսել էին հին մարգարեները:

Համեմատե՛ք Սուրբ Գրքի վերաբերյալ Հիսուսի գերազանց պատկերացումները այն գերիշխող դիրքորոշման հետ, որ կա այսօր այդ հարցի շուրջ՝ նույնիսկ այն մարդկանց մոտ, ովքեր բացահայտորեն հայտարարում են, թե քրիստոնյաներ են: Ամբողջ հարանվանություններ գերադասում են Աստվածաշունչը համարել հետաքրքիր գիրք, որն իր հիմքում, սակայն, անհուսալի պատմական աղբյուր է: Ամեն ինչ՝ վեցօրյա արարումը, ելքը Եգիպտոսից, անգամ Հիսուսի մարմնավոր հարությունը, առավել ևս՝ տառացի երկրորդ գալուստը, հարցականի տակ է դրվում, կամ նույնիսկ ցածրացվում է առասպելի աստիճանի:

Հասկանալի է, որ այս ամենը անուղղակի կերպով ազդում է աշակերտության վրա: Ինչո՞ւ պետք է մարդը զոհի իր կյանքը՝ հանուն առասպելի վրա հիմնված գաղափարների: Իրական հիմնախնդիրներով ծանրաբեռնված մարդկանց հարկավոր է իրական Փրկիչ, այլապես Ավետարանը դառնում է աղոտ գանձ կամ, պատկերավոր ասած, դեղին ներկով ծածկված պլաստիկե մետաղադրամ: Տարածության վրա ինչ-որ մեկը կարող է խաբվել, սակայն մոտիկից նայելու դեպքում պլաստիկե դրամը չի կարող ոսկու տեղ անցնել: Եվ միակ անվտանգ ուղին Քրիստոսի օրինակին հետևելն է՝ վեհացնելով, պատվելով Աստվածաշունչը և հնազանդվելով Նրան:

Մահը առասպել չէ. արդյոք այդպես չէ՞: Այն չես կարող նաև պարզապես խորհրդանիշ անվանել: Դա ամենադաժան իրականություններից մեկն է, որի հետ բախվում ենք մենք բոլորս: Մտածեք աստվածաշնչական տարբեր ուսմունքների շուրջ ունեցած մարդկանց հայացքների մասին, ինչպիսիք են, օրինակ, Հիսուսի հարությունը կամ Նրա երկրորդ գալուստը, երբ այդ ճշմարտությունները դիտարկվում են որպես հասարակ խորհրդանիշներ կամ առասպելներ: Ինչո՞ւ մենք՝ յուրաքանչյուրս առանձին և որպես եկեղեցի, երբեք չպետք է թույլ տանք մեզ՝ ընկնելու այդ սատանայական ծուղակի մեջ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, դեկտեմբերի 31

Հասարակական հոչակում

Հիսուսը դեպի Իրեն էր գրավում մարդկանց տարբեր իրավիճակներում և հանգամանքներում: Սուրբ Գիրքը առանձնահատուկ տեղ է հատկացնում Հիսուսի հասարակական քարոզներին: Նրա քարոզները և հասարակական զրույցները լի էին Սուրբ Գրքի ուղղակի մեջբերումներով և վկայակոչումներով:

Կարդացե՛ք Մատթեոս 5.17-39-ը: Ինչպե՞ս էր Քրիստոսն օգտագործում Սուրբ Գիրքը հասարակական ծառայության մեջ: _____

_____

_____

Քրիստոսի՝ երկրումապրած ժամանակ սովորական իսրայելացու փոխհարաբերությունները Սուրբ Գրքի հետ բացահայտորեն իրավական բնույթ էին կրում: Մարդիկ դիմում էին Սուրբ Գրքին՝ իբրև բարոյական ուղեցույց՝ ստանալու անհրաժեշտ հրահանգները: Ճիշտ վարքագիծը հավիտենական երանության վարձք էր համարվում: Սա-

կայն Հիսուսը մերժեց այդ օրինապահական հայացքները և արտաքին վարքագիծը վերահսկելու համակարգը՝ փոխարինելով դրանք անկեղծ կրոնով:

Քրիստոսակենտրոն կրոնը հիմնվում է սիրտը փոխելու վրա, ինչն իր հերթին տանում է բարոյական վարքագծի: Ճակատագրի հեգնանքով որոշ փարիսեցիներ, շտապելով հասնել բարոյական կատարելության, Աստծո հետ կենդանի փոխհարաբերությունների կողքով էին անցնում: Հիսուսը մատնացույց արեց այդ բացթողումը, և որպես ապաքինում՝ հրավիրեց Իր ունկնդիրներին՝ ընդունելու Իրեն իբրև Փրկիչ և Ուսուցիչ: Հիսուսի հետ՝ որպես ներքին վերահսկող Ուժի, վարքագծի չափանիշները չեն ցածրանում, այլ բարձրացվում են: Այն ամենը, ինչ անհրաժեշտ է անել, լոկ Լեռան քարոզը կարդալն է՝ տեսնելու համար, թե ինչքան բարձր էին Նրա բարոյական չափանիշները:

«Զարմացած ամբոխը այդ խոսքերն ընկալում է որպես բացարձակապես նոր մի բան և բավականին էլ տարօրինակ: Այդօրինակ ուսմունքը հակասում էր այն ամենին, ինչ հրեաները երբևէ լսել էին քահանաներից կամ ուսուցիչներից: Այնտեղ նրանք չէին տեսնում այնպիսի մի բան, որը կշոյեր իրենց հպարտությունը կամ սնունդ կտար իրենց պատվախնդրական հույսերին: Սակայն այդ Ուսուցիչն ինչ-որ զորություն ուներ և Նրան լսում էին շունչները պահած: Աստվածային սիրո անուշահոտությունը՝ որպես հոտավետ ծաղկի բույր, տարածվում է Նրա անձի շուրջը… Քարոզի համար հավաքվածները բնազդաբար զգում են, որ Նա կարդում է յուրաքանչյուր հոգու գաղտնիքներըև դրա հետ միասին նուրբ կարեկցանքով է մոտենում մարդկանց» (Է. Ուայթ, «Հիսուսի Լեռան քարոզը», էջ 6):

Օրինապահության, դատապարտության և քննադատության հանդեպ հակում դրսևորելը բավականին հեշտ է, այդպես չէ՞: Ինչպե՞ս պաշտպանենք մեզ, որպեսզի չընկնենք այդ համընդհանուր վիճակի մեջ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հունվարի 1

Անձնական ծառայություն

Մենք Քրիստոսի հասարակական ծառայության բազմաթիվ օրինակներ ունենք: Սակայն ոչ պակաս հմայիչ հառնում են մեր առջև Նրա անձնական հանդիպումները ինչպես հասարակ մարդկանց, այնպես էլ հասարակության բարձրաստիճան անդամների հետ: Այս պատ-

մությունները եզակի հնարավորություն են տալիս մեզ հասկանալու, թե որքան կենտրոնացած էր Քրիստոսը Սուրբ Գրքի վրա:

Կարդացե՛ք Հովհաննես 13.18-20, Ղուկաս 10.25-28, և 24.13-32: Այս հատվածների համաձայն՝ ի՞նչ դեր է հատկացվում Սուրբ Գրքին: Ի՞նչ նպատակով Հիսուսը մեջբերեց հենց այս համարները: Ինչի՞ հանգեցրին Սուրբ Գրքի հետ այս հանդիպումները:_____

_____

_____

Քրիստոսը բազմիցս մեջբերում է Սուրբ Գիրքը՝ կապելով այն աշակերտության կոչերի հետ: Դա ոչ երկիմաստորեն ցույց է տալիս, որ Քրիստոսի իշխանությունը և համոզելու ուժը հիմնվում է Սուրբ Գրքի, այլ ոչ պարզապես անձնական հմայքի վրա: Դա հատկապես երևում է այն բանից, թե ինչպես էր Նա օգտագործում Սուրբ Գիրքը՝ զրուցելով երկու ենթադրյալ աշակերտների հետ, ովքեր քայլում էին Էմմաուս տանող ճանապարհով:

«Սկսելով Մովսեսից՝ աստվածաշնչական պատմության ակունքներից, Հիսուսը պարզաբանեց Սուրբ Գրքում այն ամենը, ինչ վերաբերում էր Իրեն: Եթե Նա անմիջապես բացահայտվեր աշակերտներին, ապա նրանք միանգամայն երջանիկ կլինեին: Սակայն նրանց պետք էր, որ հասկանային, թե ինչի մասին են վկայում Հին Կտակարանի բոլոր նախակերպարները և մարգարեությունները: Դրա վրա պետք է հիմնվեր նրանց հավատը: Նրանց համոզելու համար Քրիստոսը մեկ հրաշք անգամ չգործեց, սակայն նրա առաջին գործը եղավ նրանց Սուրբ Գիրքը պարզաբանելը: Նրա մահը աշակերտների համար նրանց ողջ հույսերի փլուզումը եղավ: Իսկ այժմ, հենվելով մարգարեների գրքերի վրա, Նա ցույց տվեց, որ Իր Մահը նրանց հավատի ամենահաստատուն հիմքն է:

Հորդորելով այդ աշակերտներին՝ Հիսուսը հիշեցրեց նրանց Հին Կտակարանի կարևորության մասին, որ պատմում է Իր առաքելության մասին» (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 796-799):

Մտորեք Ղուկաս 24.32–ի շուրջը՝ կանգ առնելով հատկապես հետևյալ արտահայտության վրա. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում»: Ի՞նչ է նշանակում սա: Ե՞րբ է վերջին անգամ ձեր սիրտը բորբոքվել ձեր ստացած ճշմարտությունից: Եթե արդեն երկար ժամանակ դա տեղի չի ունենում, հնարավո՞ր է, որ ձեր սիրտը սառել է: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս կարող եք փոխել իրավիճակը:

Հաջորդ սերունդը

Մենք համոզվեցինք, որ Հիսուսն առանձնահատուկ կերպով շեշտադրում է Աստվածաշունչը: Նա ոչ մի անգամ կասկածի տակ չդրեց Սուրբ Գրքի հեղինակությունը, ճշմարտացիությունը կամ հավաստիությունը: Եվ այնուամենայնիվ, դարերի ընթացքում, ընդհուպ մինչև մեր օրերը, շատ մարդիկ անում են դա:

Կարդացե՛ք Մատթեոս 12.15-21, Մարկոս 1.1-3, Գործք 1.16-20, 3.22-24 և Հռոմեացիս 10.10-11-ը: Ի՞նչ են ասում մեզ այս համարներն այն մասին, թե ինչպես էին ընդունում Սուրբ Գիրքը առաջին քրիստոնյաները: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել մեզ համար՝ հետևելով նրանց օրինակին: Ինչպե՞ս ենք վերաբերվում մենք Աստվածաշնչին: _____

_____

_____

_____

_____

Առաջին քրիստոնյաները հենց Սուրբ Գրքով էին հաստատում, որ Հիսուս Նազովրեցին է Մեսիան: Փաստորեն նրանք ասում էին, որ քրիստոնեությունն անխզելիորեն կապված է հինկտակարանային գրքերի միջոցով աստվածային ինքնահայտնության հետ:

Հիսուսն Ինքը դիմում էր այդ Սուրբ Գրքերին: Այժմ Քրիստոսի աշակերտներն էին անում այդ նույնը: Անձնական փորձառություններին, հրաշքներին և Քրիստոսի մասին այլ վկայություններին դիմելը կարևոր էին և իրենց տեղն էին զբաղեցնում, սակայն ոչինչ չէր փոխարինում Սուրբ Գրքին՝ որպես Հիսուսի մասին վկայության հիմնական աղբյուրի:

Քրիստոսի առաջին հետևորդները Սուրբ Գրքում կողմնորոշիչներ էին որոնում եկեղեցու առաքելության, նրա ամենօրյա ծառայության և հոգևոր կարգապահության վերաբերյալ: Մարդկային ենթադրությունները և գուշակությունները հասցվել էին նվազագույնի, և առաջին տեղը հատկացվում էր Սուրբ Գրքին: Աստվածային հայտնության որոնումներում աղոթքի մտորումներն, անկասկած, տեղ ունեին եկեղեցական խորհուրդների ժամանակ: Տե՛ս Գործք 15: Սուրբ Գիրքը շոշափում էր վաղ եկեղեցու կյանքի բոլոր կողմերը:

Եվ ինչքան անխելամիտ կլինի մեր կողմից, հատկապես այս վեր-

ջին ժամանակներում, որևէ այլ դիրք զբաղեցնել Աստվածաշնչի հանդեպ:

Ինչպե՞ս կարող ենք մենք բոլորս սովորել գլխավոր տեղը հատկացնել Աստվածաշնչին մեր հավատի մեջև օգտագործել այն՝ որպես դեպի Հիսուսը տանող ուղեցույց: Գործնականում ինչպե՞ս կարող ենք թույլ տալ, որ աստվածաշնչյան ուսմունքն իսկապես ազդի մեր կյանքի և այլ մարդկանց հանդեպ մեր վերաբերմունքի վրա:

ՈՒՐԲԱԹ, հունվարի 3

Հեպագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դաստիարակություն» գրքից կարդացեք «Աստվածաշունչը՝ որպես դաստիարակ» գլուխը, էջ 190-192: Է.Ուայթի «Դարերի փափագը» գրքից՝ «Էմմաուսի ճանապարհին» գլուխը, էջ 795-801, Է. Ուայթի «Առաքյալների գործերը» գրքից՝ «Թեսաղոնիկե» գլուխը, էջ 221-230:

«Իր ծառայության ժամանակ Քրիստոսը բացեց աշակերտների մտքերը, որպեսզի նրանք հասկանան այդ մարգարեությունները… Պետրոսը, քարոզելով Քրիստոսի մասին, ապացույցներ էր բերում Հին Կտակարանից: Այդ նույն ձևով էր վարվում նաև Ստեփանոսը: Պողոսը նույնպես իր ծառայության ժամանակ դիմում էր Սուրբ Գրքերի տեքստերին, որոնք պատմում են Քրիստոսի ծննդի, տառապանքների, մահվան, հարության և համբարձման մասին: Մովսեսի և մարգարեների ներշնչված վկայությունների օգնությամբ նա անհերքելիորեն ապացուցում էր, որ Հիսուս Նազովրեցին է Մեսիան, և որ Ադամի օրերից ի վեր Քրիստոսի ձայնը խոսում է նահապետների և մարգարեների միջոցով» (Է. Ուայթ, «Առաքյալների գործերը», էջ 221,222):

Հարցեր քննարկման համար

1. Գործնականում ինչպե՞ս կարող եք Սուրբ Գիրքը դարձնել ձեր ամենօրյա կյանքի մի անբաժանելի մասը: Ինչպե՞ս կարող եք օգտագործել Աստվածաշունչը անձնական ավետարանչության մեջ:
2. Ինչո՞ւ էր Հիսուսն ուշադրությունը սևեռում ավելի շատ Սուրբ Գրքի մեկնաբանման, քան հրաշքների և անձնական հմայքի վրա: Ի՞նչ է տեղի ունենում, երբ կյանքի կամ ծառայության առանձին տեսան-

կյուններ, ինչպիսիք են, օրինակ, երաժշտությունը, առողջապահական լուրը, սոցիալական պարտականությունները կամ որևէ այլ բան, առաջին պլան են մղվում և իրենցով փոխարինում Աստվածաշնչին՝ մեր հավատի հիմքին:

3. Այսօր ինչքանո՞վ պետք է քրիստոնյաները կախվածության մեջ լինեն Սուրբ Գրքից: Գնահատեք, թե որքանով է կարևոր Սուրբ Գիրքը ձեր եկեղեցու կյանքում՝ որոշելու համար առաքելության նախապատվությունները, միջոցների տեղաբաշխումը և հավատարմությունը:
4. Խորհեք այն փաստի շուրջ, որ Աստվածաշնչում չի հիշատակվում այն մասին, թե նրա հեղինակներից որևէ մեկը երբևէ կասկածի տակ է առել աստվածաշնչական այլ տեքստերի ճշմարտացիությունը կամ հավաստիությունը: Ինչո՞ւ այսօր դա պետք է այնքան կարևոր լինի մեզ համար, երբ բազմաթիվ մարդիկ, այդ թվում նաև Աստվածաշնչի շատ հետազոտողներ, դատելով ամեն ինչից, իրենց գերագույն նախապատվությունն են դարձրել վիճարկել Աստվածաշնչի ճշմարտացիությունը յուրաքանչյուր մակարդակում:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Բ Թագավորաց 12.1-7, Եսայիա 28.24-28, Մատթեոս 7.24-27, 13.1-30, Ղուկաս 20.9-19:

Հիշելու համարը.

«Այս բոլորը Հիսուսն առակներով խոսեց ժողովուրդների հետ, և առանց առակի չէր խոսում նրանց հետ, որ մարգարեի ձեռով ասվածը կատարվի՝ որ ասում է. առակներով կբանամ իմ բերանը, և դուրս կբխեմ աշխարհի սկզբից ծածկվածները» (Մատթեոս 13.34-35):

Քրիստոնեությունը խելամիտ է և տրամաբանական: Միտքը հարկավոր է զարգացնել: Սակայն միայն բանականությունը չի կարող լիակատար չափով ամբողջություն հաղորդել մարդուն: Ի տարբերություն ռոբոտների, որոնք ծրագրավորված են կոնկրետ տրամաբանական գործընթացների համար, մարդիկ ընդունակ են սիրելու, զգալու, վիրավորվելու, լալու, խնամք տանելու, ծիծաղելու և ներկայացնելու: Այդ պատճառով էլ Հիսուսն այնպես էր մատուցում հավիտենական ճշմարտությունները, որ նրանք դիպչեն ոչ միայն բանականությանը: Հիսուսը խոսում էր ամենօրյա կյանքից վերցված տեսանելի օրինակներով, որպեսզի հասնի, նվաճի մարդկանց այնտեղ, ուր նրանք գտնվում էին: Երեխաները և մեծահասակները կարողանում էին հասկանալ առակների միջոցով փոխանցված խորը ճշմարտությունները, որոնք շղարշված էին պատկերներով և փոխաբերություններով:

Դրանից բացի, բարդ տեսությունները, ինչպիսիք են, օրինակ, արդարացումը, արդարությունը և սրբագործումը, հեշտությամբ յուրացվում էին Քրիստոսի՝ դրանք Պատմողի արվեստի շնորհիվ: Այլ կերպ ասած, այն տեսությունները, որոնք հաճախ դժվար է հասկանալ, երբ մատուցվում են սովորական լեզվով, կարելի է յուրացնել խորհրդանիշների և փոխաբերությունների միջոցով:

Հին կտակարանի օրինակներ

Կարդացե՛ք Բ Թագավորաց 12.1-7, Եսայիա 28.24-28, Երեմիա 13.12-14 և Եզեկիել 15.1-8-ը: Այդ առակները և այլաբանություններն ինչպե՞ս են ընդարձակում մեր պատկերացումները մարդկության հետ ունեցած Աստծո փոխհարաբերությունների մասին: Այդ մարգարեների օգտագործած ո՞ր առակները կամ շրջապատող ո՞ր միջավայրն է, որ ավելի ուշ հանդիպում է Քրիստոսի առակներում: _____

_____

_____

_____

_____

Նաթանը առակ է պատմում՝ թաքցնելու համար իր այցելության իսկական պատճառը: Չիմանալով այդ մասին՝ Դավիթը հանցագործ է հայտարարում իրեն և իր համար դատավճիռ կայացնում: Դիմելով գրական հնարքի՝ առակի, Նաթանը հասնում է իր նպատակին: Իսկ եթե նա այլ կերպ մատուցեր այդ ճշմարտությունը, ապա դա կարող էր լուրջ հակամարտություն առաջացնել և, հնարավոր է, նույնիսկ մարգարեի մահվան պատճառ դառնար:

Եսայիայի բանաստեղծական պատմությունը հնչում է գյուղատնտեսության համատեքստում, որը լավ ծանոթ էր նրա ունկնդիրներին: Հարյուրամյակներ անց Հիսուսը դիմեց այդ նույն պատկերներին: Եսայիայի առակը ուսուցանում է Աստծո անսահման ողորմածությունը պատժի ժամանակ: Եբրայեցիս 12 գլուխը նույնպես Աստծո պատիժը հասկանում է ավելի շուտ որպես ուղղվելու միջոց, քան վրեժխնդրության գործիք: Աստվածային պատիժը արտացոլում է փրկագնական նպատակները: Այն պետք է առաջ բերի ապաշխարություն, վերածնունդ և վերափոխում: Եվ այնուամենայնիվ, մեծ համառության և խռովության դեպքում մեծ էլ պատիժ է սպասվում:

Երեմիայի առակը դատաստանի սարսափեցնող պատկեր է: Եվ երբ էլ մարդիկ խոչընդոտեն Աստծո փրկագնող նպատակներին, վերջին հաշվով Նա կատարված ընտրության հետևանքներին է ենթարկելու նրանց: Քրիստոսը նույնպես դատաստանի մասին առակներ պատմեց Իր ունկնդիրներին: Եզեկիելը, հայտնելով այդ նույն լուրը, դիմեց այլ խորհրդանիշի:

Ինչո՞ւ պատկերները և պատմությունները կարող են ճշմարտությունը փոխանցելու հզոր գործիք լինել: Հատկապես ինչպիսի՞ պատմություններ են դուր գալիս ձեզ և ինչո՞ւ: Շաբաթօրյա դասի ժամանակ կիսվեք ձեր պատասխանով:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հունվարի 6

Ճարտարապետական իմաստություն

Կարդացե՛ք Մատթեոս 7.24-27-ը: Այս համարներն ինչպե՞ս են ընդարձակում մեր պատկերացումները քրիստոնեական աշակերտության մասին: Ինչպե՞ս եք կարծում, ինչո՞ւ Քրիստոսն օգտագործեց բնությունից վերցված այս օրինակը՝ այնքան կարևոր ճշմարտություն հայտնելու համար: _____

_____

_____

Ժամանակակից կրթված հասարակությունը գրագիտությունն ընդունում է որպես ինքնին ենթադրվող մի բան: Սակայն նույնիսկ այսօր գոյություն ունեն հասարակություններ, որտեղ մարդիկ առանց կրթության են մնում: Հնում գրագիտությունն ավելի շուտ բացառություն էր, քան կանոն: Տիրող դասակարգերի ներկայացուցիչները՝ գրագետ մասնագետները կամ դպիրները, իշխանության էին հասնում կարդալու հմտության շնորհիվ: Այդ պատճառով էլ Հիսուսն այնպես մատուցեց Իր լուրը, որ Իրեն կարողանան հասկանալ հասարակ, անգրագետ մարդիկ: Անկասկած է, որ գրագետ ունկնդիրները նույնպես կարող էին հասկանալ այն:

Մինչև Յոհան Գուտենբերգի կողմից տպագրական մեքենայի հայտնաբերեումը՝ նյութերը ձեռագիր էին գրում. դա շատ երկար և աշխատատար գործընթաց էր: Համեմատաբար քչերը կարող էին իրենց թույլ տալ այնպիսի ճոխություն, ինչպիսին գիրքն էր: Այդ պատճառով էլ տեղեկատվության փոխանցումը առասպելների, առակների և այլ բաների միջոցով դարձել էր շփման չափանիշային եղանակը:

Աստված ողջ մարդկային ցեղին է առաջարկում փրկությունը: Պե՞տք է արդյոք մեզ զարմացնի, որ Քրիստոսն օգտագործեց հաղորդակցության այդ ձևերը, որպեսզի հասնի հնարավորինս մեծ թվով մարդկանց: Բանավոր ավանդույթը, որ սերնդեսերունդ փոխանցվում էր պարզ պատմությունների միջոցով, դարձավ փրկագնման գաղափարի փոխանցման աղբյուրը:

Կարդացե՛ք Ղուկաս 14.27-33-ը: Ի՞նչ դասեր կարող ենք քաղել այս պատմություններից: Այստեղ բերված փոխաբերություններն ինչպե՞ս են լույս սփռում աշակերտության՝ մեր ունեցած պատկերացումների վրա: _____

_____

_____

Շինարարությունը ենթադրում է նախապատրաստություն: Ծախսերի գնահատականը կատարվում է շինարարությունն անմիջապես սկսելուց շատ վաղ: Աշակերտությունը նույնպես նախապատրաստություն է պահանջում: Մարդկանց հրաշալիորեն կերակրել-հագեցնելը, տպավորիչ բուժումները և տեսանելի հաջողությունը ապագա աշակերտներին հանգեցրին այն ենթադրությանը, որ Հիսուսին հետևելը շատ հեշտ է: Սակայն Հիսուսը դրդում էր Իր ունկնդիրներին՝ տեսնելու ամբողջական պատկերը: Իսկ այնտեղ զգալի տեղ էին գրավում նաև անձնազոհությունը, տառապանքները, նվաստացումը և մերժվելը: Մեկ անգամ ևս նկատենք, որ Հիսուսը գերադասում էր փոխանցել այդ լուրը՝ օգտագործելով փոխաբերության լեզուն, թեպետ կարող էր պարզապես թվարկել այն դժվարությունները, որոնք սպասում էին Իր աշակերտներին:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 7

Գյուղատնտեսական նույնացումներ

Կարդացե՛ք Մատթեոս 13.1-30-ը: Ի՞նչ ասաց Հիսուսը աշակերտության վերաբերյալ: Ի՞նչ դասեր կարող է քաղել այս փոխաբերություններից ժամանակակից քրիստոնեությունը: _____

_____

_____

Քրիստոսի առակը սերմնացանի մասին շատ ընթերցողների է ծանոթ: Պատմության համատեքստը լավ ծանոթ էր այդ հողագործ հասարակությանը: Հիսուսի ունկնդիրները կարող էին թեթևակի պատկերացնել նկարագրվող պատկերը: Ակնհայտ է աշակերտության հետ փոխադարձ կապը: Ըստ էության, Հիսուսը դրդում է Իր ունկնդիրներին՝ գնահատելու իրենց վիճակը՝ որպես աշակերտներ: Յուրաքանչյուրին առանձին իր հիմնախնդիրը ցույց տալու փոխարեն՝ Նա խոսում է առակներով՝ հրավիրելով աշակերտներին՝ ինքնուրույն գնահատելու իրենց: Նայելով Իր հոգու հայելու մեջ՝ յուրաքանչյուրը

կարող էր գնահատել իր շահադիտական հակումները, համառություն և անսասանություն դրսևորելու ընդունակությունը, նաև վերլուծել, թե որքանով է աշխարհն իր ունայնության մեջ խորասուզել իրեն: Կարող էր ընտրել առանց փոխզիջման աշակերտության կյանքը:

Միևնույն ժամանակ ճշմարիտ աշակերտությունը Ուսուցչի ձեռքն է հանձնում դատաստանը, այլ ոչ թե՝ աշակերտների: Մարդկային պատկերացումները լիակատար չեն, իսկ գիտելիքը մասնակի է: Միայն Աստված ունի կատարյալ իմացություն: Հիսուսը նաև նախազգուշացնում է, որ սատանայի հարձակումներն իսկապես անխուսափելի են: Աշակերտները չեն կարող ուրիշ հավատացյալների հանձնել դատաստանը կամ, այլ կերպ ասած, հետաքննական գործընթացը, որովհետև այդ հավատացյալ մարդիկ կարող են ոչ թե ցորեն լինել, այլ որոմ: Նրանք միասին են աճում՝ մինչև բերքահավաքի ժամանակը: Քրիստոսի առակներում մենք տեսնում ենք այն սկզբունքը, որն ընկած է այս աշխարհում Նրա ամբողջ առաքելության հիմքում: Որպեսզի մեզ համար բացահայտի Իր աստվածային բնավորությունը և էությունը, Քրիստոսը մարդ դարձավ և ապրեց մեր մեջ: Աստվածայինը դրսևորվեց մարդկայինի մեջ, անտեսանելի փառքը բացվեց մարդկային տեսանելի կերպարանքի մեջ» (Է. Ուայթ «Քրիստոսի առակները», էջ 17):

Սերմնացանի մասին առակում Հիսուսը խոսեց հարստության խաբուսիկության մասին: Ի՞նչ նկատի ուներ Նա: Ինչպե՞ս կարող է հարստությունը խաբել նույնիսկ նրան, ով այն չունի:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 8

Հեղափոխական պատերազմ

Քրիստոսի ծառայությունը հեղափոխական էր, սակայն նա սովորական զենք չօգտագործեց: Նրա զենքերը շատ ավելի հզոր էին, քան սրերը կամ դանակները: Կյանքը վերափոխողխոսքերը, որոնք հաճախտրվում էին առակներում և փոխաբերություններում, դարձել էին Նրա ոչ այնքան գաղտնի զենքը չարի դեմ պայքարում:

Քրիստոսիմարտավարությունանակնկալի էր բերում շատ կրոնական առաջնորդների: Նրանք թույլ էին պատրաստված, որպեսզի կարողանային հակազդել ժողովրդի հետ շփման Նրա զորությանը: Նրա շատ առակներ այնպիսի լուրեր էին պարունակում, որոնք առաջնորդների դեմ էին աշխատում: Կրոնական առաջնորդները ճիշտ

էին հասկանում, որ այնտեղ, ուր Քրիստոսի լուրը թափանցի մարդկանց սրտերը, իրենց ազդեցությունը զգալիորեն կթուլանա:

Կարդացե՛ք Մատթեոս 21.28-32-ը և Ղուկաս 14.16-24, 20.9-19-ը: Ի՞նչ հզոր լուրեր են փոխանցվել այդ առակներով: Հնայելով, որ հաճախ առակները վերաբերում էին կոնկրետ մարդկանց, ինչպիսի՞ սկզբունքներ կարող ենք կիրառել մենք մեր հանդեպ՝ անկախ նրանից, թե ով ենք: _____

_____

_____

«Այգու մասին առակը վերաբերում է ոչ միայն հրեա ժողովրդին: Այնտեղ մեզ համար էլ դաս կա: Մեր ժամանակներում Աստված հսկայական առավելություններով և օրհնություններով է օժտել Իր եկեղեցին և նրանից համապատասխան հատուցում է սպասում» (Է. Ուայթ«Քրիստոսի առակները», էջ 296):

Իհարկե, մենք հսկայական օրհնություններ ենք ստացել Տիրոջից. Քրիստոսի արյամբ փրկագնումը, ոչ թե մեր, այլ Իր արդարության վրա հիմնված փրկության խոստումը, հավիտենական կյանքի հավաստիացումը և Սուրբ Հոգին ընդունելու հնարավորությունը: Սակայն շատ հեշտ է մոռանալ այն մասին, ինչ մենք ունենք, կամ ընդունել դա՝ որպես ինքնին ենթադրվող մի բան, կամ էլ նույնիսկ ծիծաղել դրա վրա: Առակի մշակների նման մենք կարող ենք չգիտակցել մեր արարքների հետևանքները: Սակայն դատաստանի օրը նրանց տգիտությանը արդարացում չի լինի: Այն մեզ էլ չի օգնի:

Անցյալում որքա՞ն հաճախ եք խաբվել ձեր հոգևոր վիճակի առումով: Ի՞նչ եք սովորել այդ փորձառություններից: Կարո՞ղ են արդյոք դրանք օգնել ձեզ, որ այսուհետև խուսափեք այդ սխալներից:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, հունվարի 9

Քրիստոսի ստեղծագործական ժառանգությունը

Քրիստոսի ծառայության մասին գրառումներից հետո թվում է, թե առակներն անհետանում են Սուրբ Գրքից: Ինչո՞վ կարելի է բացատրել այդ արտառոց երևույթը: Նոր Կտակարանի մեծ մասը կապված է Պողոս առաքյալի անձնավորության հետ: Նոր Կտակարանի 14 գրքերը վերագրվում են Պողոսին: Սուրբ առաքյալների Գործք գրքում Ղուկասի պատմական շարադրանքի համարյա կեսը նույնպես

գործնականում պտտվում է բացառապես Պողոսի շուրջը: Չնայած նա չէր օգտագործում առակներն այնպես, ինչպես դա անում էր Հիսուսը, այնուամենայնիվ, հաճախ էր դիմում փոխաբերությունների, համեմատությունների և այլ գրական հնարքների: Հռոմեացիս 7.1-6, Ա Կորնթացիս 3.10-15, Բ Կորնթացիս 5.1-10: Չնայած Պողոսը պատմություններ պատմող չէր, նրա քարոզները չի կարելի ձանձրալի կամ երանգներից զուրկ համարել: Իհարկե, գոյություն ունեն ոճական տարբերություններ Քրիստոսի և Պողոսի հասարակական ելույթների միջև, սակայն նրանք երկուսն էլ իրենց մտքերը դրսևորելիս ստեղծագործական մոտեցում են ցուցաբերել:

Նոր Կտակարանի մյուս հեղինակները մի քիչ ավելի հարազատ են այն ոճին, որով Քրիստոսը պատմում էր Իր առակները: Այն դասը, որը ցանկանում էր ներկայացնել, Հիսուսի եղբայր Հակոբոսը այսպես էր սկսում. «Եթե մի մարդ մտնի ձեր ժողովարանը, որ ոսկի մատանի…ունենա» (Հակոբոս 2.2): Սակայն ո՛չ Հիսուսի եղբայրը, ո՛չ էլ մյուս աշակերտներն այնքան մեծապես չէին օգտագործում պատմությունները, ինչպես դա անում էր Քրիստոսը: Թեև համեմատությունները և սիմվոլիզմը բավականին հաճախ են հանդիպում: «Որովհետև խոտի նման կանցնի» (Հակոբոս 1.10): «Կամ ահա, օրինակ, նավերը» (Հակոբոս 3.4, այլ թարգմանություն): Պետրոսի տեսիլքը տրվում է խորհրդանշական ձևով (Գործք 10.9-16): Խորհրդանշական պատմությունները Հայտնություն գրքի զգալի մասն են կազմում: «Եվ երբ որ տեսավ վիշապը, թե վայր գցվեց երկրի վրա, ընկավ այն կնկա հետևից» (Հայտնություն 12.13):

Առաջարկված համարներից ընտրեք մի քանիսը և այնտեղ գտեք փոխաբերությունները: Ի՞նչ լուրեր են պարունակվում այդ համարներում: Ի՞նչ կերպարներ են օգտագործվում լուրը փոխանցելու համար: Գործք 10.9-16. Հակոբոս 3.3-12, Հայտնություն 12.7-17, 18.9-20, 19.11-16: _____

_____

_____

_____

Ինչ ձևով էլ մենք արտահայտենք լուրը, սկզբունքը մնում է նույնը. փոխաբերությունները, համեմատությունները, առակները, այլաբանությունները և լեզվի ստեղծագործական այլ օրինակները հնարավորություն են տալիս մեզ արտահայտվելու հասկանալի ձևով: Հենվելով ունկնդիրների փորձառության վրա՝ Քրիստոսն ու Իր աշակերտներն օգտագործում էին այն համեմատությունները և պատկեր-

ները, որոնք նպաստում էին ճշմարտություններն ըմբռնելուն: Պատեհ ժամանակ մենք պետք է վարվենք նույն կերպ՝ առանց վախենալու:

ՈՒՐԲԱԹ, հունվարի 10

Հետագա ուսումնասիրության համար

Է.Ուայթի «Քրիստոսի առակները» գրքից կարդացեք «Հորդորները առակներում» գլուխը, էջ 17-27:

«Հիսուսը ձգտում էր հետաքրքրություն արթնացնել ճշմարտության հանդեպ: Նա ջանում էր արթնացնել անտարբերներին և նրանց գիտակցության մեջ կնքել ճշմարտությունը: Առակները մասսայականություն էին վայելում այդ ժամանակներում, դրանք հարգանք էին ներշնչում և գրավում էին ոչ միայն իսրայելացիների, այլ նաև ուրիշ ժողովուրդների ուշադրությունը:

Մյուս կողմից, մարդիկ պատրաստ չէին ոչ միայն ընդունելու, այլ նաև հասկանալու այն ճշմարտությունները, որոնք Քրիստոսը ցանկանում էր բացել նրանց: Նաև այդ պատճառով էր, որ Հիսուսը առակներով էր խոսում: Իր ուսմունքը կապելով բնության մեջ տեղի ունեցող երևույթների, կյանքի և լսողների կենսական փորձառությունների հետ՝ Քրիստոսն արթնացնում էր նրանց ուշադրությունը և մեծ տպավորություն թողնում նրանց սրտերում: Հետագայում, երբ մարդիկ իրենց ամենօրյա կյանքում հանդիպում էին այն առարկաներին, որոնք պատկերում էին Հիսուսի հորդորները, հիշում էին աստվածային Ուսուցչի խոսքերը:

Հիսուսը որոնում էր դեպի յուրաքանչյուրի սիրտը տանող ճանապարհը: Օգտագործելով բազմազան պատկերներ՝ Նա ոչ միայն ցույց էր տալիս բացահայտվող ճշմարտության բազմակողմանի լինելը, այլև դիմում էր այս կամ այն ունկնդրին՝ ճանաչողության և փորձառության տարբեր մակարդակներով» (Է. Ուայթ «Քրիստոսի առակները», էջ 20,21):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում կիսվեք կիրակի օրվա դասի հարցի ձեր պատասխաններով: Ի՞նչ կարող եք սովորել միմյանց պատմություններից:
2. Իր կերպարները և փոխաբերությունները Հիսուսը հիմնում էր այն բաների վրա, ինչին Իր ունկնդիրները լավ ծանոթ էին: Ի՞նչ կարող եք

օգտագործել դուք ձեր մշակույթում, որպեսզի ավելի լավ փոխանցեք հոգևոր ճշմարտությունները:

3. Չնայած Հիսուսը փոխաբերությունները օգտագործում էր հիմնականում գյուղատնտեսական ոլորտից, սակայն առաջին քրիստոնյաներից շատերը քաղաքաբնակներ էին: «Քաղաքային» ինչպիսի՞ պատկերների կարելի է հանդիպել Պողոսի կամ նորկտակարանային ցանկացած այլ հեղինակի գրքերում:
4. Մտածեք, թե ո՞ր տարրերն են կազմում լավ պատմությունը: Այդ ի՞նչ տարրեր են: Ինչպե՞ս են դրանք աշխատում: Ինչպե՞ս կարող ենք սովորել օգտագործել այդ տարրերը մեր վկայության մեջ:
5. Կարդացե՛ք Ղուկաս 16.19-31-ը: Ինչպիսի՞ պատմություն օգտագործեց այստեղ Հիսուսը: Այս հատվածից ի՞նչ դասեր կարող ենք քաղել, որոնք վերաբերում են հորինվածքներ օգտագործելուն՝ հոգևոր լուրը փոխանցելու ժամանակ:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՈԹՔ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Դանիել 9.2-19, Մատթեոս 14.22,23, 26.36, Հովհաննես 17.6-26, Եբրայեցիս 2.17, Ա Պետրոս 4.7:

Հիշելու համարը.

«Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան ինձ: Որ ամենքը մեկ լինեն, ինչպես դու, Հա՛յր, ինձանում, և ես քեզանում, որ նրանք էլ մեզանում մեկ լինեն. որ աշխարհը հավատա, թե դու ուղարկեցիր Ինձ» (Հովհաննես 17.20,21):

Ինչպես էլ որ մենք աշխատենք հոգիների փրկության համար, ինչպիսի ավետարանչական ծրագրեր էլ որ կազմենք, պետք է ջանասիրաբար աղոթենք այն մարդկանց համար, ում ձգտում ենք հասնել: Դա քրիստոնյայի հանապազօրյա պահանջմունքն է, առավել ևս՝ հոգիների փրկության գործում: Ինչպիսի՜ մեծ փոփոխություններ կարող էին տեղի ունենալ, եթե միայն մշտական ջերմ աղոթքները աշակերտներ գրավելու և պահպանելու գործում մեր աշխատանքի կենտրոնում գտնվեին:

«Թող մշակները կառչեն Աստծո խոստումներին՝ ասելով. «Դու խոստացել ես՝ «խնդրեք և կստանաք»: «Ես պետք է Հիսուս Քրիստոսին դարձնեմ այդ հոգին»: Աղոթքում աղերսեք այն հոգիների համար, ում համար ջանք եք թափում, թող եկեղեցին աղոթի այդ մարդկանց համար: Ընտրեք ևս մեկ հոգի, ամեն օր որոնեք Աստծո առաջնորդությունը, ջանադիր աղոթքում նրան ներկայացրեք ամեն ինչ և աշխատեք աստվածային իմաստնությամբ» (Է. Ուայթ «Բժշկական ծառայություն», էջ 244,245):

Ժամանակի կողմից սպուգված կարեկցանք

Հաճախ աղոթքը եսակենտրոն է դառնում: Հավատացյալները Աստծուն են ներկայացնում իրենց ցանկությունների ցուցակը՝ հուսալով ստանալ խնդրանքի պատասխանը: Մեզ, իհարկե, ասվել է, որ կարող ենք դիմել Աստծուն մեր խնդրանքներով, բայց երբեմն մեր աղոթքներն այնքան էլ մաքուր չեն: Ի վերջո, եթե մեր սրտերն ապականված են, չար և խաբեբա, արդյո՞ք մեր աղոթքները չեն արտացոլի մեր ներքին մեղսավորությունը:

Սակայն բարեխոսական աղոթքը միշտ կենտրոնացած է ուրիշ մարդու կարիքների վրա և այդպիսով նվազեցնում է եսասիրական դրդապատճառի հավանականությունը: Պատմության ընթացքում բարեխոսական աղոթքները իրենցից ներկայացրել են հոգևոր զրույցի մեծագույն դրսևորումներ: Ապականված չլինելով սեփական անձի բավարարման ցանկություններով՝ այդ զրույցներն անշահախնդրություն են հանդես բերում, կարեկցանք և շրջապատի մարդկանց փրկելու մեծ ցանկություն:

Կարդացե՛ք Դանիել 9.2-19-ը: Ի՞նչ բեռ էր ծնշում Դանիելին այդ աղոթքի ժամանակ: Ի՞նչ տեղ է գրավում խոստովանությունը աղոթքում: Ձեր հասակի հետ կապված՝ Դանիելն ինքը, ամենայն հավանականությամբ, օգուտ չէր ունենա Երուսաղեմի վերականգնումից: Այդ դեպքում ի՞նչն էր նրա աղոթքի դրդապատճառը: _____

_____

_____

_____

Անցել էր 70 տարի այն պահից, ինչ Երեմիան հռչակել էր այն մարգարեությունը, որի մասին այժմ խոսում էր Դանիելը: Այդքան տարիներ անց Դանիելի՝ Երուսաղեմի ընկերները, հավանաբար, արդեն մահացել էին: Երուսաղեմի վերականգնումը նույնպես ոչ մի կերպ չէր կարող ազդել անձամբ Դանիելի բարեկեցության վրա: Դանիելի աղոթքում ոչ մի բան եսասիրական անհանգստություն չի ենթադրում: Հին մարգարեն որոշակիորեն աղերսում է Արարչին՝ վտարված հրեա ժողովրդի ապագայի և հենց Իր՝ Աստծո հեղինակության համար: Այդ խնդրանքներին նախորդում է երկարաձիգ խոստովանություն: Աստծո առաջ այդ խոստովանության մեջ Դանիելն իրեն անհնա-

զանդների շարքին է դասում: Մարգարեն չի ցանկանում խոսել սեփական անմեղության մասին: Դանիելն իր վրա պատասխանատվություն է վերցնում, չնայած քաղաքի վերականգնումը պետք է օգուտ բերեր գլխավորապես այլ մարդկանց:

Մտածեք ձեր աղոթքի կյանքի մասին. ինչի՞ մասին եք աղոթում, ինչո՞ւ և ո՞ւմ համար: Արդյո՞ք ձեր աղոթքում անշահախնդրություն է դրսևորվում: Ինչպե՞ս կարող եք սովորել՝ ձեր աղոթքի կյանքում լինելու պակաս եսակենտրոն: Այսինքն՝ ինչպե՞ս կարող են ձեր աղոթքները լինել պակաս եսասիրական, եթե նույնիսկ դուք ձեզ համար եք աղոթում:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հունվարի 13

Ժամանակ աղոթքի համար

Մտածեք այն մասին, թե իրականում ինչ է աղոթքը. անկում ապրած մեղավոր արարածները, որ արժանի են մահվան, միշտ հնարավորություն ունեն անմիջականորեն շփվելու տիեզերքի Արարչի՝ Սուրբ Աստծո հետ:

Նույնիսկ Աստված, Քրիստոսում մարդկային մարմին առնելով, ընդունելով մարդկային սահմանափակումները, աղոթքի անհրաժեշտություն էր զգում: Թեպետ Նա Աստծո առաջ նույն վիճակում չէր, ինչ մենք՝ անկում ապրած մեղավորներս, այնուամենայնիվ, Հիսուսը՝ որպես մարդ, տեսնում էր աղոթքի անհրաժեշտությունը:

Կարդացե՛ք Մատթեոս 14.22,23, 26.36-ը: Մարկոս 1.35-37-ը, Ղուկաս 5.15,16-ը, 6.12,13-ը: Ի՞նչն էր բնորոշում Հիսուսի աղոթքի կյանքը: Նկարագրեք այն հանգամանքները, որ ուղեկցում էին Հիսուսի աղոթքներին: Ինչպիսի՞ դասեր կարող ենք քաղել Հիսուսի աղոթքի կյանքի առանձնահատկություններից, ինչպիսիք էին, օրինակ, աղոթքի հաճախությունը, վայրը, ժամանակը և տևողությունը: _____

_____

_____

_____

Իհարկե, Քրիստոսի աղոթքի կյանքը, որ Նա վայելում էր, օրինակ ծառայեց Իր աշակերտների համար: Առավոտները, երեկոները, ծառայությունից հետո, մինչև ծառայությունը, երբ միայն հնարավորություն էր լինում, Հիսուսն աղոթում էր: Այգիներում, լեռներում,

ամայի վայրերում, այնտեղ, ուր Նրան ոչինչ չէր շեղում, Հիսուսն աղոթում էր: Տարածության մեջ բաժանված լինելով Աստծուց՝ Հիսուսը միաբանվում էր Նրա հետ հոգևորապես՝ աղոթքի միջոցով: Քրիստոսի հոգևոր զորությունը հոսում էր աղոթքի հոգևոր զարկերակներով: Քրիստոսի ժամանակակից հետևորդները, որ թուլացել են մեղավոր հակումներից, արդյոք պետք է ընկճվե՞ն աշխարհային հոգսերից, վիատվեն անհաջողություններից, համաձայնեն ավելի պակաս մի բանի, քան Հիսուսի աղոթքի կյանքն է:

«Աղոթքում մենք Աստծո առաջ բացում ենք մեր սրտերը՝ որպես Ընկերոջ: Դա անհրաժեշտ է ոչ թե նրա համար, որ Աստծուն անհայտ է մեր ով լինելը, այլ նրա համար, որ օգնի մեզ՝ ընդունելու Իրեն: Աղոթքը ոչ թե Աստծուն է մոտեցնում մեզ, այլ մեզ՝ Նրան» (Է. Ուայթ «Քայլեր դեպի Քրիստոսը», էջ 93):

Կարդացե՛ք Մարկոս 11.22-26, Ղուկաս 11.13, Հովհաննես 14. 12-14-ը: Ինչպե՞ս պետք է հասկանանք աղոթքին վերաբերող՝ այստեղ գրված խոստումները: Ինչպե՞ս եք դուք զգացել այն, ինչի մասին այստեղ խոսում է Հիսուսը: Միևնույն ժամանակ, ինչպե՞ս եք սովորել հաղթահարել այն իրավիճակները, երբ այն, ինչի մասին աղոթում եք, տեղի չի ունենում այնպես, ինչպես դուք հույս ունեիք:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 14

Հավիտենական ուսմունք

Աղոթքը մահկանացու, սահմանափակ մարդկանց հրաշալի կերպով կապում է իրենց անսահման Արարչի հետ: Աղոթքը հոգևոր սոսինձ է: Միավորված լինելով երկնային Հոր հետ՝ հավատացյալները դուրս են գալիս իրենց երկրային բնույթի և մեղավոր հակումների սահմանափակումներից: Այդ վերափոխումը նրանց առանձնացնում է աշխարհից: Աղոթքը հաջողությամբ վերաձևելով եսակենտրոն չափանմուշի՝ սատանան այդպիսով զրկում է այն իր վերափոխող զորությունից: Այդ դեպքում մենք հսկայական փոխզիջման ենք գնում, իսկ մեր վկայությունը փակուղի է մտնում:

Կարդացե՛ք Մատթեոս 6.7,8, 7.7-11, 18.19-20-ը: Ի՞նչ են սովորեցնում մեզ այս համարները աղոթքի առումով: _____

_____

_____

Անկեղծ հավատացյալը վստահում է Աստծո խոստումներին և դրանք կատարելու Նրա ընդունակությանը: Չկա այնպիսի խնդրանք, որ վախեցնի Աստծուն: Նրա իշխանությունն անսահման է, Նրա զորությունը չափ չունի: Աստծո ժողովուրդը մոտենում է երկնային դարպասներին՝ ապավինելով Տիրոջը և իմանալով, որ Նա ամենալավը կանի մեզ համար՝ չնայած այն բանին, որ ներկայումս մենք չենք տեսնում դա: Հավատը պարզապես վստահություն չէ տեսանելիի հանդեպ, իսկական հավատը վստահությունն է Աստծո հանդեպ, երբ չենք տեսնում այն, ինչ ցանկանում ենք կամ սպասում: Տե՛ս Եբրայեցիս 11.1-7: Անկասկած է, որ քանի դեռ ծառայում եք Աստծուն, քանի դեռ քայլում եք հավատի մեջ, կվստահեք Աստծուն, եթե նույնիսկ ամեն ինչ այնպես չդասավորվի, ինչպես հույս ունեիք կամ աղոթում էիք: Աստվածաշնչի նույնիսկ մակերեսային ընթերցանությունը ցույց է տալիս, որ դուք երբեք միայնակ չեք լինի:

Կարդացե՛ք Մատթեոս 6.9-15, 26.39-ը: Ի՞նչ են սովորեցնում այս համարները:

Վստահությունը չի կարելի շփոթել ինքնավստահության կամ հանդգնության հետ: Աստծո գահին համարձակորեն մոտենալը չպետք է այն զգացումն առաջացնի, թե մենք ունենք դրա լիակատար իրավունքը: Հավատացյալի վարքագիծը բնորոշվում է համարձակությամբ և խոնարհությամբ: Գեթսեմանում Քրիստոսը հստակ արտահայտեց Իր ցանկությունը, սակայն այս խոսքերով ավարտեց աղոթքը. «Ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի»: Լիակատար անձնազոհությունից բացի, ներման հոգին վկայում է խոնարհության մասին: Մեզ այնքան բան է ներվել, որ մենք պարզապես պարտավոր ենք ներել շրջապատի մարդկանց:

Կա՞ արդյոք այնպիսի մարդ, ում վրա դուք չարացած եք, ում դժվար է ներելը: Աղոթքում այդ մասին ասացեք Տիրոջը: Աղոթեք ձեզ համար, որպեսզի սովորեք ներել: Աղոթեք այդ մարդու համար: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեղի կունենա:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 15

Հավիտենական կարեկցանք

Քրիստոսը կատարելության մարմնավորումն էր, այսինքն՝ Նրա մեջ դրսևորվել էր ողջ աստվածային կատարելությունը: Համապատասխանաբար, արդյո՞ք որևէ մեկն ավելի կարեկից էր, քան Քրիս-

տոսը: Ո՞վ էր Քրիստոսից ավելի շատ ցանկանում թեթևացնել մարդկային ցավը:

Այդ պատճառով էլ մենք հարցնում ենք. ինչպիսի՞ն է Քրիստոսի կարեկցանքի, բարեխոսության և աշակերտության միջև փոխադարձ կապը:

Կարդացե՛ք Ղուկաս 22.31,32 և Հովհաննես 17.6-26-ը: Տե՛ս նաև Եբրայեցիս 2.17-ը: Քրիստոսի նույնացումը մարդկության հետ ինչպե՞ս ազդեց Նրա բարեխոսական աղոթքների վրա: Ինչպիսի՞ն էին Քրիստոսի բարեխոսական աղոթքների գլխավոր նպատակները: _____

_____

_____

Հիսուսը կարող էր արդյունավետ կերպով բարեխոսել Իր աշակերտների համար, քանի որ ակտիվ մասնակցություն ուներ նրանց կյանքում, լիովին հասկանում և կրքոտ կերպով բարօրություն էր ցանկանում նրանց: Ժամանակակից արդյունավետ բարեխոսությունը այդ նույնն է պահանջում: 21-րդ դարի ավետարանիչը կթողնի՝ չափազանց շատ ժամանակ խլող իր գործերը, որոնք խանգարում են կործանվող հոգիների հետ իր փոխհարաբերություններին: Ընչաքաղցությունը, փառքի ձգտումը, նույնիսկ գերազանցությունը ուսման մեջ պետք է ենթարկվեն առավել մեծ նպատակի՝ կործանվողների փրկությանը: Դա կարևոր ճշմարտություն է, որն այնքան թեթևորեն վրիպում է տեսադաշտից, որովհետև մենք չափազանց հաճախ ենք հայտնվում առօրյա ունայնության մեջ:

Հիսուսը նվիրված էր Իր աշակերտներին: Նա աշակերտների տուն էր գնում, ծանոթանում նրանց հարազատների հետ, նրանց հետ անցկացնում ազատ ժամանակը և տքնում նրանց հետ միասին: Նրանց կյանքի հետ կապված ոչ մի նշանակալի բան չէր անցնում Հիսուսի կողքով: Ապագա աշակերտների հետ աշխատանքը այսօր պահանջում է ավելին, քան ծանոթացնող գրքույկների տարածումը և աստվածաշնչյան անհերքելի փաստարկումները: Աղոթքը, որտեղ մերձավորի վշտի հանդեպ կարեկցանք է զգացվում, և այդ ցավը թեթևացնելու բուռն ցանկություն, առաջվա նման օրինակելի բարեխոսական աղոթք է համարվում արդյունավետ ավետարանչական աշխատանքում:

Հնարավոր է, այս արտահայտությունը տարօրինակ է հնչում, սակայն նրա մեջ շատ ճշմարտություն կա. «Մարդկանց քիչ է հուզում, թե ինչ գիտես դու, մինչև նրանք չիմանան, թե որքան հոգատար ես դու»:

Նմանվելով Հիսուսին

Հիսուսին ընդօրինակելը ամենաանկեղծ փառաբանությունն է: Քրիստոսի առաջին աշակերտներն ընդօրինակում էին իրենց Ուսուցչի աղոթքի կյանքը: Բնական է, որ նրանք աղոթում էին անձնական անվտանգության, ամենօրյա կարիքների և հոգևոր առաջնորդության համար, և այնուամենայնիվ, բարեխոսական աղոթքը դարձավ նրանց աշակերտության կարևոր բաղկացուցիչը:

Կարդացե՛ք Գործք 1.13,14, Ա Տիմոթեոս 2.1-4, Հակոբոս 5.13-16, Ա Հովհաննես 5.16, Հուդա 20-22, Ա Պետրոս 4.7-ը: Ի՞նչ դեր էր խաղում աղոթքը վաղ եկեղեցում: Ի՞նչ առանձնահատուկ իրավիճակների համար էին աղոթում նրանք: Ի՞նչ կարող ենք սովորել մենք այդ օրինակներից: _____

_____

_____

Անդադրում աղոթքը վաղ եկեղեցու հուսալի խարիսխն էր: Երբ էլ որ Պողոսն ուղևորվեր իր ավետարանչական առաքելությամբ, նրան ուղեկցում էին աղոթքով (Գործք 13.3, 14.23): Հրաժեշտ տալով միմյանց՝ նրանք աղոթում էին (Գործք 20.36, 21.5): Նրանց աղոթքները հաճախ բարեխոսության ձև էին ընդունում: Նրանք աղոթում էին ղեկավարների, հավատքի եղբայրակիցների և, ընդհանուր առմամբ, ամեն ինչի համար: Պողոսը բարեխոսեց Պոպլիոսի հոր համար, ով, ամենայն հավանականությամբ, տառապում էր դիզենտերիայով (Գործք 28.8): Նույնիսկ երբ Ստեփանոսը մահանում էր, նա բարեխոսեց իր դահիճների համար (Գործք 7.60): Դժվար է գերագնահատել աղոթքի կարևորությունը առաջին հավատացյալների մոտ: Սուրբ Գիրքն ասում է, որ աղոթքը ուրախացնում է Աստծուն, որովհետև Նա ցանկանում է, որ ճշմարտությունը տարածվի, և ամեն մեկը փրկվի: Վաղ եկեղեցին բուռն թափով աճում էր աղոթքի միջոցով՝ միաբանված լինելով առաքելական ուսմունքին, ջերմեռանդ քարոզներին, կատարվող հրաշքներին և ջերմ եղբայրությանը: Չնայած ուժեղ հալածանքերին՝ քրիստոնեությունը արագընթաց կերպով տարածվում էր ողջ կայսրությունով մեկ: Հազարավոր մարդիկ ընդունում էին Ավետարանը: Վերափոխված կյանքերն այրվում էին կեսարի պալատի կենդանի ջահերի նման:

Ինչքա՞ն ժամանակ եք անցկացնում բարեխոսական աղոթքի մեջ: Մտածեք ձեր պատասխանի շուրջ: Գուցե ավելի լավ է հարցնել,

թե ինչքա՞ն ժամանակ պետք է անցկացնել բարեխոսական աղոթքի մեջ:

ՈՒՐԲԱԹ, հունվարի 17

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Վկայություններ եկեղեցու համար» գրքից կարդացե՛ք «Բարենորոգչական շարժում» գլուխը, հտ. 9, էջ 126, Է.Ուայթի «Բժշկական ծառայություն» գրքից «Անձնական ջանքերով և կենդանի հավատով» գլուխը, հտ. 9, էջ 244,245:

«Այն մարդը, ով ոչինչ չի անում, այլ միայն աղոթում է, շուտով կդադարի նաև աղոթելուց, կամ էլ կաղոթի միայն սովորության ուժով: Երբ մարդիկ հրաժարվում են հասարակական կյանքից, իրենց քրիստոնեական պարտականություններից և խաչը կրելուց, երբ նրանք դադարում են բարեխղճորեն տքնել Տիրոջ համար, ով անխոնջ աշխատում էր իրենց համար, նրանք աղոթելու ցանկություն չունեն, նրանց մոտ կորչում է նվիրվածության և առաքինության ցանկացած մղում: Նրանց աղոթքները կենտրոնանում են իրենց վրա: Նրանք ի վիճակի չեն աղոթելու մարդկության կարիքների, Քրիստոսի Թագավորության շինության, ծառայության մեջ իրենց իսկ զորություն պարգևելու համար» (Է. Ուայթ «Քայլեր դեպի Քրիստոսը», էջ 101):

Հարցերք ննարկման համար

1. Ինչու՞ է բարեխոսական աղոթքի բացակայությունը կանգնեցնում եկեղեցու աճը: Եվ ընդհակառակը, ինչպե՞ս է բարեխոսական եռանդուն աղոթքի կյանքը խթանում ավետարանչական գործունեությունը: Անվանե՛ք արդյունավետ բարեխոսական աղոթքի բանալիները: Ինչպե՞ս իմանա բարեխոսը, թե ինչի համար է պետք աղոթել:

2. Ի՞նչ պետք է անեն եկեղեցու անդամներն այն մարդկանց համար, ում համար աղոթում են: Ինչպե՞ս կարող են եկեղեցու անդամները փոխհարաբերություններ հաստատել հարևանների, հարազատների և աշխատակիցների հետ, ում համար իրենք աղոթում են: Ինչո՞ւ մարդկանց համար անձնական աղոթքները միշտ պետք է ուղեկցվեն այդ մարդկանց հետ բարեկամանալու համառ ջանքերով:

3. Ինչպիսի՞ քայլեր պետք է նախաձեռնեն 21-րդ դարի քրիստոնյաները շարժուն աղոթքի կյանքի հասնելու համար: Ո՞րն է հաջողակ ավետարանման և Աստծո հետ աղոթքի հանդիպումների միջև փոխադարձ կապը: Կարո՞ղ է արդյոք աղոթքը փոխել նրանց, ում համար աղոթում են՝ սկզբում չփոխելով նրանց, ովքեր աղոթում են: Ինչպե՞ս կարող են կործանվող հոգիների համար անկեղծ ապրումներն ազդել աղոթքի բովանդակության վրա: Անձնական սրբությունը և աղոթքը ի՞նչ ազդեցություն են թողնում հնարավոր ավետարանչի՝ ճշմարտությամբ կիսվելու ընդունակության վրա:

4. Ի՞նչ կարող են անել հավատացյալ մարդիկ՝ իրենց շփումներն ընդարձակելու համար նրանց հետ, ովքեր չեն ընդունել Քրիստոսին: Ի՞նչ կարող են անել քրիստոնյաները, որպեսզի ավելի մտերիմ հարաբերություններ ունենան շրջապատի մարդկանց հետ, իմանան նրանց առանձնահատուկ կարիքները:

ՀՈՐԴՈՐԵԼՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Սաղմոս 127.3-5, Երկրորդ Օրինաց 6.6,7, Ղուկաս 2.40-52, Մատթեոս 18.1-6, 10-14, Մարկոս 10.13-16:

Հիշելու համարը.

«Եվ ասացին Նրան. լսո՞ւմ ես, դրանք ի՞նչ են ասում: Հիսուսն էլ ասաց նրանց. այո, դուք երբեք չե՞ք կարդացել՝ թե մանուկների և կաթնակերների բերանից օրհնություն կատարեցիր» (Մատթեոս 21.16):

Աշխարհին քարոզելու և բոլոր ժողովուրդներին աշակերտներ դարձնելու ձգտման մեջ մենք պետք է հիշենք մարդկանց տարբեր դասերի նաև երեխաների մասին:

Երեխաների և երիտասարդների ուսումնառության վերաբերյալ քրիստոնեական տեսիլքը շատ բաներում տարբերվում է: Եվ, այնուամենայնիվ, գործնականում բոլոր հարանվանություններում հստակորեն մի գիծ է շեշտվում՝ քրիստոնյաների մեծամասնությունն իր կյանքը Քրիստոսին է նվիրել համեմատաբար երիտասարդ հասակում: Զգալիորեն պակաս թվով մարդիկ դարձի են գալիս հասուն տարիքում:

Ակնհայտ է, որ շատ եկեղեցիներ, ծրագրավորելով իրենց ավետարանչական աշխատանքը, տեսադաշտից բաց են թողնում այդ կարևոր փաստը՝ իրենց միջոցների մեծ մասն ուղղելով հասուն բնակչության հետ ծառայությանը: Քրիստոսի առաջին աշակերտները նույնպես, դատելով ամեն ինչից, թերագնահատում էին երեխաների հետ ծառայության կարևորությունը: Հիսուսը մերժեց նմանատիպ դիրքորոշումը և առանձնահատուկ ուշադրություն դարձրեց երեխաների վրա՝ առաջնահերթ տեղ հատկացնելով նրանց:

Հետևաբար, մենք էլ պետք է այդպես վարվենք:

Հրեա երեխաների առավելությունը

Հնում հրեաներն իրենց զավակներին համեմատաբար ավելի լավ էին վերաբերվում, քան նրանց շրջապատող ժողովուրդները: Շատ մշակույթներում գործնականորեն կիրառում էին երեխաների զոհաբերությունը՝ որպես ընծա աստվածությանը: Կամ էլ երեխաների արժեքը չափվում էր հասարակության մեջ նրանց տնտեսական ներդրումով: Մեծահասակների աշխարհի հետ երեխաների հարաբերությունները սահմանվում էին նրանց աշխատունակությամբ, այլ ոչ թե երեխային հատուկ արժեքով: Ծանր է խոսել այդ մասին, սակայն նման հայացքների արձագանքների, հատկապես ինչ վերաբերում է տնտեսական արժեքին, կարելի է հանդիպել նույնիսկ ժամանակակից աշխարհում:

Ակնհայտ է, որ Իսրայելի ուրացողությունը ազդեց նաև այն բանի վրա, թե ինչպես էր ժողովուրդը գնահատում երեխաներին: Կախարդությամբ զբաղվելը և այլ կրոնների հետ Մանասեի շփումները հանգեցրին նրան, որ նա զոհաբերեց իր որդիներին (Բ Մնացորդաց 33.6): Եվ այնուամենայնիվ, Մանասեի կառավարումը ավելի շուտ բացառություն էր, քան կանոն: Աստվածավախ առաջնորդության դեպքում իսրայելացիները գնահատում էին իրենց ժառանգներին:

Կարդացե՛ք Սաղմոս 127.3-5, 128.3-6, Երեմիա 7.31, Երկրորդ Օրինաց 6.6,7: Ի՞նչ են ասում այս համարներն այն մասին, թե ինչպես է Աստված գնահատում երեխաներին: Սուրբ Գրքի ճիշտ իմացությունն ինչպե՞ս կարող է ազդել երեխաների հետ մեր փոխհարաբերությունների վրա: _____

_____

_____

_____

Ուսումնառությունը, առաջնեկության իրավունքը և մշակութային այլ գործնական դրսևորումներ հստակ վկայում են այն մասին, թե որքան արժեքավոր էին երեխաները հին հրեական մշակույթում: Զարմանալի չէ, որ Քրիստոսն ավելի բարձրացրեց երեխաների կարգավիճակը, հատկապես եթե համեմատենք այն կացության հետ, որ ունեին նրանք այլ մշակույթներում: Ի վերջո, երեխաները մարդիկ են, իսկ Քրիստոսը մահացավ յուրաքանչյուր մարդու համար. մենք երբեք չպետք է մոռանանք այդ մասին:

Դժվար է հավատալ, որ որոշ մեծահասակներ այնքան ապականված են, չար և փչացած, որ վնասում են երեխաներին, երբեմն նույնիսկ սեփական զավակներին: Ինչպե՞ս կարող ենք մենք ցանկացած իրավիճակում անել ամեն հնարավորը, որպեսզի սիրենք, պաշտպանենք և դաստիարակենք այն երեխաներին, ովքեր գտնվում են մեր ազդեցության ոլորտում:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հունվարի 20

Հիսուսի մանկությունը

Եթե Հիսուսը մանկություն չունենար և գար մեր մոլորակը՝ որպես լիիրավ մեծահասակ, ապա մեր մեջ կարող էին լուրջ հարցեր առաջանալ երեխաների հետ նույնանալու՝ Նրա ընդունակության առումով: Սակայն Հիսուսն աճեց ու զարգացավ, ինչպես բոլոր երեխաները՝ չխուսափելով աճի ու հասունացման հետ կապված ոչ մի փուլից: Նա հասկանում է պատանեկան հասակի հիմնախնդիրները: Նա Իր վրա զգացել է մանկության փխրունությունը և խոցելիությունը: Քրիստոսը բախվել է այն բոլոր հիմնախնդիրներին, որոնց բախվում են երեխաները: Մանկական ժամանակաշրջանի միջով անցնելը ևս մի կարևոր փուլ է, որի ընթացքում մեր Փրկիչը բացահայտեց Իր իսկական մարդկային բնույթը:

Կարդացե՛ք Ղուկաս 2.40-52-ը: Այս հատվածից ի՞նչ ենք իմանում մենք Հիսուսի մանկության մասին: _____

_____

_____

Հրեաների մոտ ընդունված էր համարել, որ 12 տարեկան հասակը մանկության և պատանեկության միջև ընկած սահմանագիծն է: Հասնելով այդ հասակին՝ հրեա տղան արդեն օրենքի և Աստծո զավակ էր համարվում: Նրա առջև լրացուցիչ հնարավորություններ էին բացվում կրոնական դաստիարակության համար. նա կարող էր մասնակցել սրբազան տոներին և ծեսերին: Այդ ավանդության համաձայն՝ պատանի Հիսուսը ուղևորվեց Երուսաղեմ՝ Զատիկի տոնին» (Է. Ուայթ «Դարերի փափագը», էջ 75):

Համաձայն այդ համարների՝ Հիսուսն աճում էր իմաստության մեջ: Հայր Աստվածը Նրա վրա էր հեղում էր Իր շնորհը: Զատկի ճանապարհորդության ժամանակ, երբ Քրիստոսը դեռ պատանի էր, տաճարում հանդիպման ժամանակ, մենք տեսնում ենք Նրա հոգևոր

խորը իմաստնությունը: Ուսուցիչները զարմանում էին Նրա հարցերից և պատասխաններից:

Անկասկած, Աստված օգտագործել է մանկական հարուստ փորձառությունները, որպեսզի դրսևորի այդ գրավիչ, անթերի բնավորությունը: Հնարավոր է, կարգապահությունը հյուսնի արհեստի ուսումնառության մեջ, ծնողների ուշադրությունը, Սուրբ Գրքի կանոնավոր ուսումնասիրությունը և Նազարեթի բնակիչների հետ համագործակցությունը կազմում էին Նրա վաղ դաստիարակության հիմքը: Սակայն, որքան էլ աչքի ընկնող երեխա լիներ Հիսուսը, այնուամենայնիվ, Նա երեխա էր, ինչպես մի ժամանակ մենք բոլորս:

«Պատանի Հիսուսը չէր սովորել ժողովարանին կից դպրոցում: Մայրն էր Նրա առաջին ուսուցիչը: Նա հասու էր եղել ճշմարտությանը մոր շրթունքներից և մարգարեների Գրքերից: Նստելով Իր մոր ծնկներին՝ Նա այժմ սովորում էր այն, ինչ Ինքն էր մի ժամանակ ասել Իսրայելին՝ Մովսեսի միջոցով» (Է. Ռ Իայթ «Դարերի փափագը», էջ 70): Մտորե՛ք այդ խոսքերի կարևորության շուրջը: Ի՞նչ են դրանք վկայում մեզ Քրիստոսի մարդկային բնույթի մասին:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 21

Երեխաների ապաքինումը

Կարդացե՛ք հետևյալ հատվածները. Մատթեոս 9.18-26, Մարկոս 7.24-30, Ղուկաս 9.37-43, Հովհաննես 4.46-54: Ո՞ւմ երեխաներն ապաքինվեցին կամ կյանք վերադարձան այս պատմություններում: Ինչքանո՞վ էր տարբեր այդ երեխաների ծագումը, նրանց կյանքը: Ի՞նչն էր ընդհանուր նրանց մոտ: Ի՞նչ կարող ենք սովորել այդ համարներից: Ինչպե՞ս կարող են նրանք օգնել մեզ այսօր: _____

_____

_____

_____

Այդ բոլոր պատմություններում նշանակալի է այն, որ յուրաքանչյուր դեպքում հուսահատված ծնողը գնում է Հիսուսի մոտ՝ խնդրելով օգնել իր երեխային: Ո՞ր ծնողը չի կարող հասկանալ դա: Ո՞ր ծնողը չի զգացել ցավ, տառապանք, վախ և անհաղթահարելի սարսափ, երբ երեխան հիվանդ է եղել կամ գտնվել է մահվան շեմին: Դրանից ավելի վատ բան չկա նրանց համար, ովքեր վերապրել են այդ ամենը:

Եվ թեպետ Հիսուսն Ինքը ծնող չի եղել, Նա Իր մարդկային բնույթի մեջ բավականաչափ լավ էր հասկանում ծնողներին և ապաքինում էր նրանց երեխաներին: Յուրաքանչյուր դեպքում Նա բժշկություն էր պարգևում: Նա ոչ մեկին Իրենից չէր հեռացնում: Դա հստակ վկայում է ոչ միայն ծնողների, այլ նաև երեխաների հանդեպ Նրա սիրո մասին:

Իհարկե, սա հարցերի մի անզուսպ հոսք է առաջ բերում այն դեպքերի համար, երբ ծնողներն աղոթել են, աղերսել և դիմել Հիսուսին, սակայն նրանց երեխաներն այդպես էլ չեն ապաքինվել: Հավանաբար, չկա ավելի ցավալի փորձառություն, քան սեփական երեխայի թաղումը: Մահը նախատեսված է ավագ սերնդի համար: Իրերի անբնական կարգը, երբ ծնողները սգում են իրենց մահացած երեխաների համար, ապստամբություն է առաջանում սրտում: Այդպիսի թաղումների ժամանակ համարյա յուրաքանչյուր ծնող հարցնում է. «Արդյո՞ք ես իմ երեխայի տեղը չպետք է լինեի»:

Ֆիզիկական մահը սգալը և հոգևոր քայքայմանը հետևելը կարող է հավասարապես հիվանդագին լինել: Ինչքա՜ն շատ ծնողներ են տառապում, որ իրենց երեխաները թմրամոլության կախվածության մեջ են ընկել, հրապուրվում են պոռնկագրությամբ կամ պատանեկան անտարբերություն են դրսևորում: Ինչպիսին էլ որ լինի մեր վիշտը, մենք պետք է սովորենք ապավինել Տիրոջը, նրա ողորմությանը և սիրուն, երբ նույնիսկ ինչ-որ բան տեղի չի ունենում այնպես, ինչպես վերոհիշյալ աստվածաշնչյան պատմություններում: Է. Ուայթը՝ մարգարեուհին, թաղել է իր երկու երեխաներին: Մեր աշխարհը հասարակ վայր չէ, սակայն մենք ունենք սիրող Աստված, և այդ ճշմարտությանը պետք է ապավինենք՝ անկախ հանգամանքներից:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 22

Սպառնալից նախազգուշացում

Վերլուծե՛ք հետևյալ համարները. Մատթեոս 11.25,26, 18.1-6, 10-14: Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք քաղել այս պատմություններից ոչ միայն երեխաների, այլ նաև հավատի մասին ընդհանրապես: Մտածե՛ք այն մասին, թե այստեղ ինչքան դաժան է հնչում Հիսուսի նախազգուշացումը: Ինչո՞ւ պետք է մենք սարսռանք դրա առջև: _____

_____

_____

Երեխաների մեջ կա ինչ-որ իսկական մի բան՝ անկեղծություն, որը Հիսուսը հաճախ էր ընդգծում՝ խոսելով Իր թագավորության մասին: Նրանց անկեղծությունը, խոնարհությունը, կախվածությունը և անմեղությունը իրենց մեջ ինչ-որ ձևով քրիստոնեական կյանքի էությունն են ներառում: Մենք բոլորս պետք է փափագենք այդ պարզությունն ու վստահությունը հավատի մեր դրսևորումների մեջ:

Ժամանակակից ավետարանիչները պետք է մի կարևոր դաս ևս յուրացնեն. երեխաները երբեք չպետք է հրաժարվեն իրենց մանկական կախվածությունից: Ճիշտ դաստիարակված երեխաները կարող են պահպանել դյուրահավատությունը և անմեղությունը նույնիսկ հասուն տարիքում: Իհարկե, աճին ու հասունացմանը զուգընթաց, նրանք կարող են հարցեր տալ, կարող են պայքարի և կասկածների մեջ լինել, չգտնել որոշ հարցերի պատասխաններ, ինչպես և մենք բոլորս: Սակայն մանկական հավատը երբեք դուրս չի գալիս նորաձևությունից: Որպես ծնողներ կամ պարզապես հասուն մարդիկ՝ մենք մեր կողմից պետք է անենք ամեն ինչ, որպեսզի երեխաների մեջ Աստծո և Նրա սիրո մասին ճանաչողություն ներարկենք, իսկ դրան լավագույն ձևով կարելի է հասնել այդ սերը, բարությունը, կարեկցանքը և հոգատարությունը մեր կյանքում նրանց հանդեպ դրսևորելու միջոցով: Մենք կարող ենք քարոզել և բարոյականության ենթարկել ամեն ինչ, ինչ ցանկանում ենք, սակայն, ինչպես և մեծահասակների դեպքում, երեխաներին աշակերտներ դարձնելու ամենալավ եղանակը մեր կյանքով նրանց այդ սերը ցույց տալն է:

Սառը, սարսափելի, կտրուկ հակասությունը այս ամենին՝ կարող է հանցավոր վերաբերմունք լինել երեխաների հանդեպ: Եթե դա տեղի է ունենում եկեղեցու կազմակերպած միջոցառումների ժամանակ, ապա կարող է ոչնչացնել երեխայի վստահությունը եկեղեցու հանդեպ և, որպես կանոն, այդ եկեղեցու Աստծո հանդեպ: Ինչպիսի արդարացի բարկություն է սպասվում այդ կերպ վարվողներին և նրանց, ովքեր ծածկում են դա: Քրիստոսը և Նրա լուրը վստահություն և համոզվածություն են արթնացնում: Ինչպե՞ս կարող է որևէ մարդկային կազմակերպություն խախտել այդ մանկական հավատը անբավարար զգոնությամբ:

Ի՞նչ է անում ձեր եկեղեցին երեխաների ոչ միայն դաստիարակության, այլ նաև այն բանի համար, որպեսզի նրանք ամեն կերպ պաշտպանված լինեն: Մտածեք Հիսուսի խոսքերի նշանակության մասին, երբ Նա ասաց, որ «նրանց հրեշտակները երկնքում միշտ տեսնում են Իմ Հոր երեսը, որ երկնքումն է»: Մատ-

թեոս 18.10: Ինչո՞ւ դա պետք է պարտադրի սարսռալ ցանկացած մեկին, ով ցավ է պատճառում երեխային:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, հունվարի 23

Թողեք երեխաներին

Կարդացե՛ք Մարկոս 10.13-16-ը: Այն փաստը, որ Քրիստոսն ընդունում էր երեխաներին, ինչպե՞ս նպաստեց նրան, որ երեխաներն էլ ընդունեն Նրան: Ինչպե՞ս պետք է հասկանալ Նրա հանդիմանությունը աշակերտներին: Ի՞նչ պետք է սովորենք մենք այդ պատմությունից: Ինչպե՞ս պետք է վերաբերվենք երեխաներին: _____

_____

_____

_____

Իհարկե, Քրիստոսի աշակերտները գործեցին լավագույն մղումներից դրդված, թեպետ և սխալ վարվեցին: Նրանք փորձում էին խնայել Քիրստոսի թանկագին ժամանակը, խնայել Նրա ուժերը ավելի «կարևոր» գործերի համար: Նրանք բացարձակապես չէին հասկանում, թե ինչ է ուզում Հիսուսը իրենցից:

Պատկերացրեք բռի մեծահասակների կողմից մոռացված մի երեխայի, ով ընկնում է սիրող և հոգատար Հիսուսի գիրկը: Այս պատմության մեջ մեզ անգնահատելի օրինակ է տրվում այն մասին, թե ինչպես պետք է վերաբերվեն երեխաներին այն մարդիկ, ովքեր հավակնում են, որ աշակերտության են առաջնորդում ուրիշներին:

«Իր մոտ եկած երեխաների մեջ Հիսուսը տեսնում էր Իր շնորհի ժառանգորդներին և իր արքայության հպատակներին: Նրանցից մի քանիսը նահատակներ կդառնան հանուն Հիսուսի: Նա գիտեր, որ այդ երեխաները կլսեն Իրեն և կընդունեն իրեն որպես իրենց Փրկիչ ավելի մեծ պատրաստակամությամբ, քան մեծահասակները, որոնցից շատերը երկրային իմաստություն և կարծրացրած սիրտ ունեին: Հորդորելով երեխաներին՝ Նա իջնում, հավասարվում էր նրանց մակարդակին: Նա՝ երկնքի Մեծությունը, Իր արժանապատվությունից ցածր չէր համարում պատասխանել նրանց հարցերին: Պարզեցնելով Իր կարևորագույն խրատները՝ Նա մատչելի էր դարձնում դրանք մանկական մտքի համար: Նրանց հոգիների մեջ Հիսուսը ցանում էր ճշմարտության սերմերը, որոնք ժամանակի ընթացքում պետք է աճեին և պտուղ

տային հավիտենական կյանքում» (Է. Ուայթ, Դարերի փափագը», էջ 512-515):

Հաճա՞խ ենք մենք հանդիպում մեծահասակների, ովքեր անհավատալի ցավ, խռովություն և սրտի ցավ են ապրում մանուկ տարիներին կրած վիրավորանքների պատճառով: Ի՞նչ է ասում դա մեզ այն մասին, թե որքան նուրբ, հոգատար, ազնիվ և նվիրված պետք է վերաբերվենք մենք երեխաներին:

ՈՒՐԲԱԹ, հունվարի 24

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացեք «Երեխաների օրհնությունը» գլուխը, էջ 511-517, «Վկայություններ եկեղեցու համար» գրքից՝ «Տաճարի կրկնակի մաքրումը» գլուխը, հտ. 6, էջ 592, «Մկրտություն» գլուխը, էջ 93-95, «Դաստիարակություն» գրքից՝ «Աստվածաշնչյան մոտեցման կարևորությունը Սուրբ Գրքի ուսմունքի և ուսումնասիրության հանդեպ», էջ 185, 186:

«Անկասկած, երեխաներն այսօր էլ առավելագույնս ընկալունակ են ավետարանական ուսմունքի հանդեպ: Նրանց սրտերը բաց են աստվածային ազդեցության համար, և նրանք հաստատուն կերպով հիշում են յուրացված դասերը: Երեխաները կարող են լինել քրիստոնյաներ՝ ունենալով իրենց տարիքին համապատասխան փորձառություն: Անհրաժեշտ է նրանց խրատել հոգևոր հարցերում: Ծնողները պետք է բոլոր հնարավորություններն ընձեռեն երեխաներին, որպեսզի ձևավորվող անհատը կարողանա հետևել Քրիստոսի օրինակին:

Մայրերը և հայրերը պետք է իրենց երեխաներին նայեն որպես մեր Տիրոջ ընտանիքի կրտսեր անդամների, ովքեր իրենց են հանձնվել՝ դաստիարակվելու երկնքի համար: Այն դասերը, որ մենք ինքներս ստանում ենք Քրիստոսից, պետք է փոխանցենք մեր երեխաներին այն չափով, ինչ չափով ընդունակ է ընկալելու նրանց մանկական միտքը՝ փոքր ինչ բացելով նրանց Երկնքի սկզբունքների վեհությունը» (Է. Ուայթ, Դարերի Փափագը», էջ 515):

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մարդիկ Քրիստոսին ընդունում առավել հաճախ երիտասարդ, քան տարեց հասակում: Թերահավատները

կարող են հայտարարել, որ դա տեղի է ունենում այն պատճառով, որ նրանք չափազանց պարզունակ են և անկիրթ՝ գիտակցելու այն արարքի անմտությունը, ինչ անում են: Մյուս կողմից, հնարավոր է, պատճառն այն է, որ նրանք դեռևս այնքան քարացած և ցինիկ չեն, ինչպես շատ մեծահասակներ: Այսինքն՝ նրանց մաքրությունը և անկեղծությունը առավե՞լ ընկալ են դարձնում նրանց Սուրբ Հոգու ազդեցության հանդեպ: Քննարկե՛ք:

2. Այսօր եկեղեցին երեխաների հետ իր փոխհարաբերություններում ինչպե՞ս կարող է նմանվել Քրիստոսին: Ի՞նչ կարող է անել եկեղեցու յուրաքանչյուր անդամ առանձին, որպեսզի ավելի բարեկամական դառնա երիտասարդության հանդեպ, որը կարող է փորձեր կատարել անսովոր նորաձևության, երաժշտության, իսկ երբեմն էլ՝ անհեթեթ վարքագծի առումով: Ինչպե՞ս կարող է եկեղեցին ավելի ակտիվ դառնալ և դրանով իսկ՝ ավելի գրավիչ ակտիվ երիտասարդության համար:
3. Ի՞նչ քայլեր կարող են նախաձեռնել եկեղեցու անդամները, որպեսզի պատրաստվեն այն հետաքրքրասեր երիտասարդների հետ աշխատանքին, ովքեր ցանկանում են մկրտվել և իրենց կյանքը նվիրաբերել Քրիստոսին:
4. Մտածեք երեխաների այն բնորոշ հատկությունների մասին, որոնք դրդեցին Հիսուսին ասելու. «Եթե դարձի չգաք և չլինեք երեխաների նման, չեք մտնի երկնքի արքայությունը» (Մատթեոս 18.3): Ինչպե՞ս հասկանալ այս համարը: Միևնույն ժամանակ, ինչպե՞ս չի կարելի հասկանալ դա:

ԾԱՌԱՅԵԼՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք

Եսայիա 53.4, Մատթեոս 8.17, Մարկոս 2.1-12, Փիլիպեցիս 4.4-9, Ա Հովհաննես 3.20-22, Հովհաննես 11.37-44:

Հիշելու համարը.

«Եվ շատ ժողովուրդներ եկան Նրա մոտ, որ իրենց հետ ունեին կաղեր, կույրեր, համրեր, հաշմանդամներ և ուրիշ շատեր, և նրանց գցեցին Հիսուսի ոտները, և Նա նրանց բժշկեց: Մինչև որ ժողովուրդները զարմանում էին, տեսնելով համրերին խոսելիս, հաշմանդամներին առողջ, կաղերին գնալիս և կույրերին տեսնելիս. և փառավորեցին Իսրայելի Աստծուն» (Մատթեոս 15.30,31):

«Իր ծառայության մեջ Հիսուսն ավելի շատ ժամանակ էր նվիրաբերում հիվանդների բուժմանը, քան քարոզին: Նրա կատարած հրաշքները հաստատում էին Նրա խոսքերի ճշմարտացիությունն այն մասին, որ Ինքը եկել է ոչ թե կործանելու, այլ փրկելու: Ուր էլ որ Նա ուղևորվեր, Նրա գթասրտության մասին լուրն Իրենից առաջ էր գնում: Այնտեղ, ուր Նա էր լինում, մարդիկ Նրա մեջ կարեկցանք էին գտնում և ցնծում վերստին ձեռք բերված առողջությամբ ու նոր ուժերով: Ժողովրդի խմբերը հավաքվում էին ապաքինվածների շուրջը՝ լսելու Տիրոջ կատարած գործերի մասին: Հիսուսի ձայնը շատերի համար դառնում էր իրենց լսած առաջին ձայնը, Նրա անունը՝ իրենց արտաբերած առաջին անունը, Նրա դեմքը՝ այն առաջինը, որ տեսնում էին իրենց տեսողություն ձեռք բերած աչքերը: Ինչպե՞ս կարող էին նրանք չսիրել Հիսուսին և չփառաբանել Նրան: Երբ Նա անցնում էր փոքրիկ բնակավայրերի և մեծ քաղաքների միջով, նմանվում էր այն կենարար հոսքին, որ կյանք և ուրախություն էր բերում իր հետ (Է. Ուայթ, Ապաքինման ծառայություն», էջ 19,20):

ՄԻԱՇԱԲԹԻ, հունվարի 26

Բուժող Մեսիան

Կարդացեք Եսայիա 53.4, Մատթեոս 8.17, Հովհաննես 9.1-3-ը: Ինչպե՞ս պետք է հասկանանք այս համարները: Ի՞նչ հարցեր են նրանք բարձրացնում: Ի՞նչ հույս են բերում: _____

_____

_____

Հնում հիվանդությունը համարում էին մեղավոր վարքագծի հետևանք: Նույնիսկ այսօր էլ ո՞վ չի հարցրել իրեն, թեկուզ մի ակնթարթ, թե արդյո՞ք իր կամ իրեն հարազատ մարդու հիվանդությունը մեղքի պատիժ չի համարվում: Հոբի գրքում նրա ընկերները ենթադրում էին, որ բոլոր դժբախտությունները, ներառյալ նրա հիվանդությունը, հետևանք էին նրա գաղտնի մեղքերի, այսինքն՝ Հոբի մեղսավորությունը ինչ-որ ձևով դարձել էր նրա բոլոր ձախորդությունների պատճառը: Ճիշտ նույն ձևով էլ Քրիստոսի աշակերտներն էին հասկանում կուրությունն իբրև մեղքի պատիժ: Ենթադրվում է, որ հիվանդությունը պահանջում է ոչ թե ախտորոշման հաստատումը և բուժումը, այլ՝ փրկագնումը: Մատթեոսը վկայակոչում է Եսայիայի՝ Մեսիայի մասին մարգարեությունը՝ հաստատելով, որ Քրիստոսը կատարեց այդ մարգարեությունը, և որ բուժումը Նրա մեջ կարելի է գտնել:

Հին հեթանոսական տարբեր ավանդություններում կային աստվածություններ, որոնք «պատասխանատու» էին ապաքինման համար, սակայն ոչ մի ավանդույթ չէր ենթադրում, որ աստվածությունն իրականում իր վրա է վերցնում մարդկանց տկարությունները: Եսայիան մարգարեացավ Փրկագնողի մասին, ով իր վրա է վերցնում մեր հիվանդությունները և կրում մեր մեղքերը: Այլ հինավուրց ավանդություններ նախատեսում էին փոխանորդական փրկագնում թագավորական ընտանիքի բարօրության համար: Փոխարինողներին զոհաբերում էին այնտեղ, ուր ապրում էր թագավորը, որպեսզի մեղմեն թագավորի դեմ ուղղված աստվածային դիտավորությունները՝ այդպիսով մեկ մարդուց մյուսի վրա տեղափոխելով չար փոխհատուցումը: Սակայն ոչ մի ավանդություն չէր նախատեսում, որ թագավորը մահանա իր հպատակների համար՝ որպես նրանց փոխանորդ:

Դա հենց այն էր, ինչի մասին ասել էր Եսայիան, և ինչը հաստատեց Մատթեոսը. երկնային Թագավորն Իր վրա է վերցնում մարդկային տկարությունները: Հետաքրքիր է նկատել, որ Եսայիա 53.4-ում

«ցավեր» թարգմանված բառը առաջացել է հրեական «խոլի» բառից, որի հիմնական իմաստն է «հիվանդություն», «տկարություն» կամ «ցավ»:

Հիսուսը գիտակցում էր, որ իր առաքելությունը ենթադրում է փրկության մասին քարոզը և սրտով կոտրվածների բժշկությունը: Ղուկաս 4.17-19: Նա շատ մարդկանց էր գրավում Իր սիրո, բնավորության ուժով: Ինչ-որ մեկը հետևում էր Նրան՝ հիանալով ճշմարտության պարզ և հեշտ հասկանալի շարադրանքով, մյուսները աշակերտներ էին դառնում՝ տեսնելով Նրա վերաբերմունքն աղքատների հանդեպ: Սակայն շատերը հետևում էին Քրիստոսին, որովհետև Նա հպվում էր նրանց և բուժում նրանց տկարությունները:

Մենք բոլորս ունենք մեր թուլությունները: Ինչպե՞ս կարող ենք սովորել աշակերտներ դարձնել մարդկանց՝ կարեկցանք դրսևորելով նրանց տկարությունների հանդեպ, կարեկցանք, որ այնքան լավ հասկանալի և ծանոթ է մեզ:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հունվարի 27

Բուժելով մարմինը

Ուսումնասիրե՛ք Մարկոս 2.1-12-ը: Ի՞նչ կարող ենք իմանալ ֆիզիկական հիվանդության և մեղավորության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապի մասին: Քննարկե՛ք և ձգտե՛ք որոշել, թե ինչ չի սովորեցնում մեզ այս պատմությունը: _____

_____

_____

_____

Հակասելով Աստվածաշնչի ուսմունքին՝ հին հունական իմաստասիրությունը բաժանում էր մարդկային գոյության հոգևոր՝ հոգի, և ֆիզիկական՝ մարմին հարթությունները: Հավատալով մարդկային հոգու անմահությանը՝ շատ հույներ արժեզրկում էին իրենց մարմինները: Քանի որ մարմինները համարվում էին ինչ-որ ժամանակավոր մի բան, որ անհետանում է ժամանակի հետ, անհամեմատ ավելի քիչ էին գնահատվում, քան անմահ հոգին:

Փաստորեն, հին աշխարհի մեզ հայտնի ամենահին գրվածքներից մեկում Պլատոնը նկարագրում է մահվան շեմին գտնվող իր ուսուցչին՝ Սոկրատեսին, ով երկար և պերճախոս դատողություններ է անում մարմնի փչացածության և նենգության մասին, այն մասին, որ մահից

հետո իր անմահ հոգին վերջապես ազատություն ձեռք կբերի և կարող է անել այն ամենը, ինչ իրեն թույլ չէր տալիս անել մարմինը:

Իհարկե, աստվածաշնչյան ուսմունքն արմատապես տարբերվում է վերոհիշյալ հայացքներից: Մարդկային մարմինները համարվում են Աստծո անմիջական ստեղծագործությունը, որոնք Նա հրաշալի է կառուցել: Սաղմոս 139.13, Եսայիա 44.2: Դեռ ավելին՝ մարմինը անբաժանելի է հոգուց: Մարմինը, բանականությունը և հոգին ընդամենը մարդկային անձնավորության կամ նրա էության տարբեր ոլորտներն են, որոնք, սակայն, անկախ գործող բաղկացուցիչներ են: Հետևաբար, այն, ինչ ազդում է մարմնի վրա, ազդում է նաև բանականության և հոգու վրա, անհատականության մյուս՝ փոխադարձ կապված ոլորտների վրա: Ուստի՝ երբ էլ որ Քրիստոսը բուժում էր, Նա ոչ միայն պարզապես վերացնում էր քաղցկեղը կամ բուժում սրտի հիվանդությունը, այլ վերափոխում էր մարդու ֆիզիկական, մտավոր և հոգևոր փորձառությունը:

Հիսուսը պարզապես մարմինը չէր բուժում: Քրիստոսը միշտ բուժում էր մարդուն ամբողջապես: Նրա համալիր մոտեցումը վկայում էր այն մասին, որ ֆիզիկական առողջությունն անխզելիորեն կապված է հոգևոր բարեկեցության հետ: Ֆիզիկական բժշկության միջոցով Նա հոգևոր վերափոխում էր կատարում: Հենց այդ էր Նրա նպատակը: Ի վերջո, ի՞նչ իմաստ ունի բուժել մարդկանց, ովքեր որոշ ժամանակ անց, միևնույնն է, մահանալու և մեկընդմիշտ կործանվելու են:

Չնայած երբեմն հիվանդություններն իսկապես կարող են մեղավոր սովորությունների անմիջական հետևանք լինել, մարդիկ, նույնիսկ նորածինները, շատ հաճախ հիվանդանում են առանց որևէ ակնհայտ պատճառի (բացառությամբ այն փաստի, որ մենք բոլորս անկում ապրած աշխարհի բնակիչներ ենք): Ինչո՞ւ շատ կարևոր է չմոռանալ այդ ցավալի ճշմարտության մասին, երբ ցանկանում ենք ծառայել հիվանդ մարդուն կամ նրան, ով ցավում է մտերիմ մարդու հիվանդության համար:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 28

Բանականության և մարմնի բուժումը

Հիսուսը աշակերտության էր բերում մարդկանց՝ ֆիզիկական ապաքինման և մտավոր վերականգնման միջոցով: Քրիստոսի այցելությունները հաճախ տառապում էին ինչպես ֆիզիկական, այնպես էլ

մտավոր տկարություններով: Ֆիզիկական վերականգնումն ինքնին երբեք վերջնական նպատակը չէր: Այդպիսի նպատակ միշտ եղել է աշակերտությունը: Բուժումը կարող է տալ կյանքի 20, 50, հնարավոր է նույնիսկ՝ 70 լրացուցիչ տարիներ, իսկ աշակերտությունն առաջարկում է Քրիստոսի հետ *հավիտենական* կյանք:

Ղուկաս 8.26-39-ում Գադարացիների երկրի դիվահարը խնդրեց Հիսուսին՝ իրեն թույլ տալու, որ հետևի Քրիստոսին: Սակայն Քրիստոսը հանձնարարեց նրան՝ վկայել իր ընտանիքին և իր քաղաքին: Այդպիսի հրաշալի ազատագրում ապրելով՝ նա կարող էր դառնալ Հիսուսի մեծ վկան:

Ուսումնասիրե՛ք Մատթեոս 6.19-34, Ա Պետրոս 5.7, Բ Կորնթացիս 4.7-10, Փիլիպեցիս 4.4-9 և Ա Հովհաննես 3.20-22-ը: Այս համարներում փոխանցված սկզբունքներն ինչպե՞ս կարող են հանգստություն տալ, ազատագրել մեղավորության և ամոթի զգացումից, որոնք ընկած են բազմաթիվ մտավոր հիվանդությունների հիմքում: _____

_____

_____

Ֆիզիկական հիվանդությունները երբեմն առաջանում են որևէ մտավոր երևույթի ազդեցությունից կամ խանգարումից: Բանականության և մարմնի միջև փոխադարձ կապը հիանալի հաստատված է բժշկագիտության կողմից: Անհանգստությունը որոշ մարդկանց նախատրամադրում է ստամոքսի հիվանդությունների: Տագնապը հանգեցնում է քնի խանգարումների: Անվերահսկելի բարկությունը սրտային հիվանդությունների պատճառ է դառնում: Մարդկանց սովորեցնելով հոգեկան առողջության սկզբունքները՝ անհրաժեշտ է լուսաբանել Աստծուն վստահելու կարևորությունը՝ տանելով նրանց հոգևոր նվիրվածության և աշակերտության:

«Յուրաքանչյուր նոր օր բերում է իր ծանրությունները, հոգսերը և դժվարությունները: Հանդիպելով միմյանց՝ մենք ավելի շատ խոսում ենք մեր դժվարությունների և փորձությունների մասին: Որքա՜ն անհարկի տագնապներ են տիրում մեզ: Որքա՜ն վախեր և անհանգստություններ են ներխուժում մեր կյանք: Եվ նրանք այնքան են ճնշում մեզ, որ տեսադաշտից կատարելապես կորցնում ենք գթասիրտ Փրկչին: Իսկ մեզ շրջապատող մարդիկ կարող են մտածել, թե մենք կարեկից և սիրող Փրկիչ չունենք, ով պատրաստ է լսել մեր խնդրանքները և մեզ համար դժվար ժամանակներում օգնություն ուղարկել» (Է. Ուայթ, Քայլեր դեպի Քրիստոսը», էջ 121):

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 29

Հարություն և կյանք

Այն աշխարհում, ուր վերջին խոսքը միշտ մահինն է, ծայրահեղ դեպքում՝ հիմա, ի՞նչ մեծ հույս են պարգևում մեզ այս համարները. Ղուկաս 7.11-17, Մարկոս 5.21-43, Հովհաննես 11. 37-44: __

Քաղաքական գործիչները, դերասանները և մարզիկները պետք է ինչ-որ բան առաջարկեն, որպեսզի մարդիկ հետևեն իրենց: Քաղաքական գործիչները դիմում են հիպնոսացնող հռետորաբանության և անիրականանալի խոստումների: Դերասաններն օգտագործում են որոշակի հույզեր առաջացնելու և լսարանի վրա ազդելու իրենց ընդունակությունները: Մարզիկները ցնցում են ամբոխին իրենց ֆիզիկական հմտություններով: Նախանձոտ դիտողները հետևում են նրանց՝ ափսոսալով, թե ինչու իրենք էլ չունեն այդպիսի վարպետություն:

Ի՞նչ է առաջարկում Հիսուսը: Նվազեցնել գործազրկության մակարդա՞կը: Բարձրացնել աշխատավա՞րձը: Անհավատալի հնարքնե՞ր գնդակով: Ցնցող վոկալային տվյալնե՞ր: Հոգեցունց ներկայացումնե՞ր: Ո՛չ: Հիսուսն առաջարկում է այն, ինչ ոչ մեկը չի կարող առաջարկել աշխարհում՝ հավիտենական կյանք՝ Նոր երկրում: Արդյո՞ք ինչ-որ բան նշանակություն ունի՝ համեմատած դրա հետ:

Այն ժամանակ, երբ հեռուստախանութները և գովազդը հարձակվում են մեր գիտակցության վրա իրենց ոչ ճշմարտանման առաջարկություններով, Հիսուսի առաջարկությունն անհամեմատ ավելի լավն է. Նա առաջարկում է հավիտենական կյանքը անհատույց, առանց լրացուցիչ վճարի՝ փաթեթավորման կամ առաքման համար: Թերահավատները հավանաբար կծաղրեն այսպիսի աննախադեպ առաջարկությունը: Հավակնորդները կզբաղվեն դրա էժան կեղծիքները պատրաստելով՝ հոգու անմահության մասին սատանայական տեսակետը: Հնարավոր գնորդները խնամքով կուսումնասիրեն առաջարկությունը: Այդ պատճառով էլ թերահավատների հետ հանդիպումներից առաջ Հիսուսը հոգում էր երեք լավ հայտնի օրինակների մասին, մերկացնում էր կեղծիքը և բավարարում անկեղծ որոնողների պահանջները: Հարություն տալով Հայրոսի աղջկան, այրի կնոջ որդուն և Ղազարոսին՝ Քրիստոսն ապացուցեց, որ դա արդեն չափազանց լավ

է իրական լինելու համար: Հիվանդությունները և դժբախտ դեպքերը ժամանակավորապես կարող են գերակշռել, սակայն վերջնական հաղթանակը հավիտենական կյանքինն է: Միշտ չէ, որ մեր խնդրանքով բժշկությունէ լինում, սակայն հավիտենական կյանքը երաշխավորված է բոլոր նրանց համար, ովքեր ընդունում են Հիսուսին՝ որպես իրենց Փրկիչ:

Այսօր մենք զգում ենք այդ նույնը: Հաճախ այդպես էլ չի լինում այն բժշկությունը, որին մենք սպասում ենք: Մարդիկ տարիներով տառապում են այն տկարություններից, որոնք ոչ միայն չեն բուժվում, այլև բարդանում են: Մյուսներն էլ մահանում են՝ չնայած յուղով օծմանը և աղոթքներին: Մենք չունենք այն հարցերի պատասխանները, թե ինչու որոշ դեպքերում լինում է բուժում, իսկ որոշ դեպքերում՝ ոչ:

Սակայն կա մի ավելի լավ բան, քան հրաշալի ապաքինումն է: Դա հարության և հավիտենական կյանքի խոստումն է երկրային պատմության վերջում, երբ Հիսուսը կգա՝ «Իսկ թագավորությունը առնելու են Բարձրյալի սուրբերը և ժառանգելու են թագավորությունը մինչև հավիտյան և մինչև հավիտյանս հավիտենից» (Դանիել 7.18):

Ինչո՞ւ մեզ համար այդքան մեծ նշանակություն ունի հավիտենական կյանքի մասին խոստումը: Որտե՞ղ կլինեինք մենք առանց դրա: Կունենայի՞նք արդյոք գոնե ինչ-որ բանի հույս, առանց այդ խոստման:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, հունվարի 30

Քրիստոսի բժշկության ժառանգությունը

Կարդացե՛ք Գործք 3.1-19, 5.12-16, 9.36-42, 20.7-10, Ա Կորնթացիս 12.7-9, 28-31, Հակոբոս 5.13-16-ը: Ժամանակակից քրիստոնյաներն ինչպե՞ս պետք է գնահատեն բժկության ծառայության կարևորությունը նորկտակարանային եկեղեցու համար:

_____

_____

_____

Առաջին հարյուրամյակի աշակերտներն իրենց աչքերով տեսան Քրիստոսի խոստումներն այն մասին, որ իրենք «սրանցից էլ ավելի մեծ բաներ» կտեսնեն (Հովհաննես 1.50-ը համեմատել Հովհաննես 5.20 և 14.12-ի հետ): Վաղ քրիստոնեության ամենանշանավոր աշակերտների՝ Պետրոսի և Պողոսի ծառայություններն ուղեկցվում էին հրաշալի

բուժումներով և հարությամբ: Այդ իրադարձությունները նշանակալի դեր խաղացին վաղ եկեղեցու աճի գործում: Հրաշալի բուժումներով հաստատվող Աստծո ներկայությունն ազդեց բազմաթիվ կրոնական առաջնորդների վրա, և նրանք ընդունեցին Քրիստոսին: Նրանց համայնքը հաճախ հետևում էր նրանց:

Նոր աշակերտները շատ դեպքերում չէին հասկանում, թե որն է աստվածային նպատակը: Սիմոնը փորձեց գնել հրաշալի զորությունը՝ դրանով իսկ մերկացնելով իր եսասիրական դրդապատճառները: Գործք 8.9-25: Սակայն մեծամասնությունը հասկանում էր, որ այդ հրաշքների նշանակալիությունը հիմնվում էր այն փաստի վրա, որ դրանք բացահայտում էին Աստծո ներկայությունը: Աստվածային զորության այդ դրսևորումները վկայում էին Աստծո գոյության և այն մասին, որ Նա արժանի է փառաբանության:

Չնայած Քրիստոսը երկինք համբարձվեց Իր աշակերտների ծառայության շնորհիվ, ամբոխներն առաջվա նման հետևում էին Նրան: Նրանք շարունակում էին Հիսուսի սկսած առաքելությունը: Նրանք մարմնավորում էին Հիսուսի տեսիլքը:

Կասկած չի առաջացնում այն փաստը, որ առողջությունը Քրիստոսի Եկեղեցու մշտական հոգատարության առարկան էր, իսկ բժշկական ծառայությունը՝ նրա մշտական աշխատանքը: Բժշկության ծառայությունը իր տեղն ունի հոգևոր պարգևների ցուցակում: Սուրբ Գրքում խորհուրդներ կան այն մասին, թե ինչպես օգնել հիվանդ մարդկանց Աստծո բժշկող ուժի շնորհով: Այդ պարգևները պետք է օգուտ բերեն հավատացյալներին մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ արդեն, Իր անձնական ներկայության շնորհիվ, այլևս չի լինի դրանց կարիքը: Եկեղեցու պատմությունը վկայում է հավատացյալ մարդկանց մասին, ովքեր տարբեր ժամանակաշրջաններում իրենց նվիրաբերել են բժշկության ծառայությանը: Անտարակույս, մարդկային տառապանքների թեթևացումը կարևոր դրդապատճառ էր: Սակայն ուրիշների համար բժշկությունը դարձավ անբողջ Ավետարանը ճանաչելու և ընդունելու առաջին քայլը:

ՈՒՐԲԱԹ, հունվարի 31

Հետագա ուսումնասիրության համար

Կարդացե՛ք Ղուկաս 18.35-43, 13.10-17,14.1-6: Հովհանես 6.1,2, Մարկոս 5.5-7, 54-56, 7.31-37, 8.22-26, Մատթեոս 8.1-17, 12.15-23-ը:

Է. Ուայթի «Ապաքինության ծառայություն» գրքից՝ հետևյալ գլուխները՝ «Քրիստոսը մեր օրինակն է», էջ 17-21, և «Հոգու ապաքինում», էջ 73-85, «Բժշկական ծառայություն» գրքից՝ «Աստվածային ծրագիրը բժշկական-ավետարանչական աշխատանքում», էջ 25-29:

«Կաթվածահարը Քրիստոսի մեջ գտավ ինչպես հոգու, այնպես էլ մարմնի բժշկություն: Նա հոգեկան առողջության կարիք ուներ մինչև այն պահը, երբ կարող էր իսկապես գնահատել մարմնավոր առողջությունը: Մինչև ֆիզիկական տկարությունը բուժելը՝ Քրիստոսը հոգու մխիթարություն է տալիս և նրան ազատագրում մեղքից: Այդ դասը չի կարելի անտեսել: Այսօր հազարավոր մարդիկ են տառապում ֆիզիկական հիվանդություններից: Նրանք, նման այդ հաշմանդամին, ծարավի են լսելու՝ «Ներվում են քեզ քո մեղքերը»: Մեղքի բեռը՝ իր անհանգիստ և անհագուրդ ցանկություններով, ընկած է մարդկային հիվանդությունների հիմքում: Նրանք չեն կարող թեթևություն գտնել այնքան ժամանակ, քանի դեռ չեն եկել հոգիների Բժշկի մոտ: Այն խաղաղությունը, որ կարող է տալ միայն ու միայն Նա, կվերականգնի մտավոր ուժերը և մարմնի ամրությունը:

«Մեծ էր նախկին հաշմանդամի ուրախությունը, երբ նա վերադարձավ տուն՝ իր ընտանիքի մոտ՝ հեշտությամբ տանելով մահիճը, որի վրա դեռ վերջերս իրեն զգուշորեն հանեցին այդտեղից… Այդ ընտանիքը շնորհակալության ցնծալի երգ հղեց երկինք, և Աստված փառավորվեց Իր Որդում, ով վերադարձրեց նախկին կաթվածահարի հույսը և ուժերը: Այդ մարդը և նրա ընտանիքը պատրաստ էին իրենց կյանքը տալ հանուն Հիսուսի» (Է. Ուայթ, «Ապաքինման ծառայություն», էջ 77-79):

Հարցեր քննարկման համար

1. Ինչպե՞ս կարող է ապաքինման ծառայությունը բացել Ավետարանի համար փակ սրտերը և մտքերը: Ինչպե՞ս կարող են քրիստոնյաներն իրենցից վանել այն միտքը, թե բժշկությունն ինքնանպատակ է:
2. Ինչպե՞ս կարող են հիվանդանոցների հետ չկապված եկեղեցիները մասնակցել բժշկության ծառայությանը:
3. Ինչպե՞ս կարող են ապաքինման ծառայության մեջ ներգրավված քրիստոնյաները խուսափել «բուժարարների» համբավից:
4. Ի՞նչ պետք է ասենք մենք հնարավոր աշակերտներին, ովքեր, կարդալով Աստվածաշնչում գրված բուժումների մասին, գալիս են մեր

եկեղեցիները և հիվանդանոցները՝ բժշկության որոնումներով, որը տեղի չի ունենում: Ի՞նչ կարող ենք պատասխանել նրանց: Ի՞նչ կարող ենք մենք պատասխանել ինքներս մեզ՝ փորձելով հասկանալ այդ իրավիճակները: Ի՞նչ պատասխաններ կարելի է գտնել Աստվածաշնչում, որ կարող են սատարել մեզ այդպիսի ժամանակներում:

ԾԱՌԱՅԵԼՈՎ «ՀԱՍԱՐԱԿ» ՄԱՐԴԿԱՆՑ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ղուկաս 2. 21-32, Մատթեոս 15.32-39, Մատթեոս 16.13-17, Ղուկաս 12.6,7 և 13.1-5, Հակոբոս 2.1-9:

Հիշելու համարը.

«Գալիլեացիների ծովի մոտով անցկենալիս, տեսավ Սիմոնին և նրա եղբայր Անդրեասին, որ ուռկան էին գցում ծովը. որովհետև ձկնորս էին: Եվ Հիսուսը նրանց ասաց. Իմ հետևից եկեք, և ես կանեմ ձեզ, որ մարդկանց որսորդ լինեք: Եվ նրանք շուտով իրանց ուռկանները թողեցին և նրա հետևից գնացին» (Մարկոս 1.16-18):

Քրիստոսի մահը դարձավ մեծ հավասարար. այն ցույց տվեց, որ մենք բոլորս Աստծո շնորհի կարիքն ունեցող մեղավորներ ենք: Խաչի լույսի ներքո խորտակվում են էթնիկական, քաղաքական, տնտեսական և սոցիալական խոչընդոտները: Սակայն, ավետարանչական ծառայություն կատարելով, երբեմն մենք մոռանում ենք այդ կարևոր ծառայությունը և ձգտում ենք Աստծո մոտ բերել գլխավորապես այնպիսի մարդկանց, ովքեր աշխարհի աչքում համարվում են «պատվավոր» կամ «մեծ»:

Սակայն Հիսուսն այլ կերպ վարվեց: Նա տեսավ աշխարհային պատվի ու մեծության անմտությունն ու ունայնությունը: Փաստորեն, «ամենահաջողակ» մարդիկ, ինչպիսիք էին հարգված փարիսեցիները, հարուստ սադուկեցիները և հռոմեական ազնվականությունը, Նրան ամենից շատ տհաճություններ պատճառեցին: Ի տարբերություն նրանց, «սովորական» մարդիկ՝ հյուսները, ձկնորսները, հողագործները, տնային տնտեսուհիները, հովիվները, զինվորները և ծառաները, պատրաստակամորեն հետևում էին Նրան ու ընդունում:

Համեստ սկիզբ

Կարդացե՛ք Ղուկաս 2.21-32, Մարկոս 6.2-4 և Ղևտացիս 12.8-ը: Ի՞նչ են ասում մեզ այդ տեքստերն այն ընտանիքի տնտեսական վիճակի մասին, ուր ծնվեց Հիսուսը: Ի՞նչ ազդեցություն գործեց դա Նրա ծառայության վրա: _____

_____

_____

Հովսեփի և Մարիամի բերած մաքրման զոհը պարզորոշ ցույց տվեց նրանց աղքատությունը: Այդ ավանդությունը գալիս էր այն ժամանակներից, երբ տրվեց Ղևտացիս 12.8-ում գրված Մովսեսի օրենքը: Տվյալ դեպքում այն պահանջում էր գառ զոհաբերել: Սակայն աղքատ մարդիկ ազատված էին դրանից: Նրանց համար այլ տարբերակ էր նախատեսված: Եթե հանգամանքները թույլ չէին տալիս ավելին, գառը կարելի էր փոխարինել տատրակներով կամ աղավնիներով: Եվ այսպես, հենց ամենասկզբից, մսուրքում ծնվելու պահից մինչև ընծաները, որ կարող էին զոհաբերել Նրա ծնողները, Հիսուսը ներկայացված է որպես Մեկը, ով մարդկային մարմին հագավ և ապրեց աղքատ, «հասարակ» մարդկանց տանը: Փաստորեն, հնէաբանությունը նույնպես, դատելով ամեն ինչից, հաստատում է այն, որ Նազարեթ քաղաքը, որտեղ Հիսուսն անց է կացրել Իր մանկությունը, համեմատաբար աղքատ և աննշան վայր էր: Եվ թեպետ հյուսնի գործը հարգի արհեստ էր, այն թույլ չէր տալիս մուտք ունենալ «բարձրաշխարհիկ» հասարակություն:

«Հիսուսի ծնողներն աղքատ էին և նրանց բարեկեցությունը կախված էր ամենօրյա աշխատանքից: Հիսուսը աղքատություն, անճնազոհություն և կարիք վերապրեց: Եվ դա նույնպես Նրան հետ պահեց չարիքից: Նրա կյանքում չեղան պարապ րոպեներ, որոնք գայթակղությունների համար պայմաններ են ստեղծում: Նրա կյանքում չկային աննպատակ անցկացրած ժամեր, որոնք ճեղք են թողնում անհոգ և արատավոր մտքերի համար: Նա խուսափում էր գայթակղություններից այնքանով, որքանով դա հնարավոր էր: Ո՛չ շահը, ո՛չ բավականությունները, ո՛չ գովասանքը, ո՛չ դատապարտությունը չէին կարող հարկադրել Նրան համաձայնելու չար գործի: Նա ուներ ոչ միայն չարը տարբերելու իմաստնություն, այլ նաև դրան դիմադրելու կամք» (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 72):

Ստեղծված ամենայն ինչի Արարիչը (տե՛ս Հովհաննես 1.1-3) եկավ մարդկանց մոտ ոչ պարզապես որպես Մարդ, Նորածին, ինչն արդեն իսկ աներևակայելի է, այլ նաև ապրեց համեմատաբար աղքատ ընտանիքում: Ինչպե՞ս պետք է արձագանքենք այդ բավականին անըմբռնելի երևույթին: Ինչո՞ւմ պետք է արտահայտվի մեր միակ հնարավոր արձագանքը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, փետրվարի 3

Վերափոխելով «սովորական» մարդկանց

Կարդացե՛ք Հովհաննես 2.1-11 և Մատթեոս 15.32-39-ը: Ինչպե՞ս էր Հիսուսն օգտագործում առօրյա ցանկություններն ու կարիքները, որպեսզի մարդկանց աշակերտներ դարձնի և վերափոխի նրանց կյանքը: _____

_____

_____

«Հասարակ» մարդիկ զուրկ չեն բնական ֆիզիկական, հուզական և սոցիալական պահանջմունքներից: Նրանք կարիք ունեն սննդի, անձնական արժեքավորության և բարեկամական հարաբերությունների: Հիսուսը հասկանում էր այդ բոլորը և մտնում էր սոցիալական կապերի մեջ, որոնք Նրան հնարավորություն էին ընձեռում հասնելու մարդկանց՝ այդ համընդհանուր ցանկությունների և պահանջների միջոցով: Խաղողի որթից խմորման չենթարկված գինի կդարձներ ջուրը, թե ձկնորսներին՝ քարոզիչներ (Մարկոս 1.16-18), Հիսուսը միշտ սովորականը վերածում էր անսովորի: Դիտողները հաճախ հարցականի տակ էին դնում Նրա լիազորությունները և իրավունքները (Մարկոս 6.3): Նրանք հարցականի տակ էին դնում որևէ ցուցադրականի բացակայությունը Նրա գործողություններում: Եվ քանի որ նրանք ծարավի էին ինչ-որ գերբնականմի բանի, ապա ուշադրություն չէին դարձնում նրան, ինչը սովորական էր թվում,և իրենց համար ընտրում էին հավիտենական կործանման տանող ուղին:

Որքա՜ն հաճախ էր Հիսուսն ընտրում մարդկանց, ովքեր համարվում էին սովորական այն պատճառով, որ, զրկված լինելով անկախությունից, պատրաստ էին ամբողջովին Աստծուն վստահել իրենց հաջողությունը: Իրենց տաղանդներին, ընդունակություններին և նվաճումներին ապավինող մարդիկ հաճախ չեն կարողանում զգալ մի ինչ-որ ավելի մեծ բանի կարիքը, քան իրենք են: Ինչպիսի՜ սարսափելի խաբեու-

թյուն: Քրիստոսի շատ ժամանակակիցներ բարձրագույն տեսական գիտելիքներ ունեին, լավ դիրք էին զբաղեցնում հասարակության մեջ կամ հարուստ էին: Այդուհանդերձ, նրանց անունները վաղուց մոռացվել են: Սակայն մենք հիշում ենք սովորական մարդկանց՝ հողագործներին, ձկնորսներին, բրուտներին, տնային տնտեսուհիներին, հյուսներին, հովիվներին, ծառաներին, ովքեր վերափոխվեցին և դարձան Քրիստոսի նշանավոր վկաները:

Մենք բոլորս հակված ենք հիացմունքով նայելու շատ հաջողակներին և շատ հարուստներին. արդյո՞ք այդպես չէ: Որքանո՞վ է այդ հակումը դրսևորված ձեր մեջ: Ինչպե՞ս կարող եք սովորել մշտապես հիշել բոլոր մարդկանց արժեքավորության մասին՝ անկախ նրանց կարգավիճակից, հռչակից կամ հարստությունից:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 4

Անկատար ձկնորսի կանչվածությունը

Նոր Կտակարանում Պետրոսը ներկայացված է որպես ամենաազդեցիկ աշակերտներից մեկը: Փաստորեն, վերջին հաշվով, նա դարձավ *մարդկության ողջ պատմության մեջ* ամենաազդեցիկ մարդկանցից մեկը: Ահա սա է փոխվելը «սովորական» մարդուց միանգամայն անսովորի:

Կարդացե՛ք հետևյալ համարները: Ինչպե՞ս են դրանք օգնում մեզ՝ հասկանալու, թե ինչ ձևով արմատապես փոխվեց Պետրոսը՝ չնայած իր թերություններին:

Ղուկաս 5.1-11: Ի՞նչ է ասում այստեղ Պետրոսը, որ վկայում է իր՝ Քրիստոսի առջև բաց լինելու և իր կյանքում Նրա անհրաժեշտության մասին: Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ մեր կյանքում զարգացնենք այդ գիծը: _____

_____

Մատթեոս 16.13-17: Ի՞նչ են ասում մեզ այս համարները Պետրոսի և նրա՝ Սուրբ Հոգու առջև բաց լինելու մասին: _____

_____

_____

Մատթեոս 26.75: Պետրոսին վերաբերող ի՞նչ ենք տեսնում մենք այստեղ, և ինչպե՞ս Աստված կարողացավ օգտագործել նրան: _____

_____

Անկասկած, Հիսուսը շատ ժամանակ անցկացրեց Պետրոսի հետ, և վերջինս բազմաթիվ մեծ փորձառություններ ունեցավ Նրա հետ: Չնայած նա «սովորական» ձկնորս էր՝ բազմաթիվ թերություններով, սակայն Հիսուսի հետ անցկացրած ժամանակի շնորհիվ արմատապես վերափոխվեց, նույնիսկ այն բանից հետո, երբ ցավալի սխալներ թույլ տվեց, ներառյալ Հիսուսին երեք անգամ ուրանալը, ինչպես կանխագուշակել էր Հիսուսը:

Պետրոսի պատմությունը շատ բան է սովորեցնում մեզ, այն պահին, երբ նա առաջին անգամ գիտակցեց Հիսուսի ով լինելը, նաև գիտակցեց և ընդունեց իր թերությունները: Հետևաբար, շնորհիվ անսահման համբերության, Հիսուսը կարողացավ վերափոխել Պետրոսի անկատար բնավորությունը, և նա դարձավ պատմության փոփոխությունների վրա ազդող անձնավորություն:

Ինչո՞ւ մենք իրավունք չունենք պնդելու, որ ինչ-որ մեկը կանչված չէ փրկության համար: Ինչո՞ւ է մեզ համար այնքան հեշտ ուրիշներին դատելը:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 5

Երկնային գնահատական

Մի ավետարանիչ հպարտությամբ (հնարավոր է, նույնիսկ՝ պարծենալով) նշում էր, որ իր դասընթացներին հաճախողները բարձր հասարակությունից են: (Հուսանք, որ նա ուրախանում էր նաև «սովորական» մարդկանց այցելության համար)**:**

Սակայն Քրիստոսի համար գոյություն չուներ դասակարգային տարբերություն. ոչ մեկը նրա համար «սովորական» չէր, յուրաքանչյուրը բացառիկ էր: Զարմանալի չէ, որ Հիսուսը դիպչում էր բազմաթիվ սրտերի հասարակ կենսական պատմություններով և ուղղակի զրույցով: Նրա շարժումների մեջ ոչ մի բան չէր ենթադրում, թե ինչ-որ մեկն անարժան է Նրա ուշադրությանը: Ժամանակակից աշակերտները նույնպես պետք է ձգտեն չստեղծել այնպիսի տպավորություն, թե ավետարանչության գործում որոշ մարդիկ իրենց համար ավելի գերադասելի են, քան մյուսները:

Կարդացե՛ք Ղուկաս 12.6,7 և 13.1-5-ը, Մատթեոս 6.25-30-ը: Ի՞նչ են ասում մեզ այս համարները յուրաքանչյուր մարդու արժեքի մասին: Հեշտ է ասել, որ մենք հավատում ենք դրան, սակայն ինչպե՞ս կարող ենք հայտնվել մեղավոր վիճակում՝ ցույց

տալով այն տարբերությունները, որոնք մեկընդմիշտ արմատախիլ արվեցին Գողգոթայի վրա: _____

_____

_____

Ճնճղուկները ամենաէժան թռչուններն էին շուկայում: Այդ թռչունների մեկ զույգը կարելի էր գնել մեկ դինարով, որն ամենափոքր և առավել քիչ արժեք ունեցող՝ հռոմեական պղնձե դրամն էր (Մատթեոս 10.29): Սակայն, չնայած դրան, ամենասովորական ճնճղուկներն անգամ մոռացված չեն երկնքում:

Ուրեմն, ինչքա՞ն ավելի արժեքավոր են մարդիկ, ում համար մահացավ Քրիստոսը: Քրիստոսը մահացավ մեզ համար, այլ ոչ՝ թռչունների: Խաչը հաստատում է այն ճշմարտությունը, որ մենք չենք կարող որոշել յուրաքանչյուր մարդու «անսահման արժեքը» (փոխառված է այն արտահայտությունից, որը հաճախ օգտագործում էր Է. Ուայթը), չնայած մեր հասարակական վիճակին, մի կարգավիճակ, որը հաճախ հիմնվում է բացառապես մարդկային հորինվածքների, այնպիսի տեսակետների և նշանների վրա, որոնք ոչ մի նշանակություն չունեն երկնքում կամ նույնիսկ բացահայտորեն հակասում են երկնային սկզբունքներին:

Է. Ուայթը գրել է, որ «Քրիստոսը կմահանար նույնիսկ մեկ հոգու համար, հանուն նրա հավիտենական կյանքի» («Վկայություններ Եկեղեցու համար», հտ. 8, էջ 73): Նույնիսկ մեկ հոգու համար: Մտորեք այս աներևակայելի, մեծագույն հայեցակարգի կարևորության մասին: Ի՞նչ ազդեցություն պետք է թողնի դա ոչ միայն շրջապատողների հետ մեր հարաբերությունների, այլ նաև մեզ վրա:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, հունվարի 6

Առանց դասակարգ հասարակություն

Հնարավոր է, վաղ քրիստոնեության սոցիալական ամենագրավիչ բնորոշիչը դասակարգային տարբերությունների բացակայությունն էր: Տարանջատող պատերը խորտակվեցին Ավետարանի զորության առաջ: Սովորական մարդը ցնծում էր Քրիստոսով: Քրիստոսը վերափոխում էր ոչնչով աչքի չընկնող մարդկանց՝ դարձնելով նրանց արտասովոր, եզակի անձնավորություններ: Հյուսները, հարկ հավաքողները, քարտաշները, ղեկավարները, ծառաները, քահանաները,

հույներն ու հռոմեացիները, տղամարդիկ ու կանայք, հարուստներն ու աղքատները՝ բոլորը հավասարվում էին Քրիստոսի շնորհի արքայությունում: Քրիստոնեական համայնքը իրականում պետք է լինի «առանց դասակարգ հասարակություն»:

Ի՞նչ է ասում բերված համարներից յուրաքանչյուրը մեր ընդհանուր մարդկության մասին: Ուշադրություն դարձնելով այն ժամանակվա մշակույթի վրա, մշակույթ, որում ապրել են Աստվածաշնչի հեղինակներն իրենք, ինչո՞ւ նրանց համար այնքան էլ հեշտ չէր ընկալել այդ կարևոր հայեցակարգը:

Գաղատացիս 3.28,29 _____

_____

Հակոբոս 2.1-9 _____

_____

Ա Պետրոս 1.17, 2.9 _____

_____

Ա Հովհաննես 3.16-19 _____

_____

Կարդացե՛ք Գործք 2.43-47, 4.32-37-ը: Ի՞նչ ձևով էին վաղ քրիստոնյաները գործնականում կիրառում համընդհանուր ընդունման սկզբունքը: Այն գաղափարը, որ Աստված սիրում է սովորական, հասարակ մարդկանց, ինչպե՞ս էր նպաստում հոգու վերածննդին, որը տեղի էր ունենում վաղ քրիստոնեական եկեղեցում: Միևնույն ժամանակ մենք պետք է հարցնենք մեզ. որքանո՞վ է հաջողվում մեզ՝ անհատապես և կոլեկտիվ, կիրառել այդ սկզբունքները մեր՝ աշխարհին ծառայելու մեջ: Ի՞նչն է խանգարում մեզ՝ զարգանալու այդ կարևոր ոլորտում:

ՈՒՐԲԱԹ, փետրվարի 7

Հետագա ուսումնասիրության համար

է. Ուայթի «Դաստիարակություն» գրքից կարդացեք «Ողջ կյանքի գործ» գլուխը, էջ 269,270, «Ավետարանչություն» գրքից՝ «Աշխատանք միջին դասակարգի համար» գլուխը, էջ 564-566:

«Ավարտվող ավետարանչությունը հսկայական տարածք է ընդգրկում. այսօր, առավել քան երբևէ, այդ աշխատանքը օգնականների կարիք ունի: Երիտասարդները և տարեցները կկանչվեն Ուսուցչի կողմից՝ դաշտերից, այգիներից և արհեստանոցներից, որպեսզի տանեն

Նրա լուրը: Նրանց մեջ կան այնպիսիները, ովքեր հնարավորություն չեն ունեցել կրթություն ստանալու, սակայն Քրիստոսը նրանց մեջ տեսնում է ընդունակություններ՝ Իր նպատակները իրականացնելու համար: Եթե նրանք նվիրաբերեն իրենց սրտերը և դառնան Նրա աշակերտները, Նա պիտանի կդարձնի նրանց՝ Իր հետ համագործակցելու համար» (Է. Ուայթ, «Դաստիարակություն», էջ260, 270):

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ Հիսուսն այդպիսի հաջողությամբ աշակերտներ դարձրեց հասարակ մարդկանց: Ինչո՞ւ հարուստ և նշանավոր մարդիկ պատրաստ չէին ընդունելու Նրա լուրը:Հասարակ մարդկանց սրտերը նվաճելու գործում ինչպիսի՞ դեր խաղաց այն փաստը, որ Հիսուսը դաստիարակվել էր հասարակ, համեստ ընտանիքում: Ինչքանո՞վ արդյունավետ կլիներ Նրա ծառայությունը միջին դասակարգի մարդկանց համար, եթե Նա գար որպես թագավորական գահի ժառանգորդ կամ հարուստ հողատեր:
2. Դասարանում կարդացե՛ք Ա Կորնթացիս 1.26-29-ը: Ի՞նչ է շեշտադրվում այս համարներում: Ուշադիր կարդացե՛ք Պողոսի խոսքերը, երբ նա գրում է այն մասին, որ «աշխարհիս տկարներին Աստված ընտրեց, որ ամաչեցնի զորավորներին»: Ի՞նչ է նշանակում դա: Ինչպե՞ս պետք է հասկանանք այդ ճշմարտությունը քրիստոնեության համատեքստում: Այդ համարներում ինչպե՞ս է ցույց տրված, թե ինչքան են ծռված և աղավաղված այս աշխարհի ճանապարհները: Ինչպե՞ս կարող ենք մենք համոզվել, որ ինքներս չենք հայտնվել այդ սխալ ճանապարհներում:
3. Ի՞նչ կարող է անել Աստվածաշնչի ուսումնասիրության մեր խումբը, որպեսզի դառնա ավելի բաց և ընկերասեր հասարակ մարդկանց հանդեպ: Ինչո՞ւ պետք է ավետարանիչները կենտրոնանան ավելի շատ գործնականի, քան տեսության վրա, հատկապես, եթե անհրաժեշտ է գործ ունենալ խոցված, կարիքավոր մարդկանց հետ:

ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՄԵՐԺՎԱԾՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Մատթեոս 21.28-32: Հովհաննես 8.1-11: Մարկոս 5.1-20: Հովհաննես 4.5-30: Մատթեոս 9.9-13:

Հիշելու համարը.

«Կինն էլ իր կուժը թողեց և գնաց քաղաք, և մարդկանց ասաց. եկեք տեսեք մի մարդ, որ ինձ ասաց բոլորը, ինչ որ գործել եմ. արդյոք նա՞ է Քրիստոսը» (Հովհաննես 4.28,29):

Սարսափելի պայմաններում մեծացած կինը, որ 15 տարեկանին մոտ երկու արտամուսնական երեխա էր ունեցել, բանտում նստած, դատին էր սպասում: Նա սպանել էր սոցիալական աշխատողին, որ եկել էր վերցնելու իր երեխային: Այդ փոքրիկը միակ մարդն էր, ով, ինչպես ինքն էր զգում, երբևէ սիրել է իրեն:

Առանց մոր, հոր, ամուսնու, հարազատների կամ նույնիսկ ընկերոջ՝ նա լիակատար միայնության մեջ հայացքը հառել էր անհույս ապագային: Սակայն հովվի այցելության շնորհիվ՝ հույսը կորցրած այդ երիտասարդ կինը իմացավ, որ, չնայած իր բոլոր սխալներին, անհուսալի իրավիճակին, չնայած նրան, ինչ պատկերվում էր նրա առջև՝ հորիզոնին, Քրիստոսը սիրում և ներում է իրեն: Անկախ այն բանից, թե ինչպես էր վերաբերվում այդ աղջկան հասարակությունը, նա իր համար բացեց Աստծո հավերժական սերը: Այդ մերժված աղջիկը իմաստ և նպատակ ձեռք բերեց Իր Տիրոջ մեջ, Ում սերը և Նրա կողմից ընդունվելը թռիչք գործեցին հասարակական բոլոր չափանիշների և սովորույթների վրայով:

Հատակում

Հասարակությունը աստիճանակարգ է հաստատում: Հարուստները կամ լավ կրթություն ստացած մարդիկ սովորաբար գտնվում են ամենավերևում:

Լավ, բարեխիղճ քաղաքացիները, «սովորական» մարդիկ, սոցիալական սանդղակում առավել հաճախ միջին մակարդակում են: Եվ մնում են նրանք, ովքեր ամենահատակում են, այնպիսիք, ինչպիսիք են մարմնավաճառները, թմրամոլները, հանցագործները, անօթևանները և այլն: Քրիստոսի ժամանակներում այդ ցուցակի մեջ էին մտնում նաև բորոտները և հարկահավաքները:

Կարդացե՛ք Մատթեոս 21.28-32 և Ղուկաս 15.1-10-ը: Ի՞նչ են ասում այս հատվածներն այն մասին, թե ինչպես էր վերաբերվում Քրիստոսը մերժվածներին: _____

_____

_____

_____

_____

Այդ ինչպե՞ս ստացվեց, որ երկնային թագավորության ճանապարհին հասարակության թափթփուկները առաջ անցան ինքնագոհ կեղծավորներից: Ի՞նչ կարողացան տեսնել այդ մերժված մարդիկ, որ բաց թողեց վերնախավը: Ինչո՞ւ Հիսուսն առավել հաջողությամբ նվաճում էր այդ ցածր, քան բարձրագույն խավի սրտերը:

Մեղավոր հաճույքների արդյունքում կոպտացած, իսկ երբեմն կոպտության և անվայելուչ պահվածքի մեջ արհեստականորեն թաղանթավորված հասարակության թափթփուկները, այնուամենայնիվ, ավելի ընկալունակ գտնվեցին, քան բարձր հասարակության հպարտ, մեծամիտ և ինքնագոհ ներկայացուցիչները: Մերժվածների արտաքին հանդգնության տակ հաճախ հուզական դատարկություն է թաքնված, որ բնորոշվում է ցածր ինքնագնահատականով: Հաճախ, դեռահաս տարիքում, այդպիսի մարդիկ բացահայտ խռովություն են բարձրացնում՝ անզուսպ կերպով փորձելով հաստատել իրենց անձնավորության նույնականացումը, որպեսզի փոխհատուցեն անվտանգության ներքին բացակայությունը: Այդ նույնականացումը նպատակամղված ձևով հաստատվում է այն մարդկանց ցանկությունների հետ հակազդեցությունների մեջ, ովքեր երիտասարդ մարդու համար հեղի-

նակավոր դեմքեր («ղեկավարներ») են համարվում. առավել հաճախ դրանք ծնողներն են:

Հիսուսը ժամանակ չկորցրեց այն բանի վրա, որ հարված հասցնի նրանց՝ առանց այն էլ չափազանց ցածր ինքնագնահատականին: Ընդհակառակը, Նա ստեղծում էր անձնական արժեքի և նշանակալիության նորոգված զգացումներ: Քրիստոսը հաստատեց այդ զգացումը հետևողականորեն դրսևորված սիրո հիմնաքարի վրա՝ ցուցադրելով մերժվածների ընդունումը, որոնց սրտերը հաճախ հալվում էին Նրա ջերմությունից:

Ինչպիսի՞ն է ձեր անձնական վերաբերմունքը այն մարդկանց հանդեպ, ովքեր ձեր հասարակության մեջ թափթփուկներ են համարվում: Անկեղծ եղեք. ձեզ համեմատելով նրանց հետ՝ դուք գերազանցության որոշակի զգացում չե՞ք ունենում: Եթե այդպես է, մտորեք, ինչի՞ հետ են կապված այդպիսի զգացումները, և ինչպիսի՞ն են դրանց հետևանքները:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, փետրվարի 10

«Հանցանքի վայրում»

Կարդացե՛ք Հովհաննես 8.1-11-ը: Ի՞նչ է ասում մեզ այս հատվածը Հիսուսի և մերժվածների մասին: _____

_____

_____

_____

_____

Ձիթենյաց լեռան վրա վերականգնելով Իր ուժերը՝ Հիսուսը վերադարձավ տաճար: Նրա շուրջը ամբոխ խռնվեց: Մինչ Քրիստոսը հորդորում էր ժողովրդին, փարիսեցիները մոտ մի կնոջ բերեցին Նրա մոտ, ում բռնել էին շնության մեջ: Նրանք հարցրին Հիսուսին, թե տվյալ դեպքի համար ինչ է ասում Մովսեսի օրենքը: Ըստ օրենքի՝ կինը պետք է մահանար: Հիսուսը հասկացավ հարցի ողջ երեսպաշտությունը. հարցի նպատակը ոչ թե ճշմարտությունը որոնելն էր, այլ կանխամտածված հրահրումը: Փարիսեցիները շատ լավ գիտեին, որ հռոմեացիները արգելել էին հրեա դատավորներին՝ մահվան դատավճիռ արձակել. այդ պատճառով, եթե Հիսուսը հրապարակավ հրաժարվեր մահվան դատապարտել կնոջը, դա կասկածի տակ կդներ Նրա հայրենասիրությունը, իսկ եթե Նա քաջալերեր քարկոծելը, ապա

Նրան կմեղադրեին հռոմեական իշխանության դեմ ապստամբության մեջ:

Այդ անօգնական մեղավոր կինը դարձավ առաջնորդների քաղաքական խարդավանքների պատանդը: Ծանոթ չլինելով Քրիստոսի ծառայությանը՝ նա կարող էր և չիմանալ Նրա գթասրտության մասին: Ճակատագրի հեգնանքով Նա միգուցե մահվա՞ն դատապարտեր նրան: Սակայն Հիսուսը կանխեց դա Իր անմոռանալի խոսքերով՝ «ո՞վ է ձեզնից առանց մեղքի»:

Այդ խոսքերը հարթեցրին խաղադաշտը: Անմեղ մարդիկ միայն իրավունք ունեին իրականացնելու մահվան դատավճիռը: Սակայն մեղավոր մարդիկ որոշակի իմաստով պարտավոր էին գթասրտություն դրսևորել: Սակայն, բացառությամբ Հիսուսի, այնտեղ ոչ մի անմեղ մարդ չկար: Կրոնական այդ առաջնորդները աստիճանաբար ցրվեցին, իսկ հասարակությունից մերժված, մեղավոր կինը ներում ստացավ:

«Ներելով այդ կնոջը և նոր կյանքի ոգեշնչելով նրան՝ Հիսուսը ողջ լիությամբ դրսևորեց Իր կատարյալ արդարությունը: Չարդարացնելով մեղքը և չնվազեցնելով կնոջ մեղավորությունը՝ Նա ձգտում էր փրկել, այլ ոչ թե դատապարտել: Այդ մոլորված կնոջը աշխարհում միայն ծաղր և արհամարհանք էր բաժին ընկել: Սակայն Հիսուսը հույսի և մխիթարության խոսքեր ասաց նրան: Նա՝ Անմեղը, կարեկցում է մեղավորին թուլությունների համար և օգնության ձեռք է մեկնում նրան: Այն ժամանակ, երբ կեղծավոր փարիսեցիները մեղադրում էին նրան, Հիսուսը հրամայում է կնոջը գնալ և այլևս մեղք չգործել» (Է. Ուայթ. «Դարերի փափագը», էջ 462):

Չնայած է. Ուայթը տալիս է մեզ այդ կնոջ շուրջը ծագած խարդավանքի առավել մանրամասն նկարագրությունը, նա, այնուամենայնիվ, իսկապես բռնվել էր «հանցանքի վայրում»: Առաջնորդների ծրագրավորած խարդավանքը չի փոխում այդ փաստը: Սակայն կինն այդուհանդերձ ներվում է: Ինչպե՞ս մենք սովորենք ողորմածություն դրսևորել նույնիսկ մեղավորների հանդեպ և, ընդ որում, «չնվազեցնենք» կատարված մեղքը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 11

Նվաստներից նվաստը

Կարդացե՛ք Մարկոս 5.1-20-ը: Նկարագրեք այս մարդու կացությունը՝ համեմատելով ժամանակակից անտուն մարդկանց

պայմանների հետ: Այդ նկարագրությունը համեմատե՛ք հոգեկան հիվանդ մարդկանց վիճակի հետ: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք նկատում: Ժամանակակից հասարակությունը ինչպե՞ս է վերաբերվում հոգեկական խանգարումներ ունեցող մարդկանց: Ինչպե՞ս կարելի է բացատրել այն, որ Հիսուսը հրամայում է տարածայնել այդ իրադարձությունը, չնայած մյուսներին Նա խորհուրդ է տալիս չտարփողել տեղի ունեցածը:

_____

_____

_____

Դժվար է պատկերացնել որևէ մեկին այսպիսի սարսափելի վիճակում, դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է ապրել գերեզմանոցում: Չնայած շատերը պնդում են, թե այդ մարդը պարզապես հոգեկան հիվանդ էր, տեքստն այլ բան է ցույց տալիս: (Դրանից բացի, ինչպե՞ս է այդ գաղափարը համաձայնեցվում այն բանի հետ, ինչ կատարվեց խոզերի հետ):

Այս պատմության մեջ մեզ համար գլխավորն այն է, որ ոչ մեկը, անկախ իր սոսկումնալի վիճակից, դիվահար լինի, խելագար, թմրամոլ կամ որևէ այլ բան, չպետք է անտեսվի մեր կողմից: Որոշ դեպքերում անհրաժեշտ է արհեստավարժ օգնություն, որը հնարավություն դեպքում պետք է ցուցաբերել:

Մենք՝ որպես քրիստոնյաներ, պետք է հիշենք, որ Քրիստոսը մահացավ յուրաքանչյուրի համար: Եվ նույնիսկ նրանք, ում մենք անհուսալի ենք համարում, առաջվա նման արժանի են ողորմության, հարգանքի և բարության: Դրանից բացի, ովքե՞ր ենք մենք, որ դատենք որևէ մեկի մասին որպես անհուսալիի՝ մոռանալով Աստծո զորության ազդեցությունը: Մեր տեսակետից ամեն ինչ կարող է վատ թվալ, սակայն Աստծո համար յուրաքանչյուր մարդ անսահման արժեք է ներկայացնում: Եթե չլիներ խաչը, մենք բոլորս անհույս կլինեինք: Անհրաժեշտ է, որ մենք հիշենք այդ մասին, երբ բախվում ենք անհավասարակշիռ և հիվանդ մարդկանց:

Մտածե՛ք ձեր ծանոթներից որևէ մեկի մասին, ով իսկապես վատ վիճակում է: Դա կարող է վերաբերել մտավոր, հոգևոր կամ ֆիզիկական ոլորտներին: Անկախ այն բանից, թե ինչից է առաջացել այդ վիճակը, փորձեք նայել նրանց այնպես, ինչպես նայում է մեզ՝ առանց պայմանի սիրող Աստված: Աղոթքից բացի, ուրիշ ի՞նչ կարող եք անել նրանց համար, որպեսզի ծառայեք նրանց կարիքներին և Աստծո սերը դրսևորեք նրանց հանդեպ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հունվարի 12

Զրհորի մոտի կինը

Ուսումնասիրե՛ք Հովհաննես 4.5-30-ը և պատասխանեք հետևյալ հարցերին:

1. Ինչպիսի՞ սոցիալական ավանդույթներ խախտեց Հիսուսը և ինչո՞ւ: Ի՞նչ պետք է ասի դա մեզ «հասարակական պայմանականությունների» և դրանց հանդեպ մեր վերաբերմունքի մասին, երբ դրանք կանգնած են մեր վկայության ճանապարհին: Հասարակական ինչպիսի՞ պայմանականություններ կարող են դժվարացնել մեր վկայությունները շրջապատին: _____

2. Հիսուսն Ի՞նչ ձևով ցույց տվեց կնոջը նրա մեղավոր կյանքը: Ի՞նչ կարող ենք սովորել Նրա մոտեցումից: _____

3. Ի՞նչ է ասում պատմությունը Հիսուսի աշակերտների նախապաշարմունքների մասին: Մենք դարձյալ պետք է հարցնենք մեզ, թե ինչպե՞ս ենք սխալվում այդ նույն հարցում: ___

4. Թեև կինը Հիսուսի խոսքերի խոր տպավորության տակ էր, ի՞նչ ասաց նա իր վկայության մեջ, ցույց տալով, որ ինքն առաջվա նման հարցեր ունի Հիսուսի Անձի վերաբերյալ: Ի՞նչ հետևություն կարող ենք անել դրանից՝ ավետարանչական աշխատանքում համբերություն դրսևորելու առումով: _____

ՀԻՆԳՇԱԲԹԻ, փետրվարի 13

Մաքսավորներ և մեղավորներ

Դժվար է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ մեր աշխարհը, եթե մեղքը մուտք չգործեր այնտեղ: Բնության գեղեցկությունը, չնայած անցած հազարամյակներին, առաջվա նման վկայում է Աստծո մե-

ծության, զորության և ողորմածության մասին: Մեղքից մթագնած մեր գիտակցությունը հազիվ թե կարողանա հասկանալ, թե ինչպիսին կլինեին մարդկային փոխհարաբերությունները, եթե մեր աշխարհը անկում չապրեր: Մի բանում մենք կարող ենք վստահ լինել՝ գոյություն չէին ունենա ոչ մի տեսակի դասակարգային տարբերություններ, նախապաշարումներ, մշակութային և էթնիկական սահմաններ, որոնք թափանցել են յուրաքանչյուր հասարակություն և յուրաքանչյուր մշակույթ:

Սակայն, ինչքան էլ դա ցավալի լինի, մենք ստիպված ենք ընդունել, որ մինչև Քրիստոսի վերադարձը այդ սահմանները կպահպանվեն: Մեր աշխարհը ավելի ու ավելի վատն է դառնում, և այդ պատճառով է, որ մենք պնդում ենք դա: Բայց, իբրև քրիստոնյաներ, մենք պետք է անենք ամեն հնարավորը, որպեսզի անցնենք այդ խոչընդոտների սահմանները, որոնք այնքան տառապանք, տանջանք և ցավ են պատճառում մեր աշխարհում, հատկապես հասարակությունից մերժված մարդկանց:

Կարդացե՛ք Մատթեոս 9.9-13-ը: Ինչպե՞ս է բացահայտվում այստեղ ճշմարիտ քրիստոնեության էությունը՝ Հիսուսի ոչ միայն խոսքերում, այլ նաև գործերում: Հատկապես կենտրոնացե՛ք Հին Կտակարանից վերցված Նրա՝ հետևյալ խոսքերի վրա. «Որովհետև ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ»: Օվսե 6.6: Հաշվի առնելով տվյալ համատեքստը՝ ինչո՞ւ պետք է առանձնակի ուշադրություն դրսևորենք, որպեսզի մեղավորներ չդառնանք՝ զբաղեցնելով այն դիրքը, որ այստեղ այնպես խիստ դատապարտում է Հիսուսը: Մենք պետք է հատկապես հաշվի առնենք այն, որ մենք ինքներս էլ, այս կամ այն չափով, համարվում ենք մեզ շրջապատող հասարակության «պտուղը» և այդպիսով ենթակա ենք այն նախապաշարմունքների և սոցիալական խոչընդոտների ազդեցությանը, որոնք հատուկ են յուրաքանչյուր հասարակության: _____

_____

_____

_____

_____

«Փարիսեցիները տեսնում էին, որ Քրիստոսը հաց է ուտում մաքսավորների և մեղավորների հետ: Նա հանգիստ էր և զուսպ, բարի, շփվող և ընկերասեր, և թեպետ փարիսեցիներին հիացնում էր այդ պատկերը, դա այնքան տարբեր էր իրենց վարքագծից, որ տանել

չէին կարողանում այդ տեսարանը: Ամբարտավան փարիսեցիները բարձրացնում էին իրենց և նվաստացնում նրանց, ովքեր այդպես օրհնված չէին առավելություններով և լույսով, ինչպես իրենք: Նրանք ատում և արհամարհում էին մաքսավորներին ու մեղավորներին: Սակայն Աստծո աչքում փարիսեցիների մեղավորությունն ավելի մեծ էր: Երկնային լույսը լուսավորում էր նրանց ճանապարհը՝ ասելով. «Ահա ճանապարհը, գնացեք նրանով», սակայն նրանք մերժեցին այդ պարգևը» (Է. Ուայթ, ՅՕԱ Աստվածաշնչական մեկնաբանություններ», հտ. 5, էջ 1088):

ՈՒՐԲԱԹ, փետրվարի 14

Հետագա ուսումնասիրության համար

«Դարերի Փափագը» գրքից կարդացեք հետևյալ գլուխները. «Հակոբի ջրհորի մոտ», էջ 183-195, «Պապանձվիր, դադարիր», էջ 333-341, «Ցանցերի միջև», էջ 455-462, «Ապաքինման ծառայություն» գրքից՝ հետևյալ գլուխները. «Օգնություն փորձվողներին», էջ 164-169, «Աշխատանք անզուսպների հետ», էջ 171-182, «Օգնություն գործազուրկներին և անտուններին», էջ 183-200:

«Նա երբեք չէր սատարում ինքնագոհ հպարտներին, ովքեր կողքի էին քաշվում և բարձրից նայում մյուսներին…

Ընկածներին պետք է օգնել՝ զգալու, որ նրանց համար դեռ ուշ չէ մարդ դառնալը: Քրիստոսը պատվեց մարդուն Իր վստահությամբ և այդպիսով բարձրացրեց նրան: Նա հարգանքով է վերաբերվում նույնիսկ չափազանց ցած ընկածներին: Քրիստոսի համար միշտ ցավոտ էր շփումը թշնամանքի, արատավորության և բարոյական անմաքրության հետ, սակայն Նա երբեք ո՛չ խոսքով և ո՛չ էլ գործով ցույց չտվեց, որ Իր նրբազգաց հոգին ցնցված է, կամ ինչ-որ բան վիրավորել է իր նուրբ ճաշակը: Ինչքան էլ հիմար լինեին սովորությունները, ինչքան էլ ամուր լինեին կանխակալ կարծիքները, ինչքան էլ ուժեղ լինեին մարդկային կրքերը, Նա կարեկցանք էր զգում բոլորի հանդեպ և յուրաքանչյուր մարդու հանդեպ քնքշություն դրսևորում: Երբ մենք հաղորդակցվում ենք Նրա հոգու հետ, սկսում ենք բոլոր մարդկանց վերաբերվել որպես եղբայրների, ովքեր նմանատիպ գայթակղություններիև փորձությունների են ենթարկվում, ովքեր հաճախ ընկնում են և դարձյալ փորձում ոտքի կանգնել, պայքարում են վիատության ու

դժվարությունների դեմ և ծարավի են կարեկցանքի ու օգնության: Մենք այնպես կվարվենք նրանց հետ, որ չխռովեցնենք և չվանենք նրանց, այլ հույս արթնացնենք նրանց սրտերում» (Է. Ուայթ, «Ապավինման ծառայություն», էջ 164,165):

Հարցեր քննարկման համար

1. Ձեր ո՞ր հայացքներն ու տեսակետները պետք է փոխվեն, որպեսզի դուք դառնաք հաջողակ վկաներ հասարակության կողմից վտարվածյալների համար: Ձեր համայնքում ձևավորված ինչպիսի՞ ավանդույթներ պետք է փոխվեն, որպեսզի ձեր եկեղեցին ավելի հաջողակ դառնա ավետարանչության մեջ: Ժամանակակից քրիստոնյաները ինչպե՞ս պետք է խելամիտ սպասումներ ունենան՝ աշխատելով այնպիսի մարդկանց հետ, ովքեր առավել «դժվար» են համարվում:
2. Ինչպե՞ս էր հաջողվում Հիսուսին՝ մեղքը չարդարացնելով, միաժամանակ չդատապարտել մեղավորներին: Ինչպե՞ս էր Հիսուսն օգտագործում վստահությունը, քաջալերանքը և հավատը, որպեսզի ճիշտ հունով ուղղորդի մերժվածների կյանքը: Չնայած հասարակությունից մերժվածները, ընդհանուր առմամբ, կասկածանքով էին վերաբերվում կրոնական առաջնորդներին, ինչպե՞ս Հիսուսը հասավ այն բանին, որ այդ հավանական աշակերտները իրենց հանգիստ և հարմարավետ զգանզիում Իր ընկերակցությամբ:
3. Ի՞նչ ՝պատնեշներ են բաժանում հասարակության կողմից վտարվածներին և ձեր եկեղեցուն: Ինչպե՞ս կարելի է վերացնել այդ պաշնեշները:

ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Երկրորդ Օրինաց 8.17,18, Ծննդոց 13.5,6, Հովհաննես 3.1-15, Ղուկաս 19.1-10, Մարկոս 4.18,19, Մատթեոս 19.16-26:

Հիշելու համարը.

«Որովհետև արծաթասիրությունը ամեն չարիքների արմատն է, որին մի քանիսը անձնատուր լինելով՝ հավատքից մոլորվեցին, և իրենց անձերը շատ ցավերով խոցեցին» (Ա Տիմոթեոս 1.6):

Այսպիսի արտահայտություն գոյություն ունի. «Մարդիկ ծախսում են դրամները, որոնք իրենք չունեն, այն իրերի վրա, որոնք իրենց պետք չեն, այն բանի համար, որպեսզի տպավորություն գործեն այն մարդկանց վրա, ովքեր իրենց դուր չեն գալիս»:

Շատ կարելի է վիճել այս արտահայտության ճշմարտացիության շուրջ, սակայն անվիճելի է մեկ բան՝ դրամները մեծ ազդեցություն են գործում բոլորիս վրա: Քանի որ անհատական դրամական սովորությունները համակողմանիորեն են ներկայացնում են մարդու արժեքները, ապա փողը, ինչքան էլ դա տարօրինակ լինի, շոշափում է և հոգևոր կողմը: Անկասկած, հենց այդ պատճառով է, որ Աստվածաշունչը մեկ անգամ չէ, որ հիշատակում է այդ մասին:

Բացի այդ, հարստությանը հաճախ ուղեկցում է հռչակը: Կինոաստղերը, նշանավոր մարզիկները և քաղաքական գործիչները հաճախ ունեն և՛ մեկը, և՛ մյուսը: Նշանավոր մարդիկ իրենց ազդեցությունն են թողնում. դա իշխանության տեսակներից մեկն է: Սակայն հարստությունը կամ իշխանությունը տպավորություն չէին գործում Հիսուսի վրա: Նա պարզապես ձգտում էր հասնել այդ մարդկանց այն նույն դրդապատճառով, ինչ և մյուսների դեպքում էր: Նա փափագում էր, որ նրանք ունենան այնպիսի գանձ, որը չի գնվում դրամներով:

Հարուստ օրինվածները

Լինելով անկում ապրած մարդ արարածներ՝ մենք ենթակա ենք նախանձ զգալու և դա հատկապես այն մարդկանց հանդեպ, ովքեր մեզնից ավելի շատ դրամներ ունեն: Սակայն Աստվածաշունչը միանշանակ չի ցածրացնում հարստությունը կամ հարուստներին: Ինչպես հաճախ տեղի է ունենում այս կյանքում, հիմնախնդիրներն առաջանում են ոչ թե հենց իրերի պատճառով, այլ նրա թե ինչպես ենք մենք վերաբերվում դրանց:

Ի՞նչ խորհուրդ է առաջարկում Սուրբ Գիրքը հարստության առումով: Երկրորդ Օրինաց 8.17,18, Ծննդոց 13. 5,6, 41.41-43, Հոբ 1.1-3, Դանիել 4. 28-31: Իսրայելի համար ինչո՞ւ էր այդքան կարևոր չմոռանալը, թե որտեղից են ելնում իրենց բոլոր օրհնությունները: _____

_____

_____

Կասկած չի առաջացնում այն փաստը, որ այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Աբրահամը, Հովսեփը, Մուրքքեն, Եսթերը, Եզեկիան, Հովսիան և Հովսափատը, հարուստ էին և միևնույն ժամանակ հոգևոր անձնավորություններ: Սակայն Նաբուգոդոնոսորի օրինակով մենք տեսնում ենք հարստությունից ելնող վտանգը, երբ այն կուռք է դառնում: Մյուս կողմից, Աստծո տված առատությունն ընդունելը, այդ թվում և հարստության առումով, հոգևոր և նյութական օրհնություններ է բերում: Իսրայելացիները առանձնահատուկ կերպով զգուշացված էին, որ չմոռանան, թե որտեղից են գալիս բոլոր օրհնությունները (լավ դաս է մեզ բոլորիս համար, այնպես չէ՞):

Եթե համառոտ ասենք, ապա հարստությունն ինքնին չի վկայում հոգևոր ժլատության կամ անտարբերության մասին: Հարուստների մեջ կան ինչպես շատ աստվածավախ և հավատարիմ մարդիկ, այնպես էլ բավականին վանող և չար մարդիկ: Ցանկացած դեպքում, փող ունենալու ցանկությունը չպետք է դիվահարության վերածվի, և մենք չպետք է արգահատանքով վերաբերվենք հարուստներին: Նրանք կարիք ունեն փրկության, ինչպես և բոլոր մարդիկ:

Անձամբ դուք ինչպե՞ս եք վերաբերվում հարուստներին: Հեշտ է նախանձ դառնալ, այնպես չէ՞: Ինչպե՞ս կարող եք սովորել հաղթահարել նման զգացումները և հարուստներին նայել այնպես,

ինչպես և մնացած մարդկանց, տեսնել նրանց մեջ հոգի, որ կարիք ունի Հիսուսի փրկարար ճանաչողությանը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, փետրվարի 17

Գիշերային հանդիպում

Հարուստ, նշանավոր, բարձր դիրք զբաղեցնող մարդիկ չէին վախեցնում Հիսուսին: Քրիստոսը քամահրանքով չէր վերաբերվում հասարակության բարձր խավին և չէր երկյուղում նրանցից: Փրկիչը հասկանում էր, որ նյութական բարեկեցությունը հոգեկան խաղաղություն, բավարարվածության զգացում չի տալիս, չի օժտում նշանակալի փոխհարաբերություններով կամ ճիշտ նպատակով: Ամենահարուստ մարդը հեշտությամբ կարող է միայնակ մնալ, դատարկ և չարացած, ի տարբերություն ամենահասարակ, աղքատ և հեզ քրիստոնյա հավատացյալի:

Վերլուծեք Հիսուսի շփումը Նիկոդեմոսի հետ (Հովհաննես 3.1-15): Ի՞նչը կարող էր Նիկոդեմոսի մեջ հետաքրքրություն առաջացնել Հիսուսի լուրի հանդեպ (հուշում. տե՛ս 2.13-25): Ի՞նչ նշանակություն ուներ գիշերը: Ի՞նչ գլխավոր լուր հայտնեց Քրիստոսը Նիկոդեմոսին: _____

_____

_____

Նիկոդեմոսը վկա էր եղել Աստծո զորությանը և իշխանությանը, որ բացվել էր Հիսուսի ծառայության մեջ, և այդ պատճառով հնարավորություններ էր որոնում Նրա հետ հանդիպելու, սակայն՝ գաղտնի: Հիսուսը կարող էր հրաժարվել այդպիսի գաղտնի հանդիպումից, սակայն չցանկանալով, որ որևէ մեկը կործանվի, Նա պատրաստակամությամբ օգտվեց այդ հնարավորությունից, որպեսզի օգնի Նիկոդեմոսին՝ մոտենալու Աստծո արքայությանը: Նիկոդեմոսի աղքատությունը հոգևոր բնույթ էր կրում, այլ ոչ՝ նյութական: Հարուստ լինելով երկրային բարիքներով և հասարակական բարձր դիրքով՝ նա, չնայած դրան, հոգևոր քաղց էր զգում:

Նիկոդեմոսը բնազդաբար ապստամբում էր ցանկացած այնպիսի մտայնության դեմ, որ այնպիսի լավատեղյակ և կրթված իսրայելացիները, որոնցից մեկն ինքն է, կարիք ունեն դարձի գալու: Սակայն Հիսուսը պնդեց դա՝ Նիկոդեմոսին դնելով հավերժական ընտրության առաջ՝ դատաստանի և փրկության միջև: Վախենալով դատապար-

տությունից և հեգնանքներից՝ Նիկոդեմոսը հրաժարվեց ընդունել Քրիստոսի հրավերը: Թվում էր, թե զրույցը ցանկալի արդյունքներ չտվեց: Սակայն հոգևոր սերմը ցանվել էր, և դանդաղորեն աճում էր սրտի հողի մեջ:

«Տիրոջ համբարձումից հետո, երբ Քրիստոսի աշակերտները հալածանքների հետևանքով ցրվել էին, Նիկոդեմոսը համարձակորեն առաջ եկավ: Նա զոհաբերեց միջոցները՝ երիտասարդ Եկեղեցուն սատարելու համար, որը, ինչպես հույս ունեին ուղղափառ հրեաները, պետք է անհետանար Քրիստոսի մահից հետո: Երբեմնի զգուշավոր և կասկածամիտ Նիկոդեմոսը վտանգի ժամանակներում հաստատուն կանգնեց, ինչպես ժայռ և ամրապնդում էր Քրիստոսի աշակերտների հավատը՝ նյութապես սատարելով ավետարանիչների գործը: Դրա համար նրան արհամարհեցին և հալածեցին, ովքեր նախկինում հարգանքով էին վերաբերվում նրան: Նա աղքատացավ, կորցրեց իր նախկին պատիվը, սակայն չսասանվեց հավատի մեջ, որ ծնվել էր իր մեջ՝ Հիսուսի հետ այն գիշերվա զրույցի ժամանակ» (Է.Ուայթ, «Դարերի փափագը», էջ 177):

ԵՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 18

Հարուստ, սակայն վատ համբավ ունեցող

Հարմարավետությունը միշտ չէ որ հարստության ուղեկիցն է: Չնայած շատ մարդիկ իսկապես ազնիվ ճանապարհով, իրենց քրտինքով բարխոնճորեն են վաստակումեն իրենց հարստությունը, և Աստված օրհնում է նրանց ջանքերը, բայց շատերն էլ ամենաիսկական խաբեբաներ են: Կա նաև ավելի վատը. որոշ մարդիկ վաստակում են դրամները օրինական, սակայն անբարոյական ձևով, քանի որ, ցավոք, ամեն անբարոյական բան չէ, որ անօրինական է:

Մատթեոս 9.10-13-ը համեմատեք Ղուկաս 5.27-32, 19.1-10-ի հետ: Ի՞նչը քննադատություն առաջացրեց Հիսուսի հասցեին: Ի՞նչ է մեզ սովորեցնում Նրա արձագանքը՝ շնորհի վերաբերյալ քննադատությանը: _____

_____

_____

Երիքովը, Զաքեոսի բնակության վայրը, առևտրական կարևոր կենտրոն էր, որտեղ գտնվում էր նաև Հերովդեսի պալատը: Աշխարհագրական տեղադրության շնորհիվ այդ քաղաքում էր գտնվում

մաքսատունը: Զաքեոսը կարող էր հեշտությամբ և օրինական ձևով հարստանալ՝ որպես ավագ հարկային պաշտոնյա: Սակայն աստվածաշնչային պատմությունը ենթադրում է, որ ագահությունը հարկադրում է նրան՝ խախտելու օրենքի սահմանները: Նախանձախնդիր հայրենասերները արհամարհում էին նույնիսկ ազնիվ հարկահավաքներին՝ ընդունելով նրանց իբրև գործիք՝ հռոմեական հալածիչների ձեռքին: Սակայն նրանք ավելի շատ արհամարհում էին անազնիվ մաքսավորներին, ինչպիսին էր, ասենք, Զաքեոսը: Մատթեոսը (Ղևին) նույնպիսի պաշտոն ուներ Կափառնայումում, Հերովդես Անտիպասի օրոք: Ըստ էության, նրանց վրա էին դրված հռոմեական կառավարական գործակալների պարտականությունները, դրա համար նրանց ընդունում էին որպես դավաճաններ, կամ, որ ավելի վատ է, որպես գողացող դավաճաններ:

Այդ բոլորը, սակայն, Քրիստոսին չվանեց նրանցից: Մարտահրավեր նետելով սոցիալական ճնշմանը՝ Հիսուսը ճաշում էր նրանց հետ՝ հրահրելով ինչպես քահանաների, այնպես էլ հասարակ մարդկանց կատաղի քննադատությունը: Եվ շնորհիվ Քրիստոսի հետ շփման՝ այդ արհամարհված տղամարդիկ վերջիվերջո ընդունեցին Ավետարանը: Մատթեոսը ոչ միայն դարձավ 12 աշակերտներից մեկը, այլև մասնակից եղավ Նոր Կտակարանը գրելուն:

Եվ դարձյալ նկատենք. մենք պետք է խիստ կարգապահ լինենք, երբ՝ փորձենք դատել մարդկանց հոգևոր վիճակի մասին: Չնայած բոլոր մեղքերը չէ, որ իրենց հետևանքներով միանման են, և նրանցից մի քանիսն իսկապես նողկալի են սոցիալական առումով (և ոչ առանց պատճառի), այնուամենայնիվ, մենք բոլորս հավասար ենք Աստծո առաջ այն պատճառով, որ բոլորս ունենք Քրիստոսի արդարության կարիքը:

Մտածեք ձեր մշակույթում որևէ լավ հայտնի, սակայն արհամարհված (հնարավոր է, հասկանալի է նաև՝ ինչու) մարդու մասին: Պատկերացրեք, թե ինչպես կազդեր ձեր վկայությունը այդպիսի մարդու վրա: Դուք դա կցանկանայի՞ք: Ի՞նչ կասեիք դուք:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 19

Ոսկեջրած լուր

Վերլուծե՛ք հետևյալ հատվածները. Մարկոս 4.18,19, Ղուկաս 1.51-53, 6.22-25, 12.16-21, 16.13: Ի՞նչ գործնական խոր-

հուրդ և ինչպիսի՞ հոգևոր նախազգուշացումներ կան այդ համարներում: Հավատացյալ մարդիկ ինչպե՞ս կարող են օգտագործել այդ հատվածները, որպեսզի աշակերտներներ դարձնեն հարուստներին: _____

_____

Ասում են, որ ոչ թե մենք ենք իշխում մեր իրերի վրա, այլ նրանք՝ մեզ վրա: Ինչքա՜ն հեշտ կարելի է տարվել նյութական բարիքներով. դրա համար էլ Հիսուսը նախազգուշացրեց հարստության խաբուսիկության մասին:

Մտածեք, թե որքան հեշտությամբ դրամները կամ դրանց հետևից մրցավազքը կարող են մթագնել մեր հոգևոր նախապատվությունները: Ինչքան կարևոր է հիշել այդ կարևոր ճշմարտության մասին, երբ մենք փորձում ենք հասնել նրանց, ում հարստությունը, հնարավոր է, արդեն կուրացրել է իրենց:

Միևնույն ժամանակ մեզ բոլորիս անհրաժեշտ է ստուգում՝ իրական պայմաններում: Որոշ մարդիկ այնպես են ապրում, կարծես դատաստանի ժամանակ ընդամենը մեկ հարց պետք է տրվի նրանց. «Ինչքա՞ն փող ես վաստակել»:

Քրիստոսը իր տեղն է դնում մեր սխալ տեղաբաշխված նախապատվությունները: Նյութական բարիքները համարվում են Աստծո միջոցները, որոնք նախատեսված են մարդկանց նրա օգուտ բերելու համար: Նրանք օրհնություն են ծառայում ավելի շուտ այն դեպքում, երբ կիսվում են դրանցով, քան՝ երբ կուտակում են: Կուտակված բարիքները դառնում են անեծք:

Շահամոլ մարդիկ, հարուստները կամ աղքատները վտանգում են հավիտենական բարօրությունը՝ հանուն ժամանակավոր վայելքների: Հավիտենական ուրախությունը փոխարինվում է անցողիկ իրերով, որոնք փչանում են և դուրս գալիս նորաձևությունից: Մարդիկ ծառայում են կա՛մ Աստծուն, կա՛մ դրամներին, երբեք չի ստացվում համատեղել մեկը մյուսի հետ: Յուրաքանչյուր մարդու՝ հարուստ թե աղքատ, անհրաժեշտ է հիշել Հիսուսի խոսքերը. «Որովհետև ի՞նչ օգուտ է մարդու, եթե բոլոր աշխարհս ստանա՝ և իր անձը կորցնի» (Մարկոս 8.36):

Կարևոր է, որ նյութականին վերաբերող այս նախազգուշացումը իմանան բոլոր հավատացյալները. այն տրված է ոչ միայն սեփական հոգու փրկության, այլ նաև ավետարանչության համար: Քանզի ինչպե՞ս կարող է ինչ-որ մեկը նախազգուշացնել հարուստ մարդկանց՝ իրենց հարստության մեջ թաքնված վտանգի մասին, եթե հենց ինքն է բռնվել այդ կեռիկի վրա:

Մատնանշելով սպառնալիքը

Ուսումնասիրե՛ք Մատթեոս 19.16-26-ը: Հոգևոր ինչպիսի՞ վտանգներ են բացվում այս հատվածում: Ի՞նչ օգուտ կարող են բերել հավատացյալները ժամանակակից «երիտասարդ հարուստ կառավարիչներին»: _____

Նա ուներ լիազորություններ, իրավունք, լիուլի նյութական միջոցներ, անվիճելի բարոյական վարքագիծ և անսահմանափակ ինքնահարգանք: Աշակերտ դառնալու երիտասարդ թեկնածուն դիմեց Ուսուցչին՝ ցանկանալով ստանալ փրկության բանաձևը: Գայթակղվե՞ց արդյոք Հիսուսը: «Վերջապես մենք ճշմարտությանն ենք բերում բարձր խավի մարդկանց»: Ակնհայտ է, որ Հիսուսին խորթ էին նման մտքերը: Եթե այդ մարդը հույս ուներ շնորհակալություն ստանալ օրինակելի վարքագծի համար, ապա նրան դաժան հիասթափություն էր սպասվում: Հիսուսը ցույց տվեց Տասը պատվիրանները՝ որպես հնազանդության նվազագույն չափանիշ: Հնարավոր է, երիտասարդ կառավարիչը շնորհավորում էր իրեն: Իր սեփական ինքնագնահատականի համաձայն՝ նա գերազանցել էր սահմանված մակարդակը: Սակայն Քրիստոսը պահանջեց այնպիսի արդարություն, որը գերազանցում էր կրոնական առաջնորդների արդարությունը: Պե՞տք էր արդյոք ցածրացնել այդ չափանիշը՝ տվյալ թեկնածուին հարմարեցնելու համար: Հուդան բռնվել էր մոլուցքով: Հասարակական կապեր հաստատող ցանկացած մարդ մեծապես կուրախանար: Մտածեք միայն, թե ինչպիսի առավելություններ կստանար մի խումբ իր իմիջի համար, եթե իր շարքերում այդպիսի հարուստ կառավարիչ ունենար:

Սակայն չի կարելի անտեսել հոգևորության պակասը, որովհետև Հիսուսի առաքելությունը սուրբ է: Ոչ մի փոխզիջում չի կարող լինել: Յուրաքանչյուր եսասիրական սիրաշահում սեփական ցանկություններին՝ պետք է թողնել: Քրիստոսն առանձնացրեց երեք փուլից կազմված հետևյալ գործընթացը. վաճառիր քո ունեցվածքը, բաժանիր գումարը աղքատներին և հետևիր Ինձ: Դա հոգևոր առումով վտանգավոր տարածք էր: Չնայած իր երիտասարդ հասակին՝ հնարավոր աշակերտը բավականին կարողություն ուներ: Շքեղ տներ, հրաշալի այգիներ, եկամտաբեր դաշտեր, նորաձև հագուստ, թանկարժեք իրերի հավաքածու, ծառաներ, ընտանի կենդանիներ, գուցե

նաև պատվերով պատրաստված արագընթաց անիվներ… այս բոլորը, հնարավոր է, հայտնվեց նրա գիտակցության մեջ: Աստծո պայմաններն անփոփոխ էին: Ո՛չ բանակցությունները, ո՛չ պայմանների քննարկումները չէին կարող իջեցնել գինը՝ ամեն ինչ հանուն Հիսուսի. երկրային մեծության փոխանակում երկնային գանձի հետ:

«Որքա՜ն շատերն են գալիս Հիսուսի մոտ՝ պատրաստ Նրան ենթարկելու իրենց շահերը, և երիտասարդ, հարուստ կառավարիչի նման ցանկանալով ժառանգել հավիտենական կյանքը: Սակայն, երբ նրանց ներկայացվում է գինը, երբ ասվում է, որ նրանք պետք է թողնեն ամեն ինչ՝ տներ և հողեր, կնոջն ու երեխաներին, և չափազանց թանկ չհամարեն իրենց կյանքը, նրանք վշտացած հեռանում են: Նրանք ցանկանում են երկնային գանձեր, Աստծո կյանքի հետ համահունչ կյանք, սակայն չեն ցանկանում հրաժարվել իրենց երկրային գանձերից: Նրանք չեն ուզում տալ ամեն ինչ, որպեսզի կյանքի պսակը ձեռք բերեն» (Է. Ուայթ, The Advent Reviewand Sabbath Herald, ապրիլի 19, 1898 թվական):

ՈՒՐԲԱԹ, փետրվարի 21

Հետագա ուսումնասիրության համար

«Դարերի փափագը» գրքից կարդացեք «Նիկոդեմոս», էջ 167-177, «Ղևի Մատթեոս», էջ 272-280, «Մեկ բան է քեզ պակասում», էջ 518-523, «Զաքեոս», էջ 552-556, գլուխները, «Ապաքինման ծառայություն» գրքից՝ «Ծառայություն հարուստներին» գլուխը, էջ 209-216:

«Շատ է խոսվում աղքատների հանդեպ մեր պարտքի վերաբերյալ. նրանց մասին ոչ ոք չի հոգում, նրանց վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում, բայց չարժե՞ արդյոք նույնպիսի ուշադրություն հատկացնել հարուստներին, ովքեր նույնպես անտեսված են: Շատ քրիստոնյաներ բարգավաճող դասին անհուսալի են համարում և շատ քիչ բան են անում՝ նրանց աչքերը բացելու համար, որ, կուրացածև ապշած լինելով երկրային փառքի փայլից, տեսադաշտից բաց են թողել հավիտենությունը: Հազարավոր հարուստ մարդիկ են գերեզման իջել՝ այդպես էլ նախազգուշացում չստանալով: Սակայն հարուստների մեջ շատ կան այնպիսիք, ովքեր թվացյալ արտաքին անտարբերության տակ հոգևոր տառապանքներ են ապրում: «Ով սիրում է արծաթը, նա չի կշտանա արծաթից, և ով սիրում է հարստությունը, նա օգուտ

չունի դրանից»: Ով մաքուր ոսկուն ասում է. «Դո՛ւ ես իմ հույսը», նա «հրաժարվում է... Բարձրյալ Աստծուց»: «Մարդը երբեք չի փրկագնի իր եղբորը և փրկագին չի տա Աստծուն նրա համար. թանկ է նրանց հոգու փրկագնման ուղին, և չի լինի նա երբեք»:

Հարստությունը և երկրային պատիվները ընդունակ չեն հագեցնելու հոգին: Շատ հարուստներ ձգտում են որևէ աստվածային հավաստիացում ձեք բերել, որևէ հոգևոր հույս: Շատերը ձգտում են մի այնպիսի բանի, որը վերջ կդնի իրենց աննպատակ կյանքի միապաղաղությանը: Նրանցից շատերին աշխարհիկ կյանքը բավարարարություն չի տալիս: Նրանց միայն մի փոքր մասն է եկեղեցի հաճախում, որովհետև նրանք մեծամասամբ այն կարծիքին են, որ քիչ օգուտ կա դրանից: Ուսմունքը, որը նրանք լսում են, չի հուզում նրանց սրտերը: Ինչո՞ւ մենք անձնապես չդիմենք նրանցից յուրաքանչյուրին» (Է. Ուայթ, «Ապաքինման ծառայություն», էջ 210):

Հարցեր քննարկման համար

1. Հարուստ նորադարձները կարևոր դեր էին խաղում՝ ֆինանսական սատարում ցուցաբերելով ծնունդ առնող քրիստոնեական շարժմանը: Թեպետ կային բացառություններ, անշահախնդիր զոհաբերությունն էր բնորոշում ջերմեռանդ հավատացյալներին: Աստծո արքայություն կմտնեն մաքուր սիրտ ունեցող և ազնիվ մարդիկ՝ սոցիալական բոլոր դասակարգերից: Քրիստոնյաները չպետք է վախենան հարուստ մարդկանցից կամ էլ չափազանց հիանան նրանցով: Նրանք պետք է համարձակորեն հռչակեն Աստծո հայտնությունն այն մասին, որ բոլոր մարդիկ կարող են փրկվել: Հասկանալով, որ մենք ոչ մի դեպքում չենք կարող փոխզիջման գնալ մեր աստվածաբանության և սկզբունքների մեջ, ի՞նչ գործնական փոփոխություններ կարող է նախաձեռնել ձեր եկեղեցին, որպեսզի հարուստ մարդկանց համար հեշտ լինի այնտեղ եղբայրական շփում ձեռք բերելը: Ձեր եկեղեցու ավետարանչական մարտավարությունը ինչպե՞ս է համապատասխանում՝ հարուստ մարդկանց աշակերտներ դարձնելու կարիքին: Կոնկրետ և իրաապես ի՞նչ կարող է անել ձեր եկեղեցին, որպեսզի նվաճի հարուստներին:
2. Նայե՛ք աստվածաշնչյան այն համարները, որոնք օգտագործում է Է. Ուայթը ուրբաթ օրվա դասում բերված մեջբերման մեջ: Ո՞րն է դրանց էությունը: Ինչպե՞ս կարող ենք օգնել մարդկանց, ովքեր կարծում են, թե իրենց երջանկությունը կարող են գտնել միայն հարստության և նյութական բարիքների մեջ: Ի՞նչ կարող ենք ձեռնարկել, որպեսզի նրանք հասկանան, որ իրենք սխալ ճանապարհի վրա են:

ԾԱՌԱՅԵԼՈՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հռոմեացիս 13.1-7, Մարկոս 2.23-28, Մատթեոս 8.5-13, 26.57-68, 27.11-14, Գործք 4.1-12:

Հիշելու համար.

«Եվ Աստծո խոսքը աճում էր, և աշակերտների համարը խիստ շատանում էր Երուսաղեմում. և քահանաներից էլ շատ բազմություն հնազանդվում էին հավատքին» (Գործք 6.7):

«Աշակերտները աչքի չէին ընկնում նահատակների խիզախությամբ և հաստատակամությամբ այնքան ժամանակ, քանի դեռ դրա կարիքը չկար: Իսկ երբ արդեն անհրաժեշտություն առաջացավ, Փրկչի խոստումը կատարվեց: Երբ Պետրոսը և Հովհաննեսը վկայում էին ատյանի առաջ, մարդիկ զարմանում էին. «Միայն ճանաչում էին նրանց՝ որ Հիսուսի հետ էին» (Գործք 4.13): Ստեփանոսի մասին գրված է, որ «Եվ ատյանում նստողների ամենը երբ որ մտիկ տվին՝ նրա երեսը հրեշտակի երեսի նման տեսան» (Գործք 6.15): Նրանք «Չէին կարողանում դեմ կենալ այն իմաստությանը՝ և այն հոգուն, որով նա խոսում էր» (Գործք 6.10): Պողոսը նույնպես, հիշելով կեսարի դատը իր հանդեպ, ընդգծում է. «Ատյանում առաջին անգամ պատասխանելիս ոչ ոք չկանգնեց իմ կողմը, այլ ամենքը ինձ թողեցին: Իսկ Տերն ինձ մոտ կանգնեց և զորացրեց ինձ, որ ինձանով քարոզությունը հաստատվի, և բոլոր հեթանոսները լսեն. և ես ազատվեցի առյուծի բերանից» (Բ Տիմոթեոս 4.16,17) (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 354, 355):

Հարգելով իշխանությունը

Բազում հարյուրամյակների ընթացքում մարդիկ փորձել են հասկանալ կառավարության դերը և գործառույթները, և թե ինչպես պետք է փոխհամագործակցեն նրա հետ քաղաքացիները: Ի՞նչ է տալիս կառավարողներին ժողովրդին ղեկավարելու իրավունքը: Կառավարման ո՞ր ձևն է լավագույնը: Պե՞տք է արդյոք, որ մարդիկ միշտ հնազանդվեն իրենց կառավարությանը: Եթե ո՛չ, ապա ինչո՞ւ: Սրանք ընդամենը մի քանիսն են այն մի շարք հարցերից, որոնց հետ մենք բախվում ենք՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

Կարդացե՛ք Հռոմեացիս 13.1-7-ը: Ի՞նչ կարևոր լուր կա այստեղ մեզ համար: Եվ այնուամենայնիվ, այս համարները և նրանցից փոխանցվող լուրն ինչպե՞ս կարող են ծաղրի ենթարկվել: Այդպիսի ի՞նչ օրինակներ կան պատմության մեջ: Մեր եկեղեցին ի՞նչ դասեր կարող է քաղել այդ սխալներից, նույնիսկ մեր սեփական պատմության սխալներից, ինչպես նաև, քրիստոնեական եկեղեցու սխալներից, ընհանրապես: _____

_____

_____

Քրիստոսի ժամանակներում հռոմեական կայսրությանը բնորոշում էին հալածանքներն ու դաժանությունը: Հռոմեական լեգեոներները ահաբեկում և հարստահարում էին քաղաքակիրթ ժողովուրդներին՝ բռնությամբ միացնելով իրենց կայսրությանը: Հարյուր հազարավոր մարդիկ զրկվել էին իրենց ունեցվածքից, նետվել բանտերը և սպանվել: Հռոմի կողմից նշանակված խամաճիկային կառավարությունը, հավանաբար, ավելի վատն էր լինում, քան Հռոմն ինքը: Սակայն հետաքրքիրն այն է, որ Հիսուսը երբեք չսատարեց այդ կառավարությունների դեմ ուղղված որևէ ապստամբություն և կոչ չարեց չվճարել նրանց սահմանած հարկերը (տե՛ս Ղուկաս 20.25): Հիսուսի կողմից քաղաքացիական անհնազանդության միակ դրսևորումը այն էր, երբ Նա շրջեց դրամափոխների սեղանները: Դա ապստամբություն էր *քահանաների* վարքագծի, այլ ոչ Հռոմի դեմ:

«Աստծո ժողովուրդը պետք է ընդունի մարդկային կառավարումը՝ որպես սահմանված և խրախուսված Աստծո կողմից, և դրան հնազանդվելը օրենքի շրջանակներում պետք է դիտի իբրև իր սրբազան պարտականությունը: Սակայն, երբ երկրային իշխանությունների հա-

վակնությունները հակասության մեջ են Աստծո պահանջների հետ, Աստծո Խոսքն անկասկած պետք է բարձր դասվի մարդկային բոլոր օրենքներից: «Այսպես է ասում Տերը» խոսքերը ոչ մի դեպքում չպետք է փոխարինվեն «Այսպես է ասում եկեղեցին կամ պետությունը» խոսքերով: Քրիստոսի պսակը պետք է վեր լինի երկրային միապետների թագից»(Է. Ուայթ, «Վկայություններ եկեղեցու համար», հտ. 6, էջ 402):

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, փետրվարի 24

«Դուք երբեք չե՞ք կարդացել»

Ցավոք, առանձնապես ուժեղ և ազդեցիկ կրոնական առաջնորդներից ոմանք, ում հետ Հիսուսը հանդիպեց, Նրա հանդեպ բացահայտ թշնամություն դրսևորեցին:

Սակայն, նույնիսկ նրանց հետ շփվելիս, Հիսուսը միշտ ձգտում էր նրանց հասցնել փրկության լուրը: Նա վիճաբանություններ չէր որոնում, այլ որոնում էր փրկություն բոլոր մարդկանց համար, նույնիսկ այն ուժեղ և ազդեցիկ մարդկանց համար, ովքեր, ի վերջո, մահվան դատապարտեցին Իրեն:

Կարդացե՛ք Մարկոս 2.23-28, 3.1-6 և Մատթեոս 12.1-16-ը: Այս հանդիպումներից ինչպե՞ս է երևում, որ Հիսուսը, չնայած Իր հանդեպ բացահայտ թշնամությանը, ձգտում էր հասնել այդ մարդկանց: Ի՞նչ էր ասում և ի՞նչ էր անում Նա, ինչը կարող էր դիպչել նրանց սրտերին, եթե այդպես փակ չլինեին: _____

_____

_____

Հետաքրքիր է նկատել, որ, շփվելով այդ մարդկանց հետ, Հիսուսը ցույց էր տալիս Սուրբ Գիրքը և նույնիսկ սրբազան պատմությունը. աղբյուրներ, որոնք պետք է դիպչեին հոգևոր առաջնորդներին: Հիսուսը դիմում էր այն բանին, ինչը կարող էր կապող օղակ դառնալ իրենց միջև: Օրինակ, Նա մեջբերում էր Սուրբ Գիրքը, երբ խոսում էր ողորմության կարևորության մասին, այն մասին, որ այն բարձր է ծեսերից և ուխտերից: Դրանով Նա ձգտում էր առաջնորդներին տանել օրենքի առավել խոր պատկերացումների, այն օրենքի, որը նրանք, իրենց սեփական կարծիքով, այնքան ջերմորեն և նվիրվածությամբ փայփայում էին և պահում:

Իր քարոզում, խոսելով այն մասին, որ շաբաթ օրը երբեմն հարկ է լինում հանել փոսն ընկած կենդանուն, Հիսուսը դիմեց նրանց առևտ-

ական պատկերացումներին՝ բարեպաշտության և բարության մասին, ինչը պետք է հատուկ լիներ այդ բոլոր այրերին: Սակայն հիմնախնդիրն այն էր, որ նրանց չարացածությունը և ատելությունը Հիսուսի հանդեպ՝ թույլ չտվեցին նույնիսկ դա հասկանալ:

Վերջիվերջո, հրաշքներն արդեն պետք է բարձրակոչ վկայեին այդ ազդեցիկ առաջնորդներին, որ իրենց մեջ անսովոր Անձն կա:

Այսօր մեզ համար հեշտ է նայել այդ մարդկանց և զարմանալ նրանց կուրության և կարծրասրտության վրա: Սակայն ինչպե՞ս համոզվենք, որ մենք ինքներս էլ, ձգտելով պնդել ինչ-որ բան, ինչին ընտելացել ենք, չենք փակում մեր սրտերը՝ ընդունելու աստվածային ավելի մեծ լույսը: Ինչո՞ւ է դա ավելի հաճախ տեղի ունենում, քան մենք կարծում ենք:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 25

Հարյուրապետը

Չնայած ազդեցիկ մարդկանց հետ Քրիստոսի որոշ հանդիպումներ վատ էին ավարտվել, կային նաև հիշատակման արժանի բացառություններ, ինչպես, օրինակ, Նիկոդեմոսի դեպքը: Մյուս արդյունավետ հանդիպումը տեղի ունեցավ հռոմեացի հարյուրապետի հետ (զինվորական սպայի հետ):

Կարդացե՛ք Մատթեոս 8.5-13 և Ղուկաս 7.1-10-ը: Ի՞նչ կարող ենք սովորել իշխանություն ունեցող այս մարդկանց վկայությունների պատմություններից: _____

_____

_____

Երբ հարյուրապետն իմացավ, որ Հիսուսը մոտենում է, իր մի քանի ընկերներին ուղարկեց Նրան ընդառաջ, որպեսզի համոզեն գալ իր տուն: Խորապես հարգելով հրեական կրոնը և Հիսուսի հոգևորությունը՝ նա գիտակցում էր, որ ինքն անարժան է Հիսուսի անձնական ուշադրությանը: Այս պատմության ավարտին, Նրա գալուց անմիջապես առաջ, նա, այնուամենայնիվ, որոշեց մոտենալ Նրան: Նա հավատում էր, որ Քրիստոսի հենց միայն խոսքը կարող է վերականգնել իր ծառային: Ունենալով զինվորական փորձ՝ նա հասկանում էր, թե ինչ է նշանակում իշխանություն: Նա ենթարկվում էր իրեն ղեկավարող սպային, իսկ իր ենթականները իրեն էին հնազանդվում: Որքան զարմանալի է, որ այդ ազդեցիկ մարդը (ընդ որում, հռոմեացի) կարողացավ այդ-

քան հավատ դրսևորել այն դեպքում, երբ շատ ավելի հոգևոր առավելություններ ունեցողները մերժեցին Հիսուսին:

Այստեղ օգտակար կլինի ազնիվ ինքնավերլուծությունը: Մենք պետք է հարցնենք մեզ՝ հնարավոր է, մենք պարզապես ինքնագոհ մարդի՞կ ենք դարձել, որ ճիշտ ուսմունք ենք դավանում՝ մոռանալով, որ ամենից առաջ անհրաժեշտ է կենդանի հավատ ունենալ: Պատահո՞ւմ է այնպես, որ նոր դարձի եկած, պակաս լավատեղյակ հավատացյալները հաճախ ավելի շատ հավատ են դրսևորում, քան քրիստոնեության մեջ աճած մարդիկ: Արդյո՞ք մեր հոգևոր առավելությունները ինքնավստահության պատճառ չեն դարձել: Գուցե ինչ-որ հոգևոր հնարավորություններ դո՞ւրս են մնացել մեզնից: Եթե մենք դրականորեն ենք պատասխանում այս հարցերին, այդ ժամանակ Քրիստոսը մեզ համար կարող է դառնալ հիմնախնդրի լուծումը: Ցանկացած մարդ կարող է ապրել հարյուրապետի փորձառությունը: Այս պատմությունը պետք է ոգեշնչի նրանց, ովքեր տքնում են՝ ավետարանելով բարձր դիրք զբաղեցնող մարդկանց: Արդյոք շա՞տ են նրանց մեջ 21-րդ դարի հարյուրապետները:

Անշահախնդիր, անձնազոհ ծառայության մեջ կա զորություն, որը կարող է դիպչել յուրաքանչյուր մարդու, յուրաքանչյուր դասակարգի և խավի ներկայացուցչի: Ինչպե՞ս են դրսևորվում անշահախնդրությունը և անձնազոհությունը մեր կյանքում և վկայության մեջ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, փետրվարի 26

Դատաստանի օրը

Կարդացե՛ք Մատթեոս 26.57-68, 27.11-14, Ղուկաս 23.1-12, Հովհաննես 18.19-23, 31-40, 19.8-12-ը: Ի՞նչ կարող ենք սովորել. ինչպե՞ս էր վկայում Հիսուսը այս նշանավոր մարդկանց: _____

_____

_____

Հիսուսի՝ երկրի վրա ապրած ժամանակահատվածի եզրափակիչ տեսարաններում Նրա հետևորդները տեսան անսասան հավատարմության բարձր գինը: Բանտարկությունից մինչև խաչելությունը Քրիստոսը վկայեց երկրի ամենաազդեցիկ մարդկանց՝ միապետներին, կառավարողներին, քահանաներին: Մեկը մյուսի հետևից Նա հանդիպում էր երկրային իշխանությամբ արբեցած մարդկանց: Արտաքուստ

նրանք վերահսկում էին Նրան: Զինվորները Հիսուսին տարան *իրենց* դատարանները, *իրենց* խորհուրդները, *իրենց* պալատները և *իրենց* բակերը՝ չիմանալով, որ այս ողջ աշխարհը Նրան է պատկանում: Ինչ գնահատական էլ նրանք տային Քրիստոսին, վերջին հաշվով դա հենց իրե՛նց տրված գնահատականն էր:

Չնայած Քրիստոսը վկայում էր, որպեսզի աշակերտներ դարձնի մարդկանց, միշտ չէ, որ Նրա ծառայության արդյունքները այնպիսին էին, ինչպես Ինքն էր ցանկանում: Որքա՜ն կուրախանար Հիսուսը, եթե Պիղատոսը, Կայիափան, Հերովդեսը և մյուսները Աստծուն հնազանդեցնեին իրենց սրտերը և ապաշխարեին: Նրանք համառորեն մերժեցին Հիսուսի աղերսները՝ անզգա կերպով անցնելով փրկության վերջին հրավերի կողքով:

Այդպես էլ 21-րդ դարում ապրող Քրիստոսի հետևորդները պետք է հասկանան, որ, թեպետ իրենք վկայում են՝ փորձելով աշակերտներ դարձնել մարդկանց, իրենց ծառայության արդյունքը կարող է խիստ տարբերվել են իրենց ցանկացածից, ինչի համար և աղոթում էին: Համեստ հաջողությունը միշտ չէ, որ համապատասխանում է ներդրված ջանքերին: Դա չպետք է հիասթափեցնի նրանց կամ խոչընդոտի հետագա վկայությանը: Իսկական աշակերտը, ինչպես Քրիստոսն Ինքն էլ, հավատարիմ է մինչև մահ, այլ ոչ թե մինչև հիասթափության պահը: Ունկնդիրներին ուղղված՝ որոշում ընդունելու կոչը առանձնացնում է ցորենը որոմից: Ցորենի համար ցնծում են, իսկ որոմի համար՝ վշտանում. բերքահավաք է: Չնայած այդ ազդեցիկ այրերի առաջ ունեցած Քրիստոսի վկայության ակնհայտ անհաջողությանը, ինչ-որ զարմանալի բան տեղի ունեցավ, որովհետև, Գործք 6.7-ի համաձայն, ոչ միայն աշակերտների թիվը բազմապատկվեց, այլ նաև «քահանաներից էլ շատ բազմություն հնազանդվում էին հավատքին»: Միայն Աստված գիտի՝ այդ քահանաներից շատե՞րն էին այնտեղ, որ լսել և տեսել էին Հիսուսին՝ խաչելությունից առաջ, այդ վերջին ժամերին:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, փետրվարի 27

Վաղ պայթյուն

Քրիստոսի առաջին աշակերտները եռանդուն տարածում էին Ավետարանը ողջ քաղաքակիրթ աշխարհով մեկ: Տները, ժողովարանները, հասարակական մարզադաշտերը, դատարանի դահլիճները և թագավորական պալատները դարձել էին վայրեր, որտեղ հռչակվում

էր Աստծո արքայությունը: Սակայն Հիսուսը կանխագուշակել էր, որ այդ աշակերտներին սպասվում են բանտարկություններ, փորձություններ և բարկություն՝ թշնամաբար տրամադրված կառավարիչների և թագավորների կողմից (Մատթեոս 10.16-20): Ցավոք, իշխանություն ունեցող երկրային կառավարողները չէին շտապում ընդունել Քրիստոսին:

Կարդացե՛ք այս հատվածները. Գործք 4.1-12, 13.5-12,50, 23.1-6, 25. 23-26,29: Թեև ինչ-որ մեկին կարող է թվալ, թե շատ մարդիկ անմիջապես դարձի էին գալիս «ոչ մի տեղից» (դատարկ տեղում), իրականում դա այդպես չէ: Այդ ցնցող արդյունքներն իրենց հիմքում ընկած հանգամանքների տեսանելի հետևանքներն էին: Ցանքը նախորդում է բերքահավաքին: Քրիստոսը համբերատար և հավատարմորեն հռչակում էր Ավետարանը: Ավետարանիչները վկայում էին ողջ Հրեաստանում: Առաջին դարձի եկածներն անկասկած օգնում էին տանել լուրը: Երբ Քրիստոսը հաղթեց մահին, դրանով հաստատելով Իր լուրը, չեզոք դիրք գրավող հազարավոր մարդիկ դարձան արքայության քաղաքացիներ: Նրանց սրտերն արձագանքեցին Հիսուսի հրավերին: Մշակութաբանական գործոնները, աշխատանքը կամ ընտանիքը չկարողացան զսպել նրանց: Քրիստոսի հարությունը խորտակեց արգելքները և օգնեց որոշում ընդունել:

Ապա հայտնվեց Պողոս առաքյալը: Սակայն նրա վկայությունը ևս միշտ չէ, որ ընդունվում էր: Կառավարողները և նշանավոր մարդիկ հետապնդում և հալածում էին Նրան: Նրան քարկոծեցին, ծեծեցին, բանտեր նետեցին և նրա հանդեպ դաժանություն դրսևորեցին: Եվ հաճախ այդ ամենի հրահրողները ազդեցիկ մարդիկ էին: Որպես կանոն, նրանք առաաջնորդվում էին քաղաքական դրդապատճառներով:

Կառավարիչ Ֆելիքսը բանտարկեց Պողոսին, որպեսզի հանդարտեցնի Պողոսի դեմ դուրս եկած կրոնական ընդդիմությանը: Նրա հաջորդը՝ Փեստոսը, ավելի արդարացի դուրս եկավ, սակայն նրան չբավականացրեց քաղաքական կամքի ուժը՝ ազատագրելու Պողոսին: Պաշտոնական այցելության ժամանակ Ագրիպպաս արքան և նրա քույր Բերենիկեն (Հերովդեսի դինաստիայի ժառանգորդները) Պողոսի հետ տեսակցելու ցանկություն հայտնեցին: Ցավոք, ինչպես և նրանց նախորդները, նրանք հրաժարվեցին ընդունել փրկության հրավերը: Այսօր էլ, բախվելով այդ նույն անըմբռնողությանը և մերժմանը՝ Քրիստոսի աշակերտները չպետք է թևաթափ լինեն:

Աշխատելով աշխարհիկ և կրոնական իշխանությունների միջավայրում՝ ինչպե՞ս կարելի է չհիասթափվել հաճախակի մերժ-

ման պատճառով: Երբ Քրիստոսի հետևորդներն աշխատում են ազդեցիկ մարդկանց համար, ուրիշ ո՞վ կարող է արձագանքել նրանց վկայությանը:

ՈՒՐԲԱԹ, փետրվարի 28

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացեք «Հարյուրապետը», էջ 315-318, «Աննայի և Կայիափայի դատաստանի առաջ», էջ 698-715, «Պիղատոսի դատաստանում», էջ 723-740, գլուխները, «Ապաքինման ծառայություն» գրքից՝ «Ցառայություն հարուստներին» գլուխը, էջ 209-216, «Առաքյալների գործերը» գրքից՝ «Քիչ է մնացել համոզես ինձ» գլուխը, էջ 433-438:

«Այդ հարուստ, աշխարհը սիրող և նրան երկրպագող հոգիներին չես կարող տանել Քրիստոսին՝ պատահական, մեկանգամյա շփումով: Սովորաբար, նրանք դժվար հասանելի են: Հարուստների առումով պահանջվում է անհատական մոտեցում, ինչին ընդունակ են այն տղամարդիկ և կանայք, ովքեր ներշնչված են ավետարանչական ոգով, չեն նահանջում իրենց նպատակից և չեն տատանվում:

Կան քրիստոնյաներ, ովքեր ունեն առանձնահատուկ ընդունակություններ՝ բարձր դասակարգերի հետ աշխատելու համար» (Է. Ուայթ, «Ապաքինման ծառայություն», էջ 213):

Հարցեր քննարկման համար

1. Ամեն անգամ, երբ Հիսուսը վկայում էր ազդեցիկ մարդկանց, նկատելի էր: Նրանցից մի քանիսը բարձր դիրքեր էին զբաղեցնում, մյուսները՝ ոչ: Նիկոդեմոսի և Հովսեփ Արիմաթացու նման, քահանայական կրթված դասակարգից շատերը աստիճանաբար էին գնում հավատին: Որոշ հետևողներ, ովքեր Քրիստոսի և կրոնական առաջնորդների միջև հակամարտության վկաներն էին դարձել, նույնպես հավատացին: Հրաբխային ակտիվությունը թաքնված է լեռնային ապարների շերտի տակ: Տեսողական ձևով անհնար է որոշել դրա ուժը: Ակտիվությունը ճշգրիտ որոշելու համար անհրաժեշտ են հատուկ սարքեր: Այդպես էլ Հիսուսի շարժման պայթյունային ներուժը մնում էր թաքնված Նրա երկրային ծառայության ժամանակ: Սակայն Նրա հարությունից հետո արքայությունը դուրս պոռթկաց, ինչի մասին էր վկայում զանգվածա-

յին դարձի գալը նույնիսկ այն մարդկանց, ովքեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում: Հավատարիմ ցանքը վերջիվերջո հարուստ բերք կտա: Ի՞նչ պետք է ասեն մեզ այս փաստերը. որ մենք չհիասթափվենք, երբ վկայությունը այնքան արդյունավետ չի թվում, որքան մենք ենք ցանկանում, հատկապես իշխող վերնախավի մեջ:

2. Վերոհիշյալ մեջբերման մեջ է. Ուայթը ասում է, որ որոշ մարդիկ առանձնահատուկ ձևով հարմար են ազդեցիկ մարդկանց հետ աշխատելու համար: Ինչպիսի՞ հմտություններ ունեն այդ մարդիկ: Միևնույն ժամանակ, ինչո՞ւ մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չսահմանափակենք նրանց, ում անպատրաստ ենք համարում:

ԾԱՌԱՅԵԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Եսայիա 56.6-8, Մատթեոս 11.20-24, Հովհաննես 12.20-32, Հռոմեացիս 15.12, Գործք 1.7,8:

Հիշելու համարը.

«Որովհետև Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի բոլոր ազգերի համար» (Եսայիա 56.7):

Քրիստոսի լուրը հենց ամենասկզբից նախատեսված էր բոլորի համար և ամենուր: Ավետարանը շատ արագ տարածվեց ամբողջ աշխարհով մեկ, որովհետև այն արդիական էր բոլորի համար: Իհարկե, այդ հայեցակարգը աշակերտներին ստիպում էր մտածել: Օրինակ, նրանց առաջին արձագանքը, երբ Քրիստոսը զրուցում էր սամարացի կնոջ հետ, պատկերում է նրանց անըմբռնողությունը: Նրանք մտածում էին, որ Հիսուսը՝ որպես Օծյալ, *իրական* մարգարեությունների և հույսերի իրականացումն է: Ինչ-որ ձևով նրանք բաց էին թողել կամ սխալ էին հասկացել մարգարեությունները, հատկապես՝ Եսայիայի մարգարեությունները, որոնք խոսում էին բոլոր ժողովուրդների մասին: Հիսուսը՝ դարերի Փափագը, սահմանափակված չէր միայն մարդկային մեկ խմբով: Այո՛, փրկությունը հրեաներից է, սակայն այն նախատեսված է յուրաքանչյուրի համար: Քրիստոսի հետևորդները պետք է դուրս գան ազգային սահմաններից, միջազգային բախումներից, լեզվական խոչընդոտներից և հաղթահարեն ցանկացած դժվարություն, որովհետև Նա անձնական օրինակով ցույց տվեց, թե ինչ է նշանակում միջմշակութային ավետարանչություն:

Որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ՝ մենք տեսնում ենք այդ կոչը Հայտնություն 14.6-ում. «Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ հավիտենական ավետիք ուներ, որ ավետարաներ երկրի վրա բնակվողներին. և ամեն ազգի և ցեղի և լեզվի և ժողովրդի»:

Մարգարեները կանխագուշակել են

Հին մարգարեները կանխագուշակել են ոչ հրեա ազգերի (հեթանոսների) դարձի գալը այն հավատին, որ հիմնված է Սուրբ Գրքի վրա: Հեթանոսական աստվածությունները և նրանց երկրպագելը, կործանարար կենսաձևը կվերանան՝ Յահվե Աստծուն առանց փոխզիջման հնազանդվելով և Նրան հավատալով: Իսրայելի թշնամիները կմղվեն դեպի Երուսաղեմ՝ աղերսելով ընդունել իրենց և հոգևոր ճանաչողության ծարավ կզգան: Իսրայելին հանձնարարվել էր շրջակա ժողովուրդներին հայտնել Աստծո համապարփակ հրավերը:

Ցավոք, Իսրայելի ավետարանչական ջերմեռանդությունը մարել էր երկրային հոգսերի պատճառով: Հսկայական տեսիլքը թաղվել էր ինքնագոհության սալերի տակ: Սակայն Քրիստոսի գալուստը հարություն տվեց այդ տեսիլքին, ծայրահեղ դեպքում՝ մի քանիսի համար:

Կարդացե՛ք Եսայիա 56.6-8, Միքիա 4.1,2, Հովհաննես 3.7-10, 4.1: Ի՞նչ են ասում այս համարները ավետարանչական լուրի համապարփակության և որոշ իսրայելացիների սահմանափակության մասին, ովքեր այդպես էլ չկարողացան հասկանալ դա:

Իսրայելը պետք է լույս լիներ ժողովուրդների համար: Տեսնելով Իսրայելի ստացած զարմանալի օրհնությունները՝ հեթանոս ժողովուրդներին պետք է հետաքրքրեր իսրայելացիների հավատը միաստվածության հանդեպ և նրանք պետք է դիմեին ճշմարիտ Աստծուն:

Ցավոք, ամեն ինչ այլ կերպ եղավ: Իսրայելն այնքան կենտրոնացավ ինքն իր վրա, որ տեսադաշտից կորցրեց իր մեծագույն կանչվածությունը, իսկ ոմանք նույնիսկ դադարեցին տեսնել Աստծուն, որ այնքան շատ բան էր տվել իրենց:

Ժամանակակից քրիստոնյաները բախվում են այս նույն դժվարություններին: Կսկսե՞ն արդյոք անշահախնդիր կերպով ընծայել՝ հանուն Ավետարանի հետագա առաջխաղացման, թե՞ կկենտրոնանա՞ն իրենք իրենց վրա՝ մոռանալով իրենց մեծագույն նպատակը: Այդ ծուղակի մեջ շատ ավելի հեշտ է ընկնել, քան մենք կարծում ենք:

«Եկեք Տիրոջ անունով փառաբանության և շնորհակալության ձայն բարձրացնենք՝ սահմանից դուրս աշխատանքի արդյունքների համար:

Եվ Տիրոջ զորքերի Առաջնորդը, ով երբեք չի սխալվում, առաջվա նման ասում է մեզ. «Առա՛ջ ընթացեք: Գնացե՛ք նոր տարածքներ: Բարձրացրե՛ք դրոշը բոլոր երկրներում: Հառնի՛ր, լուսավորի՛ր, Երուսաղե՛մ, որովհետև եկել է քո լույսը, և Տիրոջ փառքն է իջել քեզ վրա»:

Մեր նշանաբանը պետք է լինի. առա՛ջ, մի՛շտ առաջ: Աստծո հրեշտակները կգնան մեր առջևից, որպեսզի պատրաստեն մեր ճանապարհը: «Հեռավոր շրջանների» համար մեր հոգսը չի կարող ցած դրվել այնքան ժամանակ, քանի դեռ ամբողջ երկիրը չի լուսավորվել Տիրոջ փառքից» (Է. Ուայթ, «Վկայություններ Եկեղեցու համար», հտ. 6, էջ 28,29):

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, մարտի 3

Վա՛յ քեզ

Կարդացե՛ք Մատթեոս 11.20-24, Ղուկաս 4.25-30, 17.11-19 և Հովհաննես 10.16-ը: Ի՞նչ կարևոր լուր է տրված այս համարներում: Ինչպե՞ս կարող ենք դա կիրառել մեզ վրա մեր ժամանակի և համատեքստի առումով: Այդ համարներում բացված ո՞ր առանձնահատուկ սկզբունքի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնենք մենք: _____

_____

_____

Քրիստոսը ցանկանում էր, որ իր ժողովուրդը, ում Նա այնքան առավելություններ էր տվել, արթնանա և դառնա իր ճշմարիտ կոչմանը և նպատակին: Նա փափագում էր, որ նրանք տեսնեն, որ փրկությունը, նույնիսկ ընտրյալ ժողովրդի, մի այնպիսի բան չէ, որը ավտոմատ կերպով տրվում է ծնունդի հետ: Այն չի փոխանցվում գեներով կամ ծննդյան իրավունքով: Այն պահանջում է գիտակցված մոտեցում, և այդ ընտրությունը կարող էին անել և արեցին ոչ միայն իսրայելացիները:

Սպորտային մարզիչները երբեմն մարտահրավեր են նետում իրենց մարզիկներին՝ համեմատելով նրանց մրցակցող թիմերի հետ: «Եթե միայն դուք մարզվեիք նույնքան հավատարմորեն, ուժեղ, նույնքան եռանդով, ինչպես իրենք, ապա հաջողությունը ձերը կլիներ»: Մարզչի ակնհայտ դրդապատճառը այն է, որ ոգեշնչի, մարզվելու ցանկություն առաջացնի, այլ ոչ թե մարի այն:

Հիսուսը նույնպես ցանկանում էր, որ Իր ժողովուրդը կիսվի փրկության լրիվությամբ, ինչպես դա արդեն անում էին որոշ մարդիկ, ովքեր հրեա ազգին չէին պատկանում: Անկասկած, Նրա խոսքերն

ինչ-որ մեկին վրդովեցնում էին. չէ՞ որ Նա քարոզում էր այն, ինչ իրենք չէին ցանկանում լսել, թեպետ վաղուց արդեն պետք է լավ իմանային և հասկանային այդ ճշմարտությունները:

Որոշ մարդիկ, հնարավոր է, իսկապես շատ հոգևոր առավելություններ ունեն, որ չունեն մյուսները, սակայն այդ առավելությունները ունեցողներըն պետք է գիտակցեն, որ իրենց տրվածը Աստծո պարգևն է և պետք է օգտագործվի Նրա փառքի համար:

Ի՞նչ կարելի է ասել մեր մասին: Ի՞նչ կարելի է ասել այն բոլոր առավելությունների մասին, որոնք տրվել են մեզ՝ որպես ժողովուրդ: Ինչո՞ւ է կարևոր առաջին հերթին գիտակցելը այդ առավելությունները, և երկրորդ՝ խոնարհաբար ընդունելը այն պատասխանատվությունը, որ գալիս է դրա հետ միասին:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 4

«Կամենում ենք Հիսուսին տեսնել»

Կարդացե՛ք Հովհաննես 12.20-32-ը: Այս համարներում ինչպե՞ս է բացահայտվում ավետարանական լուրի համապարփակությունը: _____

_____

Երուսաղեմը գվվում էր շշուկներից: Բոլորովին վերջերս Հիսուսը հաղթականորեն մտել էր Երուսաղեմ: Սակայն «Օվսաննա» բացականչություններն արագ փոխարինվել էին հարցերով: Ի՞նչ կլինի այժմ: Արդյո՞ք Հիսուսը թագադրված Արքա կդառնա:

Զատիկին հավաքված մարդկանց մեջ հույներ կային: Ուշադրություն դարձրեք, թե ինչ են ասում նրանք Փիլիպոսին. «Տե՛ր, կամենում ենք Հիսուսին տեսնել»: Այլ կերպ ասած, նրանք ցանկանում էին հանդիպել Տիրոջը: Նրանք փափագում էին Նրա հետ լինել, փափագում էին սովորել Նրանից: Ինչպիսի՜ վկայություն Քրիստոսի և Նրա լուրի համապարփակ բնույթի մասին: Որքա՜ն ցավալի է, որ նրանք, ովքեր պետք է ասեին այդ նույնը, ուզում էին ազատվել Նրանից:

Հնարավոր է, հույները մոտեցան Փիլիպոսին այն պատճառով, որ բոլոր աշակերտներից միայն նա ուներ հունական անուն: Լինելով Բեթհեզդայի բնակիչ, որը ձկնորսական առևտրային կենտրոն էր, նշանակում է նաև՝ յուրատեսակ մշակութային խառնարան՝ նա, հավանաբար նրանց լեզվով էր խոսում: Համարը ենթադրում է, որ Հիսուսն

Ինքը այդ պահին տեղում չէր: Գուցե, Նա ծառայության էր մասնակցում մոտերքում ինչ-որ տեղ, որտեղ միայն հրեաներ կարող էին գտնվել:

Սակայն հետո, մոտենալով արտաքին բակին, Իր աշակերտներին և Իր հետ հանդիպել ցանկացող հույներին, Հիսուսը բավարարեց այդ մարդկանց ցանկությունը: Տեսեք, թե ինչ է ասում Նա. «Եթե մեկը ծառայի Ինձ»: Այս խոսքերը վերաբերում են յուրաքանչյուր մարդու, ով ցանկանում է հետևել Հիսուսին՝ տղամարդու, կնոջ, հրեայի կամ հույնի. նրանք կարող են դառնալ Նրա հետևորդները, սակայն դրա համար հարկ կլինի գին վճարել:

Ի՞նչ գին էր դա: Ինչպե՞ս ենք մենք հասկանում այդ խոսքերի իմաստը: Տե՛ս Հովհաննես 12.25: _____

_____

Ապա, բոլոր արտասահմանցիների ներկայությամբ, երկնքից հռչակվեց դատաստանը և հաղթանակը հաստատող լուրը: Հիսուսն ասաց, որ այդ լուրն Իր համար չհնչեց, այլ իրենց՝ հրեաների և հույների համար, որպեսզի ամրապնդվի նրանց հավատը: Քրիստոսի խոսքերն անմիջապես հաստատեցին այն, որ Նա կմահանա ամբողջ աշխարհի համար:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 5

Խորտակելով խոչընդոտները

Կարդացե՛ք Հովհաննես 7.35, 8.48 և Ղուկաս 10.27-37-ը: Ինչպե՞ս են այս համարները ցույց տալիս, թե ինչու աշխարհագրական, էթնիկական և այլ խոչընդոտներ չպետք է տեղ գտնեն քրիստոնյաների մեջ, ովքեր աշակերտներ են դարձնում բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներին: _____

_____

_____

Որոշ առաջնորդներ ատում էին Հիսուսին այն բանի համար, որ Նա սահմաններ չուներ: Եվ դարձյալ մենք հրեշավոր ծաղրանքի ենք հանդիպում. հենց այն մարդիկ, ովքեր պետք է առաջինն ընդունեին Նրան և Նրա լուրը, առավել կարծրասրտորեն հակառակվեցին Նրան: Իսրայելացի քահանաները ծաղրում էին Աստծո Որդուն, այն ժամանակ, երբ ոչ իսրայելացի ազգերը ընդունեցին Նրան՝ որպես Օծյալ: Ինչպիսի՜ մեծ, սթափեցնող դաս կա դրա մեջ նրանց համար,

ովքեր իրենց խորապես հոգևոր անձնավորություն են համարում (հնարավոր է՝ ոչ առանց պատճառի):

Դատապարտելով Քրիստոսին՝ նրանք ոչ միայն ասում էին, որ Նրա մեջ դև կա, այլ նաև սամարացի էին անվանում Նրան: Նրանք նույնիսկ ծիծաղում էին Նրա վրա այն բանի համար, որ Նա վկայում է հույներին՝ դրանով բացահայտ դրսևորելով արհամարհանք դրսևորելով բոլորի հանդեպ, ովքեր իրենց ազգին և հավատին չէին պատկանում: Իսրայելի առաջնորդների համար մտքից վեր էր, որ Հիսուսը որոշել էր ուսուցանել հույներին: Հիսուսն ուշադրություն էր դարձնում բնավորության, այլ ոչ թե էթնիկական ծագման վրա:

Այդ առնչությամբ հետաքրքիր է այն փաստը, որ Հիսուսն օգտագործեց սամարացու պատմությունը, որպեսզի հոգևոր մեծ դաս տա այն մասին, թե ինչ է նշանակում իսկապես կատարել Աստծո օրենքը: Կրոնական առաջնորդները, ովքեր կաշկանդվել էին ղևտական օրենքի և պղծությունների մասին իրենց խառնաշփոթ պատկերացումների մեջ, անտարբեր անցան վիրավոր մարդու կողքով: Արհամարհված արտասահմանցին՝ սամարացին, գիտակցաբար մարտահրավեր նետեց էթնիկական նախապաշարումներին՝ փրկելով անծանոթի կյանքը: Ինչպիսի կտրուկ հանդիմանություն բոլոր նրանց, ովքեր արհամարհանքով մերժում են կարիքավորին միայն այն պատճառով, որ այդ մարդը չի պատկանում իրենց էթնիկական, սոցիալական կամ մշակութային խմբին:

Մտածե՛ք այս վերջին դեպքի մասին, գուցե դու՞ք էլ երբևէ մերժել եք օգնություն ցուցաբերել կարիքավորին: Ինչպե՞ս եք արդարացրել ձեզ: Ինչպե՞ս կվարվեիք հիմա:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, մարտի 6

Մեծ հանձնարարություն

Կարդացե՛ք Հռոմեացիս 15.12, Գործք 1.7,8, Հովհաննես 11.51-53, Մատթեոս 28.19,20: Ի՞նչ կարևոր դաս կա այստեղ: Ինչպե՞ս է այն ներդաշնակ միաձուլվում Հայտնություն 14 գլխի երեք հրեշտակների լուրի հետ: _____

Աստծո աշխատանքը չի ավարտվի այնքան ժամանակ, քանի դեռ հավիտենական Ավետարանը, որ արտահայտվել է Հայտնություն 14 գլխում գրառված երեք հրեշտակների լուրում, չի հաղթահարել բոլոր

ցեղային, էթնիկական, ազգային և աշխարհագրական խոչընդոտները: Կոնկրետ ժամանակ չհայտնելով՝ Սուրբ Գիրքը ոչ երկիմաստորեն հաստատում է, որ Ավետարանը կտարածվի ողջ աշխարհով մեկ: Աստծո հաղթանակը և այդ հաղթանակի հռչակումը երաշխավորված են:

Կանխագուշակված է, որ ժողովուրդները կընդունեն այդ լուրը: Դա պետք է տեղի ունենա, բայց ո՞վ կդառնա Աստծո շնորհի տարածողը: Ո՞վ կմիանա Քրիստոսին՝ տապալելու ցեղային, էթնիկական և լեզվական խոչընդոտները, որոնք արգելակում են Ավետարանի տարածումը: Ովքե՞ր կդատարկեն իրենց դրամապանակները: Ովքե՞ր կզոհաբերեն երկրային բարեկեցությունը և կապվածությունները՝ հանուն երկնային գործի: Այս հարցերը պետք է մեզ տանք: Ի՞նչ ենք անում մարդկանց նվաճելու համար, ովքեր էլ նրանք լինեն և որտեղ էլ գտնվեն: Որքան ցավալի է, որ որոշ հավատացյալներ թույլ են տալիս, որ ցեղային կարծրատիպերը, մշակութային նախապաշարումները և սատանայի ստեղծած սոցիալական խոչընդոտները հետ պահեն իրենց՝ Ավետարանը եռանդուն հռչակելուց, այն ժամանակ, երբ աշխարհով մեկ ցրված իրենց եղբայրակիցները հաճույքով նվիրաբերում են իրենց կյանքը՝ Ավետարանը քարոզելու գործին:

«Մեր ավետարանչական աշխատանքի հաջողությունը ուղիղ համեմատական է մեր անձնազոհ զոհաբերական ջանքերին: Միայն Աստված կարող է գնահատել հանուն նրա կատարված աշխատանքը, որ ավետարանական լուրը հռչակվի հստակ և որոշակի: Նոր դաշտեր են յուրացվում, և եռանդուն աշխատանք է ծավալվում: Մենք ցանում ենք ճշմարտության սերմերը, և լույսը լուսավորում է շատ մտքեր՝ օգնելով ավելի լավ տեսնելու Աստծուն և ավելի ճիշտ հասկանալու, թե ինչպիսի բնավորություն է անհրաժեշտ ձևավորել: Հազարավոր մարդիկ գնում են ճշմարտության ճանաչմանը, որ դրսևորվել է Հիսուսում: Նրանք լցվում են հավատով, որ գործում է սիրով և մաքրում հոգին» (Է. Ուայթ, «Վկայություններ եկեղեցու համար», հտ. 6, էջ 28):

ՈՒՐԲԱԹ, մարտի 7

Հեպագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Առաքյալների գործերը» գրքից կարդացեք «Մեծ հանձնարարարություն», էջ 25-34, «Պենտեկոստե», էջ 35-46, գլուխները և «Դարերի փափագը» գրքից՝ «Տաճարի արտաքին

բակում», էջ 621-626, «Գթասիրտ սամարացին», գլուխները էջ 497-505:

«Մի սամարացի ճանապարհորդելու ժամանակ՝ հասավ այն տեղը, որտեղ տառապյալն էր: Տեսնելով նրան՝ սամարացին խղճաց և չհարցրեց, թե ո՞վ է այդ անծանոթը՝ հրեա՞, թե՞ հեթանոս:

Այսպես բոլոր ժամանակների համար տրվեց «Ո՞վ է իմ մերձավորը» հարցի պատասխանը: Քրիստոսը ցույց տվեց, որ մեր մերձավորը միայն նա չէ, ով պատկանում է մեր եկեղեցուն կամ դավանում է մեր հավատը: Ոչ մի նշանակություն չունի ո՛չ ազգությունը, ո՛չ մաշկի գույնը, ո՛չ դասակարգային պատկանելությունը: Մեր մերձավորը յուրաքանչյուրն է, ով մեր օգնության կարիքն ունի: Մեր մերձավորը յուրաքանչյուրն է, ում հոգին վիրավորված է և խեղված մարդկային ցեղի թշնամու կողմից: Մեր մերձավորները բոլոր մարդիկ են, ովքեր պատկանում են Աստծուն» (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 503):

Հարցեր քննարկման համար

1. Ինչի՞ մասին է խոսում մեր ֆինանսական սատարումը համաշխարհային եկեղեցու առաքելությանը, ի՞նչ է ասում մեր նվիրվածության աստիճանի մասին ավետարանչական հանձնարարությանը: Ինչո՞ւ մենք չպետք է սահմանափակվենք միայն ֆինանսական սատարումով: Եկեղեցական պահպանության ներքո գտնվող հիմնադրամները ինչպե՞ս կարող են այժմ ծառայել միջմշակութային ավետարանչության գործին:
2. «Մենք իրավունք չունենք մտածելու, թե Ավետարանի գործը կախված է գլխավորապես ծառայողից: Աստված յուրաքանչյուր մարդու որոշակի աշխատանք է հանձնարարում՝ կապված Իր արքայության հետ: Քրիստոսի անունը դավանող ամեն ոք պետք է լուրջ, անշահախնդիր աշխատող լինի՝ պատրաստ հետևելու ճիշտ սկզբունքների: Յուրաքանչյուր հոգի պետք է եռանդուն մասնակցություն ունենա Աստծո գործի առաջխաղացման մեջ: Ինչպիսին էլ լինի մեր կանչվածությունը, մենք՝ որպես քրիստոնյաներ, պարտավոր ենք աշխատել՝ աշխարհին հռչակելով Քրիստոսին: Մենք պետք է ավետարանիչներ լինենք և որպես գլխավոր նպատակ՝ ունենանք Քրիստոսի համար հոգիներ ձեռք բերելը» (Է. Ուայթ, «Վկայություններ եկեղեցու համար» հտ. 6, էջ 427): Դասարանում մտորե՛ք գրվածի նշանակության մասին և բոլորդ միասին հարցրեք ձեզ, թե ուրիշ ի՞նչ կարող էիք անել՝ այն աշխատանքը ավարտին հասցնելու գործում, որին ենք կանչված ենք բոլորս:

3. Մտորե՛ք Հովհաննես 12.25-ում գրված Հիսուսի խոսքերի շուրջը: Ի՞նչ է նշանակում «Իր անձն ատողը այս աշխարհում»: Ինչպե՞ս պետք է արտահայտենք այդ «ատելությունը»:

ԾԱՌԱՅԵԼՈՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔՆՈՐԴՆԵՐԻՆ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ղուկաս 6.12-16, Հովհաննես 16.7-14, Ղուկաս 6.20-49, Երեմիա 50.31, Եսայիա 57.15, Գործք 1:

Հիշելու համարը.

«Եվ այն օրերումն եղավ, որ ելավ սարը աղոթք անելու, և ողջ գիշերն անցկացրեց աղոթք անելով առ Աստված: Եվ երբ որ առավոտ եղավ, կանչեց Իր աշակերտներին, և ընտրեց նրանցից տասնեւերկուսին, որոնց առաքյալ էլ անվանեց» (Ղուկաս 6.12,13):

Չնայած Հիսուսը միշտ եռանդուն ձևով աշակերտության էր տանում մարդկանց, հասկանում էր, որ Իր երկրային տարագրությունը կարճ կլինի: Այդ պատճառով Նա սովորեցնում էր աշակերտներին, որպեսզի նրանք կարողանան շարունակել Իր աշխատանքը Իր համբարձվելուց հետո: Քրիստոսը նրանց Ուսուցիչն էր և Մարզիչը: Չնայած ուսուցանել և մարզել հասկացությունները հարազատ են, *ուսուցումը* սովորաբար ենթադրում է գիտելիքների փոխանցում, այն դեպքում, երբ *մարզումը* ենթադրում է հմտությունների ձևավորում կամ յուրացում գործնականում և վարժությունների միջոցով:

Աշակերտներին ղեկավարության պատրաստելը, իհարկե, իր մեջ ներառում էր գիտելիքներ ստանալը, սակայն առաջին տեղում հոգևոր աճն էր: Նրանք կարիք ունեին հավատի հոգևոր փորձառության, դժվարություններին դիմանալու, սրբագործման և անձնազոհության, ինչպես նաև վարդապետությունը և աստվածաբանությունը բանական ձևով հասկանալու: Միայն գիտելիքները բավական չէին այն բանի համար, որպեսզի կարողանային դիմակայել առջևում իրենց սպասվող դաժան փորձություններին: Հիսուսը նրանց տվեց և՛ մեկը, և՛ մյուսը:

Ղեկավարությունը սկսվում է այստեղ

Քրիստոսի՝ երկրի վրա գտնվելը հարաբերականորեն կարճ էր: Այդ պատճառով չէր կարելի հապաղել՝ աշակերտներին ուսուցանելու հարցում: Ո՞ւմ էր պետք ընտրել: Քանի՞ հոգի պետք է լինեն նրանք: Անկասկած, Հիսուսի աշակերտները հարյուրներով էին հաշվվում: Արդյո՞ք պետք է ուսուցանել յուրաքանչյուրին: Քրիստոսը հասկանում էր, որ ղեկավարություն ուսուցանելը առավել արդյունավետ կլինի փոքր խմբերում, այլ ոչ թե զանգվածային հավաքներում դասախոսություն կարդալու ժամանակ: Քրիստոսի «ուսանողների» առաջին խումբը կազմված էր ոչ մեծ թվով մարդկանցից:

Ուսումնասիրե՛ք Ղուկաս 6.12-16: Ի՞նչ արեց Հիսուսն Իր համար աշակերտներ ընտրելուց հետո, և ինչո՞ւ էր դա այդքան կարևոր: _____

_____

Ճիշտ ընտրություն համար առանձնահատուկ իմաստություն էր պահանջվում: Հիսուսը աղոթքով դիմեց Իր Երկնային Հորը՝ այդ իմաստությունը ստանալու համար: 21-րդ դարում նույնպես ծառայության թեկնածուների ընտրությանը պետք է նախորդի աղոթքը: Քրիստոսը հավատում էր, որ զորեղ աղոթքի կարիք ունի, որպեսզի ստանա անհրաժեշտ իմաստությունը: Ուրեմն ինչքան ավելի շատ պետք է աղոթեն ժամանակակից քրիստոնյաները աստվածային իմաստնության համար՝ ընտրելով այն մարդկանց, ովքեր պատասխանատու են՝ հետևելու մեծ հանձնարարությունը իրականացնելու գործընթացին:

Ընտրելով տասներկուսին՝ Հիսուսը նրանց անվանեց առաքյալներ՝ իր համար վստահելի ներկայացուցիչներ՝ օժտելով նրանց հոգևոր իշխանությամբ: Ակնհայտ է, որ աշակերտների մի մեծ խումբ նայում էր այդ *նվիրաբերմանը* կամ *նշանակմանը,* առանց որևէ նախանձի կամ բացասական զգացումի: Ավելի ուշ Հիսուսը նշանակեց 72 աշակերտներից կազմված մի խումբ (Ղուկաս 10.1,17, տե՛ս РБО թարգմանություն). հնարավոր է՝ կային նաև այլ խմբեր, որոնց մասին գրված չէ Սուրբ Գրքում: Սակայն տասներկու առաքյալները պահպանում էին իրենց նույնականացումը՝ որպես Հիսուսի հետ առանձնահատուկ մտերմությամբ կապված մարդիկ: Նրանց վրա դրված էր մեծ պատասխանատվություն, այդ պատճառով նրանցից պահանջվում էր ուժեղացված նախապատրաստություն և մեծ նվիրվածություն: Այդ-

պիսի համակարգումը ենթադրում էր կազմակերպչական կառուցվածք առաջին քրիստոնյաների միջավայրում: Այդ կազմակերպության ղեկավարներին Քրիստոսն օժտեց ընդունակություններով և կրթությամբ, որը համապատասխանում էր նրանց վրա դրված առաջադրանքներին:

Մտածե՛ք, թե աղոթքի մեջ ինչքան ժամանակ էր անցկացնում Հիսուսը: Ի՞նչ պետք է ասի դա մեզ մեր աղոթքի կյանքի մասին: Ի՞նչ է տալիս աղոթքը անձամբ ձեզ:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, մարտի 10

Գիտելիք և փորձառություն, մաս 1

Տեղեկատվությունը Հիսուսի լուրի կարևորագույն մասն էր: Միայն տեղեկատվությունը չի կարող վերափոխել, սակայն ցանկացած վերափոխում իր մեջ ներառում է տեղեկատվությունը: Իհարկե, գաղափարներն ինքնին չեն կարող փոփոխություններ նախաձեռնել, սակայն մարդկային սրտերում աշխատող Աստծո Հոգին համարվում է դարձի համար անհրաժեշտ անփոխարինելի բաղկացուցիչ:

Կարդացե՛ք Հովհաննես 16.7-14-ը: Ի՞նչ է ասում այստեղ Հիսուսը, և դա ինչպե՞ս է օգնում մեզ հասկանալու, թե որքան սահմանափակ է բանական գիտելիքն ինքնին՝ ճշմարիտ քրիստոնեության ըմբռնման և փորձառության համար: _____

_____

Աստվածաշնչյան գիտությունը Աստծո Հոգու հետ միասին մի որոշակի հոգևոր միասնություն է, որը վերափոխում է ինչպես առանձին անձնավորության, այնպես էլ խմբի: Հանուն մեկի կամ մյուսի՝ ուրիշներին աշակերտ դարձրած մարդիկ պետք է ջանք թափեն՝ հավատի և ուսումնասիրության համար:

Քրիստոնեությունը բարձր է գնահատում միտքը, մտածողությունը և երևակայությունը: Սուրբ Գրքում հիմնավորված մտքի առկայությունը, հուդայականության մեջ ուսուցիչների հանդեպ դրսևորված մեծ հարգանքը և այն թանկարժեք ուշադրությունը, որ հատկացնում էին դպիրները հին ձեռագրերը պահպանելու համար, վկայում են ճանաչության կարևորության մասին:

Քրիստոնեությունը իռացիոնալ հավատ չէ: Եվ, այնուամենայնիվ, որոշ քրիստոնյաներ հույզերը, զգացմունքները և փորձառությունները վեր են դասում գիտելիքներից: Մտածողության այդպիսի տեսակը ենթադրում է, որ այն, ինչին մարդիկ հավատում են, հարաբերականո-

րեն անկարևոր է, որովհետև մեն միակ փորձառությունն է, որ նշանակություն ունի: Հնազանդությունը և հավատարմությունը առանձնահատուկ ճշմարտություններին՝ համարվում են հարաբերականորեն անկարևոր, հոգևոր ճշմարտացիության չափորոշիչներ են դառնում հույզերը և կրոնական գրգռվածությունը:

Սուրբ Գրքի գոյությունն իսկ հակասում է փորձառության վրա հիմնված այդ անիմաստ հմայվածությանը: Փորձառությունն առանց գիտելիքի դառնում է «լիցքավորված ռեակտիվ ռումբ»՝ անորոշ ուղղությամբ արձակված: Եվ հակառակը, գիտելիքը առանց փորձառության անկյանք է և հաճախ օրինապահության է վերածվում: Իսկական քրիստոնեական առաջնորդները հասկանում էին այդ բոլոր բաղկացուցիչների զարգացման անհրաժեշտությունը ոչ միայն իրենց մեջ, այլ նաև նրանց, ում հետ իրենք աշխատում էին:

Մտածե՛ք ձեր հավատի հիմքի մասին: Միևնույն ժամանակ ի՞նչ տեղ է զբաղեցնում նրանում փորձառությունը այնտեղ: Ինչո՞ւ մենք և՛ մեկի, և՛ մյուսի կարիքն ունենք:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 11

Գիտելիք և փորձառություն, մաս 2

Կարդացե՛ք Ղուկաս 6.20-49-ը: Այդ համարներում ի՞նչ ձևով են բացահայտվում գիտելիքը և փորձառությունը: Այսինքն՝ ինչպե՞ս են նրանք միահյուսվում կերպ, որ տեսանելի է թե՛ մեկի, թե՛ մյուսի անհրաժեշտությունը ոչ միայն Տիրոջ հետ մեր կյանքում, այլ նաև ավետարանչության ծառայության մեջ: _____

_____

Հոգևոր գիտելիքը անհրաժեշտ է հոգևոր վերափոխման համար: Քրիստոսն Ինքը «ավագ Ուսուցիչ» էր համարվում: Բաց առափնյա տեսարաններով ու լեռներով գունազարդված, Աստծո արարչագործությամբ ձևավորված դասասենյակներում Քրիստոսը փոխանցում էր վերափոխող գիտելիքները: Սուրբ Հոգին արթնացնում էր քնած խիղճը՝ այդ գիտելիքները ընդունելու համար: Ուսումնառությունը առանց փորձառության անկատար կլինի, սակայն փորձառությունը պետք է ուղղորդվի իմացությամբ:

21-րդ դարի ավետարանիչները *պետք է* խնամքով ուսումնասիրեն Սուրբ Գիրքը՝ հոգևոր ճշմարիտ տեղեկատվության աղբյուրը: Նրանք պետք է սերմեն նաև աստվածաշնչյան ուսմունքը՝ ուշադրություն

չդարձնելով լուրի հանրաճանաչության աստիճանին կամ անձնական հարմարություններին: Աստված համառություն է սպասում փորձառու հավատացյալներից, որ նրանք համբերատար ձևով ուղղորդեն նորադարձներին, որ նրանք հասկանան և գիտակցեն հրաշալի քրիստոնեական ճշմարտությունների արժեքը, որ ընդունակ է կյանքեր փոխելու, հասկանան հատկապես ներկա ժամանակի համար ճշմարտությունները, որ տրված են երեք հրեշտակների լուրում:

Աշակերտության ուղղորդելու համատեքստում ի՞նչ է ասում Հիսուսը Ղուկաս 6.39-ում, որ պետք է հիշի յուրաքանչյուր մարդ, ով ձգտում է աշակերտության առաջնորդել մարդկանց: Ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ մենք այնպիսին չենք, ինչպիսին նրանք, ում մասին այստեղ նախազգուշացնում է Հիսուսը: __

_____

Վերջին հաշվով, գիտության և փորձառության համադրումը, որոնք տանում են անշահախնդիր սիրո, այն ամենամեծ ուժն է, որը կարող է ունենալ ավետարանիչը:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 12

Առաջին ղեկավարները

Ուշադրության է արժանի այն փաստը, որ Հիսուսն ապագա ղեկավարներ ընտրություն կատարեց ամենահասարակ, ավելի քիչ կրթված մարդկանցից: Հիսուսը չընտրեց ատյանի կրթված կամ պերճախոս անդամներին: Անցնելով ինքնաարդար ուսուցիչների կողքով՝ Տերն ընտրեց հասարակ, անգրագետ այրերի՝ քարոզելու այն ճշմարտությունները, որոնք պետք է շուռ տային աշխարհը: Նա մտադրություն ուներ սովորեցնել նրանց, որպեսզի նրանք դառնան Իր եկեղեցու ղեկավարները: Նրանք էլ իրենց հերթին պետք է ուրիշներին սովորեցնեին և ավետարանական լուրով ուղարկեին աշխարհ: «Հանձնարարված աշխատանքը հաջողությամբ կատարելու համար նրանք պետք է օժտված լինեին Սուրբ Հոգու զորությամբ, որովհետև Ավետարանը քարոզվում է ոչ թե մարդկային ուժով և իմաստությամբ, այլ Աստծո զորությամբ» (Է. Ուայթ, «Գործք առաքելոց», էջ 17):

Ի՞նչ են ասում մեզ հետևյալ համարներն այն մասին, թե ինչո՞ւ Քրիստոսն Իր եկեղեցու ղեկավարության համար ընտրեց հենց այդպիսի մարդկանց, այլ ոչ թե նրանց, ովքեր, ինչպես ընդունված էր համարել, ղեկավարի համար ավելի հարմար

հատկանիշներ ունեին: Սոփոնիա 2.3, Մատթեոս 11.29, Երեմիա 50.31, Եսայիա 57.15:

Սակայն մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի սխալ ենթադրություններ չանենք այն մասին, թե ինչու Հիսուսը ընտրեց հենց այդպիսի մարդկանց: Հիսուսը դեմ չէր կրթված մարդկանց. Նա ինքն արդեն վաղ հասակից մեծ գիտելիքներ էր ցուցադրել (Ղուկաս 2.46, 47): Պատճառն այն է, որ շատ հաճախ լավ կրթություն, հարստություն կամ իշխանություն ունեցող մարդիկ պատրաստ չեն խոնարհվելու այնպես, ինչպես անհրաժեշտ է խոնարհվել ղեկավարներին, որպեսզի Տերը կարողանա օգտագործել նրանց: Իհարկե, բոլոր կրթված մարդիկ չէ, որ այդպիսին են. Տերն օգտագործում էր նրանցից ոմանց (հիշե՛ք Նիկոդեմոսին, Հովսեփ Արիմաթացուն, տե՛ս նաև Գործք 6.7): Սակայն շատ հաճախ նրանք, այնուամենայնիվ, փակ են Սուրբ Հոգու առաջնորդության համար:

Կարդացե՛ք Ա Կորնթացիս 9.19 և Փիլիպեցիս 2.3-ը: Բնավորության ինչպիսի՞ հատկանիշներ են դրսևորված այստեղ և ինչո՞ւ են այդ հատկանիշներն այնքան կարևոր ոչ միայն ղեկավարի, այլ նաև Քրիստոսի անունը դավանող յուրաքանչյուր մարդու համար: Ի՞նչ կարող ենք անել՝ կյանքում այդ որակներն ունենալու համար:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, մարտի 13

Ի՞նչ թողեց Հիսուսը

Գալիք սերունդները վկայում են նախորդների ջանքերի հաջողության մասին: Եթե ներդրված ջանքերը երկարատև դրական արդյունքներ են տալիս, ապա անհրաժեշտ է ուսումնասիրել և կրկնել այն սկզբունքները, որոնք օգտագործվել են: Իսկ արդյո՞ք աշակերտության դաստիարակությանն ուղղված Քրիստոսի մեթոդաբանությունը զգալի արդյունքների է հանգեցրել:

Դե իհարկե, այո՛: Այն փոխել է աշխարհը: Փաստորեն, ավելի քան 2000 տարի հետո մեզանից ոչ մեկը չէր կարող կարդալ Աստվածաշունչը, եթե միայն Քրիստոսը հաջողություն չունենար եկեղեցու առաջին ղեկավարների ուսումնառության մեջ:

Կարդացե՛ք Գործք 1-ը: Ի՞նչ է ասում մեզ վաղ եկեղեցու ձևավորման իրադարձություններին վերաբերող այս գլուխը՝ Աստծո ընտրած ղեկավարության նվիրվածության անհրաժեշ-

տության մասին: Ի՞նչ էին ցանկանում տեսնել աշակերտները ղեկավարի մեջ (տե՛ս 22 համարը): Ի՞նչ կարող ենք սովորել այս իրադրությունից, երբ լավ ղեկավարներ ենք որոնում: _____

Հիսուսը հաստատեց Իր թագավորությունը և ցույց տվեց այն սկզբունքները, որոնք ապահովում են նրա աճը: Ճանապարհ հարթելով խավարից դեպի լույսը՝ Քրիստոսն ընտրեց ղեկավարներ, որոնց թուլությունները պարուրվեցին Նրա զորությամբ, որովհետև նրանք լիովին կախված էին Իրենից: Չնայած կրոնական առաջնորդներն արգահատանքով էին վերաբերվում նրանց, որովհետև նրանք կրթություն չունեին, այնուամենայնիվ, այդ մարդիկ մթագնեցին փարիսեցիներին՝ իրենց անկեղծությամբ, խոնարհությամբ, կախվածությամբ և ճշմարտացիությամբ: Ինչքան կարևոր է, որ մենք բոլորս, անկախ եկեղեցում մեր զբաղվածության տեսակից, դրսևորենք այդ հատկանիշները: Որոշ ժամանակ հետո պաշտոնապես բարձր կրթություն ստացածները և հասարակության մեջ բարձր դիրք ունեցողները դարձան եկեղեցու մի մասը:

«Աշակերտներին՝ Քրիստոսի բանբերներին վիճակված էր ցնցել աշխարհը: Այն փաստը, որ նրանք պարզասիրտ մարդիկ էին, չէր թուլացնում, այլ ուժեղացնում էր նրանց ազդեցությունը, որովհետև ունկնդիրների ուշադրությունը կենտրոնանում էր ոչ թե նրանց վրա, այլ Փրկչի, Ում նրանք քարոզում էին, և ով անտեսանելիորեն նրանց հետ էր: Առաքյալների հրաշալի ուսմունքը, նրանց խիզախ և հավատարիմ վկայությունը պետք է համոզեին բոլորին, որ նրանք գործում են ոչ թե իրենց, այլ Քրիստոսի զորությամբ» (Է. Ուայթ« Գործք առաքելոց», էջ 22,23):

Ի՞նչ եք ցանկանում տեսնել եկեղեցու ղեկավարների մեջ: Ինչո՞ւ: Անվանե՛ք ձեզ համար ամենակարևոր երեք որակները, որոնք դուք ցանկանում եք տեսնել: Շաբաթօրյա դասի ժամանակ կիսվե՛ք ձեր պատասխանով նաև համեմատե՛ք մնացածների պատասխանների հետ:

ՈՒՐԲԱԹ, մարտի 14

Հետագա ուսումնասիրության համար

Է.Ուայթի «Դարերի փափագը» գրքից կարդացեք «Առաջին ավետարանիչները», էջ 349-358, «Վերջին ուղևորությունը Գալի-

լեայից», էջ 485-496, և «Լեռան քարոզը» գլուխները, էջ 298-314, «Առաքյալների գործերը» գրքից՝ «Տասներկուսի ուսուցումը», էջ 17-24, «Մեծ հանձնարարություն», էջ 25-34, և «Յոթ սարկավագներ», էջ 87-96 գլուխները:

«Որտեղ էլ որ Քրիստոսը աշխատեր, ամենուր գտնվում էին հոգիներ, ովքեր գիտակցում էին իրենց կարիքը, փափագում էին և ծարավի էին ճշմարտության: Եկել էր ժամանակը՝ Նրա սիրո լուրը ուղարկելու նաև այդ ծարավ սրտերին: Նրանց մոտ էլ ուղևորվեցին Քրիստոսի ներկայացուցիչները: Հավատացյալների համար նրանք համարվում են Աստծո կողմից ընտրված ուսուցիչներ: Երբ Փրկիչը նրանց հետ չլինի, այդ մարդիկ առանց խրատատուի չեն մնա:

Առաջին ճանապարհորդության ժամանակ աշակերտները պետք է ուղևորվեին միայն այնտեղ, ուր արդեն եղել էր Հիսուսը և ուր թողել էր Իր ընկերներին: Աշակերտներին ճանապարհի համար նախապատրաստելը չափազանց պարզ էր: Ոչինչ չպետք է շեղեր նրանց իրենց մեծ գործից կամ որևէ ձևով առաջացներ ունկնդիրների հակազդեցությունը՝ դրանով փակելով ապագա աշխատանքի դռները» (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 351):

Հարցեր քննարկման համար

1. Դասարանում քննարկե՛ք հինգշաբթի օրվա դասի վերջին հարցին տրված ձեր պատասխանները: Ի՞նչ եզրակացրիք ձեր պատասխաններից:
2. Կարդացե՛ք Գործք 6.1-6-ը: Ինչո՞ւ է այստեղ նկարագրված դեպքը բացահայտում այն պատճառներից մեկը, ըստ որի՝ եկեղեցին կարիք ունի լավ ղեկավարների:
3. Մտորե՛ք քրիստոնեական կյանքում փորձառության և ճանաչողության միջև հավասարակշռվածության գաղափարի շուրջ: Հնարավո՞ր է արդյոք, որ տարբեր մարդիկ տարբեր հաշվեկշիռների կարիք ունենան: Եթե՝ այո՛, ապա ինչպե՞ս սովորենք նրբանկատ և ուշադիր լինել այդ տարբերության հանդեպ՝ մարդկանց աշակերտության տանելու մեր ջանքերում: Նայե՛ք նաև այս համարին. «Եվ որովհետև հրեաները նշան են ուզում, և հույները իմաստություն են խնդրում» (Ա Կորնթացիս 1.22): Ինչպե՞ս է այս համարը բացում ճանաչողության և փորձառության միջև տարբերությունը:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ԵՎ ՀՆՁՎՈՐՆԵՐԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացե՛ք.

Հովհաննես 1.40-46, 4.28-30, Ղուկաս 24.4-53, Գործք 1.6-8, Մատթեոս 9.36-38, Ղուկաս 15:

Հիշելու համարը.

«Սրանով փառավորվեց իմ Հայրը, որ շատ պտուղ բերեք. և իմ աշակերտները լինեք» (Հովհաննես 15.8):

Այս շաբաթվա դասը շատ առումներով համարվում է նախորդ դասի շարունակությունը: Քրիստոսը հոգևոր առաջնորդներ նշանակեց որոշակի նպատակով՝ հռչակել Աստծո արքայությունը: Սկզբունքները և մեթոդաբանությունը, որոնք կիրառեց Քրիստոսը, պետք է մնան որպես հիմք այսօրվա քրիստոնեական նախապատրաստության համար:

Այլ կերպ ասած, ղեկավարների դաստիարակության ժամանակակից տեսությունները երբեք չպետք է դուրս մղեն Քրիստոսի դրած հիմքերը: Եթե պարծենկոտությունը և փառքը գրավում են հոգևոր աճի տեղը, արդյունքում ստացվում է չնչին մի բան և հոգևոր անպտղություն: Երբ հավատորսությունը դուրս է մղում ապաշխարությանը, փոփոխությանը և հոգևոր վերափոխանը, առաքելությունը անհաջողության է մատնվում: Երբ առաջնորդներին սովորեցնում են ղեկավարել նոր անդամներ գրավելու արշավները, աշխատել ՁԼՄ-ների և հասարակայնության հետ, սակայն չեն պատրաստում հոգևոր պայքարի, դա ճակատագրական սխալ է: Ճշմարիտ ավետարանչությունը և աշակերտների դաստիարակությունը կենտրոնացածված է հետևյալ կետերի վրա. 1. մեր մեղավորության ընդունումը, 2. անկեղծ ապաշխարություն, 3. բաց հոգևոր նվիրաբերում, և 4. Աստծո լուրի սերմերը ցանելու անհաղթահարելի ցանկություն:

ՄԻԱՇԱԲԹԻ, մարտի 16

Աղքատի հացը

Երբ Քրիստոսի երկրային ծառայությունը մոտենում էր ավարտին, Նա Իր ողջ ուշադրությունը կենտրոնացրեց աշակերտների վրա, որոնց ծառայում էր անշահախնդիր և որոնց խորապես սիրում էր: Նրանք չպետք է միայնակ մնային: Թեպետ Հիսուսը պետք է երկինք վերադառնար, բայց աշակերտներին խոստացավ ուղարկել Սուրբ Հոգին, Ով կոչված էր բավարարելու հոգևոր մերձության այն կարիքը, որ վայելում էին աշակերտները Հիսուսի ներկայությամբ: Հիսուսի խրատները Սուրբ Հոգու աշխատանքի վերաբերյալ այնքան կարևոր են, որ Հովհաննեսը այդ թեմային նվիրում է իր Ավետարանի մի քանի գլուխները: Հետաքրքիր է, որ Սուրբ Գրքի համաձայն, Աստծո Հոգին վկայում է Քրիստոսի մասին, չնայած Հոգին *չի* վկայում Նրա մասին, առանց մեր մասնակցության: Հենց Հոգու սատարման միջոցով էր, որ Քրիստոսի աշակերտները վկայեցին Հիսուսի ծառայության մասին: Աստված կարող էր հրեշտակներին հանձնարարել՝ հռչակելու ավետարանական լուրը, սակայն Իր ողորմածությամբ այդ սրբազան կանչվածությունը կատարելու համար Նա նշանակեց մեղավոր, սխալվելու հակված, անկանխատեսելի մարդկանց:

Կարդացե՛ք Հովհաննես 1.40-46, 4.28-30, 15.26,27, 19.35, 36-ը: Ի՞նչ են ասում մեզ այս համարներն այն մասին, թե ինչպես են մարդիկ Աստծո հետ միասին աշխատում հոգիների փրկության գործում: _____

_____

Ավետարանչությանը հետաքրքիր սահմանում է տրվել. «Երբ մի աղքատը մյուս աղքատին ասում է, թե որտեղ կարելի է հաց գտնել»: Այստեղ, անկասկած, առանձնանում է Անդրեասը: Նրա եղբոր՝ Պետրոսի գրածները մի օր կներառվեն Սուրբ Գրքի մեջ, Պետրոսի ծառայության մասին կգրվի սուրբ առաքյալների գործերում. Քրիստոսը նույնպես Պետրոսին համարում էր Իր երեք ամենամտերիմ աշակերտներից մեկը: Անդրեասը երբեք այդպիսի պատիվների չէր արժանանում: Եվ այնուամենայնիվ, նա առանձնահատուկ ճանաչում ստացավ՝ որպես մի մարդ, ով հետևում է Քրիստոսի պարզ խրատներին՝ մարդկանց դեպի Հիսուսը գրավելու համար:

Աստծուց ընտրված որքան շատ անոթներ՝ ավետարանչության հաջողակ առաջնորդներ՝ վարչարարության և ղեկավարության

բնագավառում, Քրիստոսին են բերվել այն հավատարիմ աշակերտների կողմից, ում անունները վաղուց մոռացվել են: Թեպետ այդ մարդիկ ինքնին նշանավոր չեն եղել, մտածե՛ք, թե որքան կտուժեր Աստծո գործը, եթե չլիներ նրանց հավատարիմ վկայությունը Հիսուսի մասին: Քրիստոսը պատրաստեց Իր աշակերտներին ավելի մեծ գործերի համար՝ շնորհիվ այն բանի, որ նախ հասարակ առաջադրանքներ էր տալիս նրանց, ինչը նրանք կարող էին լավ կատարել: Սամարացի կինը, Փիլիպոսը և Անդրեասը մեզ ցույց են տալիս պարզ վկայության և սրտալի հրավերի զորությունը: Մենք բոլորս կոչված ենք նույն կերպ վարվելու:

ՄԻԱՇԱԲԹԻ, մարտի 17

Երբ Հիսուսը համբերության էր դրդում

Կարդացե՛ք Ղուկաս 24.47-53, Գործք 1.6-8, 16.6-10-ը: Ինչո՞ւ է անհրաժեշտ սպասել Սուրբ Հոգու հեղմանը: Ո՞րն էր Հոգու դերը վաղ եկեղեցու ավետարանչական ծառայության մեջ: Ի՞նչ քաջալերանք կարող են քաղել Պողոսի փորձառությունից ծանր հիասթափությունների բախվող ժամանակակից քրիստոնյաները: Համբերությանը և սպասումներին վերաբերող ինչպիսի՞ դասեր են տրված այդ հատվածներում: _____

_____

_____

Զրույցների և անձնական օրինակի միջոցով Հիսուսը համբերության դասեր տվեց աշակերտներին: Բախվելով մոլեռանդության, անկրթության, անընմբռնողության և խարդավանքների՝ Քրիստոսն, այնուամենայնիվ, համբերություն էր դրսևորում: Այդպիսի կայունությունը խարսխվում էր Աստծո Հոգուց լիակատար կախվածության վրա: Հիսուսը հասկանում էր, որ եթե աշակերտները չսովորեն ունենալ այդ նույն կախվածությունը, ապա արքայության առաջխաղացումը լուրջ դժվարություններ կունենա: Եվ հակառակը, եթե նրանք հենց ամենասկզբում յուրացնեն այդ դասը, ապա հետագա ծառայությունը կիրականանա՝ շարժվելով երկնային ձեռքով: Այդ պատճառով էլ Իր համբարձվելուց առաջ Նա հորդորեց նրանց սպասել:

Քրիստոսը ցանկանում է, որ ժամանակակից քրիստոնյաները նույնպես յուրացնեն այդ դասը: Բարի դիտավորություններով, սակայն ինքնավստահ քրիստոնյաները, ովքեր չեն ցանկանում համբերատար

սպասել Հոգու առաջնորդությանը, կարող են խանգարել և՛ իրենց, և՛ Աստծո Արքայությանը:

Պողոս առաքյալը ձգտում էր Բեթանիա ընկնել, սակայն նրա նպատակասլացությունը և համառությունը չխանգարեցին նրան՝ նրբանկատ լինելու Աստծո առաջնորդության հանդեպ, և նա չսկսեց դիմադրել Սուրբ Հոգու միջամտությանը: Առաքյալը հաճույքով ընդունեց Հոգու ցուցումները, որ Մակեդոնիա էր առաջնորդում իրեն: Այնտեղ նրա ծառայությունն ուղեկցվեց մի շարք հրաշքներով: Եթե Պողոսը տարվեր իր դիտավորությունները կյանքի կոչելու գործի մեջ, ապա եվրոպական առաքելությունը երկար ժամանակ անտերության կմատնվեր:

Ինչպե՞ս կարող ենք մենք, մեզ հատուկ անհանգստությամբ և անհամբերությամբ, սովորել համբերատար սպասել Հոգու առաջնորդությանը: Ինչպիսի՞ գործնական քայլեր կարող են նախաձեռնել ժամանակակից հավատացյալները՝ փորձելով իրենց մեջ այդպիսի համբերություն դաստիարակել: Համբերատարությունը, աղոթքի վստահությունը ի՞նչ են ասում մեզ Աստծո հետ մեր փոխհարաբերությունների մասին:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 18

Իշխանության գործադրումը

Համեմատե՛ք հետևյալ համարները. Մարկոս 6.7-13, Մատթեոս 16.14-19, 18.17-20, 28.18-20, Հովհաննես 20.21-23: Ի՞նչ են ասում դրանք այն իշխանության մասին, որով օժտված էին Հիսուսի աշակերտները: Ի՞նչ նշանակություն ունի դա այսօր մեզ համար:

_____

_____

_____

«Պետրոսը դրսևորեց այն ճշմարտությունը, որը եկեղեցու հավատի հիմքն է: Հիսուսը նույնպես մատնանշեց նրան՝ որպես բոլոր հավատացյալների Ներկայացուցիչ: Նա ասաց. «Եվ կտամ քեզ երկնքի արքայության բանալիները, և այն որ կապես երկրի վրա, կապված կլինի երկնքում. և այն որ երկրի վրա արձակես, արձակված կլինի երկնքում»:

«Երկնքի արքայության բանալիները». սրանք Հիսուսի խոսքերն են: Սուրբ Գրքի բոլոր խոսքերը պատկանում են Նրան և ամփոփված են Նրա մեջ: Այդ խոսքերը իշխանություն ունեն բացելու և փակելու

երկինքները: Նրանք մեզ հայտարարում են այն պայմանները, որոնց հիման վրա մարդիկ ընդունվում են կամ մերժվում: Եվ դրա համար էլ Աստծո խոսքը քարոզողների աշխատանքը համարվում է կյանքի կոչող կենդանարար բույր և կամ մահվան տանող մահաբեր հոտ: Նրանց աշխատանքի արդյունքները կգնահատվեն հավերժության մեջ» (Է. Ուայթ, «Դարերի փափագը», էջ 413, 414):

Ինչպես Հայրն ուղարկեց Հիսուսին, այնպես էլ Քրիստոսն ուղարկեց Իր աշակերտներին: Հոգու միջոցով Հայրն աստվածային զորությամբ օժտեց Քրիստոսին: Հոգու միջոցով Հիսուսը նույնպես աստվածային զորությամբ է օժտում Իր աշակերտներին, ինչը համապատասխանում է նրանց երկրային առաջադրանքներին: Քրիստոսի ոչ մի հետևորդ չպետք է մտավախություն ունենա, թե իրեն ինչ-որ բանից զրկել են: Յուրաքանչյուրին կտրվեն բոլոր անհրաժեշտ հմտությունները, տաղանդները, ընդունակությունները և ուժերը:

Երբեմն ղեկավարներն անտեսում են որոշ կարևոր սկզբունքներ: Որոշելով առաջադրանքները՝ ղեկավարը պետք է հաշվի առնի իրական հնարավորությունները, այլապես տապալումն անխուսափելի է: Ղեկավարի անվստահությունը հաճախ դրսևորվում է չափազանց իշխանատենչ վարքագծի, շրջապատի մարդկանց մտքերը, Աստծո պարգևած ստեղծագործական ընդունակությունները և անհատականությունը ստրկացնելու մեջ: Այդպիսի ղեկավարման արդյունքում աղքատացած, ենթակա օգնականը կորցնում է իր արդյունավետությունը: Նման վարքագիծը կարելի է համեմատել այն խմբավարի հետ, ով փորձում է նվագել միաժամանակ բոլոր գործիքների վրա՝ ստեղծագործության կատարման ընթացքը ղեկավարելու փոխարեն:

Հիսուսի օրինակը մեզ համար անգնահատելի է: Եթե ինչ-որ մեկը երբևէ իրավունք է ունեցել իշխելու և Իր կամքը թելադրելու, ապա Դա Հիսուսն է: Սակայն Նա, հակառակը, իշխանությամբ օժտեց ուրիշներին, նրանց հանձնարարեց աշխատելու և վկայելու այնտեղ, ուր Ինքը չէր եղել:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 19

Դաշտերի մշակները

«Եվ Նա ժողովուրդներին տեսնելով, գթաց նրանց վրա, որ հոգնած և ցիրուցան եղած էին, ինչպես ոչխարներ, որ հովիվ չունեն: Այն ժամանակ Իր աշակերտներին ասաց. հունձքը շատ է, բայց

մշակները՝ քիչ: Արդ՝ աղաչեցեք հնձի Տիրոջը, որ մշակներ հանի Իր հունձի մեջ» (Մատթեոս 9.36-38): Այսօր մեզ համար ի՞նչ կարևոր լուր կարող ենք քաղել այս համարներից: Ի՞նչ առաջադրանք կա ծառացած մեր առջև: _____

_____

_____

_____

Հոգևոր բերքն արդեն հասունացել էր, սակայն աշխատողները քիչ էին: Սրտի հողը նախապատրաստվել էր, հոգևոր սերմը՝ ցանվել, բարեհաջող աճը, հարուստ խոնավությունը և առատ արևի լույսը անհավատալի աճ էին ապահովել: Հասունացած հոգիները սպասում էին բերքահավաքին, բայց որտե՞ղ էին հնձվորները: Օգտագործելով պարզ, հեշտ հասկանալի բառային պատկերներ՝ Հիսուսը ձգտում էր մարդկանց մեջ առաջացնել ծառայելու մղում, ցանկություն:

Երբեմն քրիստոնյաները մյուս հավատացյալների հետ շփվելու, եղբայրական հարաբերությունների կարիք են զգում, ցանկանում են միասին լինել և դրա հետ մեկտեղ անտեսում են որոնող մարդկանց, ովքեր հասունացել են բերքահավաքի համար: Հնարավոր է, չգիտակցելով երկնքից իրենց վրա դրված պատասխանատվությունը կործանվող հոգիների համար, նրանք զբաղված են եկեղեցական գործերով, իրենց քաղաքացիական պարտականությունների կատարմամբ, շինարարությամբ և այլ արժեքավոր նախագծերով, որոնք պետք են հավասարակշռությունը պահպանելու համար: Այդ բոլորն անկասկած լավ է: Բարի դիտավորություններով լի՝ եկեղեցու անդամները երբեմն հարցականի տակ են դնում ավետարանչական քարոզչության արժեքը կամ այսպես են ասում. «Հովի՛վ, ավետարանչությամբ զբաղվելը լավ է, բայց արդյո՞ք մեզ պետք չեն ծրագրեր այն մարդկանց համար, ովքեր արդեն եկեղեցում են»:

Սա բավականին ազնիվ հարց է, չնայած ինչ-որ մեկը կարող է և հարցնել. «Մի՞թե Հիսուսը երբևէ դժգոհել է սերմը պահպանող մարդկանց անբավարար քանակի առումով»: Ընդհակառակը, Նա կոչ է արել աղոթել, որպեսզի ավելի շատ հնձվորներ լինեն:

Ինչպե՞ս կարող ենք գտնել ճիշտ հավասարակշռությունը՝ եկեղեցում գտնվող մարդկանց կարիքներին ծառայելու և ավետարանչական ծառայության միջև:

Կորսված և գտնված

Հիսուսը սիրում էր աշակերտներին և անձնական օրինակով ցույց տվեց, որ նրանք պետք է շփվեն մեղավորների հետ, ովքեր վատ համբավ ունեն, ինչպես, օրինակ, անառակները և մաքսավորները: Ուրիշ ի՞նչ ձևով պետք է նրանք աշակերտներ դարձնեին ամբողջ աշխարհը: Հաճախ Նրա ուսմունքը կենտրոնանում էր այդ մեղավորների վրա: Այն, որ Նա բնորոշում էր նրանց որպես «կորածներ», վկայում է Քրիստոսի մեծ ողորմածության մասին: Նա կարող էր բնորոշել նրանց որպես «խռովարարներ» (իսկ նրանք հենց այդպիսին էին) կամ «այլասերվածներ»: Սակայն Նա գերադասեց «կորածներ» անվանել նրանց:

«Կորածներ» բառն իր մեջ չունի այն բացասական իմաստը, ինչ ունեն այն մյուս բառերը: Ճանապարհից շեղված հոգիներին դատապարտելու և քննադատելու փոխարեն՝ մենք պետք է հետևենք Քրիստոսի օրինակին: Այն, որ այդ մարդիկ «կորսված» են, նշանակում է, որ պատասխանատվությունն ընկած է նրանց վրա, ովքեր որոնում են: Նվաստացուցիչ ակնարկները հեռացնում են կորսված մարդկանց: Իսկ չեզոք լեզուն խոսում է ընդունման և փոխհարաբերություններ հաստատելու հնարավորության մասին: Այդ պատճառով մենք պետք է զգույշ լինենք ոչ միայն բառերի ընտրության մեջ, այլ նաև հենց մտքերի մեջ, որովհետև մեր մտքերը կարող են մեծ չափով ազդել շրջապատող մարդկանց հետ մեր վերաբերմունքի վրա:

Բոլոր Ավետարանների միջով Հիսուսը դրդում է հավատացյալներին՝ դառնալու որոնողներ: Նա ցանկանում է, որ մենք սիրենք և հասնենք կորածներին՝ չնայելով, թե ինչպիսի մարդիկ են նրանք կամ ինչ կենսաձև են վարում:

«Ահա թե ինչն է համարվում ծառայություն, որն ընտրել է Աստված. «Լուծիր անիրավության կապանքները, բաց արա լուծի կոշկոռները. և ջարդվածներին ազատ թող տուր, և ամեն տեսակ լուծ կոտրեցեք, քեզ պես մարմին ունեցողից քեզ մի ծածկիր» (Եսայիա 58.6.7): Երբ դուք մեղավոր եք զգում ձեզ, փրկված միայն ձեր երկնային Հոր արյամբ, նուրբ կարեկցանք եք զգում մյուսների հանդեպ, որ տառապում են մեղքի մեջ: Դուք այլևս չեք սկսի նախանձով և կասկածանքով դիմավորել օտարի դժբախտությունը և ապաշխարությունը: Երբ եսասիրության սառույցը հալվում է ձեր սրտերում, դուք լիակատար ներդաշնակության մեջ եք

գտնվում Աստծո հետ և կկիսեք Նրա ուրախությունը մոլորվածների փրկության համար (Է. Ուայթ, «Քրիստոսի առակները», էջ 210, 211):

Ուսումնասիրե՛ք Ղուկաս 15-ը: Ի՞նչ կարևոր լուր է փոխանցվում այդ բոլոր առակների միջոցով: Ի՞նչ պետք է ասի այդ լուրը մեզ այն մասին, թե ինչպես է նայում Աստված կորսվածներին, և ո՞րն է մեր պատասխանատվությունը նրանց առաջ: _____

_____

_____

ՈՒՐԲԱԹ, մարտի 21

Հետագա ուսումնասիրության համար

«Դարերի փափագը» գրքից կարդացեք «Վերջին ուղևորությունը Գալիլեայից», էջ 485-496, «Ո՞վ է մեծը», էջ 436-440, գլուխները, «Առաքյալների գործերը» գրքից՝ «Տասներկուսի ուսուցումը», էջ 17-24, «Մեծ հանձնարարություն», էջ 25-34, «Պենտեկոստե», էջ 35-46, «Հոգու պարգևը», էջ 47-56, գլուխները:

«Խոր ինքնահետազոտության այդ օրերում, հոգևոր ծարավ զգալով,՝ նրանք աղաղակում էին Տիրոջը սուրբ օծության համար՝ խնդրելով ոչ միայն իրենց օրհնության համար. չէ՞ որ նրանց վրա էր դրված հոգիների փրկության գործը: Նրանք հասկանում էին, որ Ավետարանը պետք է քարոզվի աշխարհին, և ապավինում էին այն ուժին, որ խոստացել էր Քրիստոսը (Է. Ուայթ, «Գործք առաքելոց», էջ 37):

Հարցեր քննարկման համար

1. Քրիստոսի ո՞ր սկզբունքները պետք է կիրառեն ավետարանիչների ժամանակակից ուսուցիչները: Պատկերացրեք, թե ինչպիսի՞ն կլիներ նմանատիպ ուսուցումը ձեր եկեղեցում:
2. Հինգշաբթի օրվա դասում մենք անդրադարձանք լեզվին և նրա գործածությանը: Մտածեք այն բառերի և եզրույթների մասին, որոնք մենք՝ որպես Յոթերորդ օրվա ադվենտիստներ, հաճախ ենք օգտագործում: Թեպետ կարող ենք ինչ-ինչ բառեր դիտարկել որոշակի տեսանկյունով, մտածենք այն մասին, թե ինչպես կարող են հասկանալ այդ բառերը մեր եզրույթաբանությանը անծանոթ մարդիկ: Ինչպե՞ս պետք է

զգուշություն ցուցաբերենք բառերի ընտրության մեջ, հատկապես այն մարդկանց հետ շփվելիս, ում ցանկանում ենք նվաճել:

3. Մտածե՛ք այն օրինակի մասին, որին անդրադարձանք ավելի վաղ. «Մի աղքատ ասում է մյուս աղքատին՝ որտեղ գտնել հացը»: Արդյո՞ք դուք չեք գտնում, որ այստեղ շատ նրբորեն նշվում է հենց վկայության և ավետարանչության էությունը: Ինչո՞ւ է մեզ համար կարևոր այդ պատկերի և նրա նշանակության մասին հիշելը:
4. Ի՞նչ կարելի է ասել ձեր համայնքի մասին: Ինչի՞ վրա է նա ավելի շատ կենտրոնացած՝ իր և սեփական կարիքների՞, թե՞ բարի լուրը ավետելու: Ինչպե՞ս կարող է օգնել եկեղեցուն բարի լուրը ավետելու վրա կենտրոնանալը: Կամ, այլ կերպ ասած, եթե ձեր եկեղեցին ավելի շատ կենտրոնանար վկայության և բարի լուրը ավետելու վրա, հնարավոր է, նա ավելի քի՞չ հոգար սեփական կարիքները: Ինչպե՞ս կարող է հենց բարի լուրի ավետումը լուծել այդ կարիքները:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Այս շաբաթվա ուսումնասիրության համար կարդացեք.

Ղուկաս 12.49-53, Երկրորդ Օրինաց 21,15, Ա Կորնթացիս 9.24-27, Մատթեոս 18.8,9, Հովհաննես 14.1-3, Եբրայեցիս 11.32- 12.4:

Հիշելու համարը.

«Եվ մեր հույսը ձեզ համար հաստատ է. որովհետև գիտենք, թե ինչպես հարչարանքներին մասնակից եք, այնպես էլ՝ միսիթարությանը» (Բ Կորնթացիս 1.7):

Քրիստոնեության ողջ պատմության ընթացքում միլիոնավոր նահատակներ են իրենց կյանքը կամավոր զոհել Քրիստոսի համար: Նրանց բանտարկել են, տանջել և մահապատժի ենթարկել: Տասնյակ միլիոնավորներ զրկվել են աշխատանքից, դիմացել ծաղրանքների, վտարվել ընտանիքներից և հալածանքներ կրել, սակայն չեն թողել Քրիստոսին: Միայն Աստված գիտի, թե ինչքան տառապանքների են ստիպված եղել դիմանալ Իր հավատարիմ զավակները:

Իհարկե, Պողոսը նախազգուշացրել է. «Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթեոս 3.12): Պետրոսը նույնպես ասել է. «Որովհետև դուք հենց այդ բանի մեջ կանչվեցիք, որ Քրիստոսն էլ չարչարվեց և ձեզ էլ օրինակ թողեց, որ Նրա հետքերին հետևեք» (Ա Պետրոս 2.21):

Չնայած այսպես կոչված «բարգավաճման քարոզիչների» խոստումներին՝ շքեղ մեքենաները և դրամական հաջողությունը հավատացյալ մարդկանց կյանքի ավտոմատ հավելումները չեն:

Եվ այնուամենայնիվ, անհրաժեշտ է հիշել, որ ինչպիսին էլ լինի աշակերտության գինը, վերջնական պարգևի հետ համեմատած՝ այդ գինը հարաբերականորեն մեծ չէ:

Հաշվելով գինը. գլխավոր նախապատվությունը

Ուսումնասիրե՛ք Ղուկաս 12.49-53, 14.25,26, Մատթեոս 10.37-ը: Ինչպե՞ս պետք է մենք հասկանանք այդ կոշտ արտահայտությունները: Ի՞նչ է ասում այստեղ Հիսուսը: _____

_____

_____

_____

Ժամանակակից հեռուստաշոումենները այս խոսքերից մի հսկայական աղմկոտ վիճաբանություն կբարձրացնեին. «Այսօր նշանավոր կրոնական առաջնորդ Հիսուս Նազարեթցին իր օրվա ուղերձի ժամանակ ատելություն քարոզեց ընտանեկան հարաբերություններում: Վերլուծաբանները այդ վերջերս արված հայտարարությունները համեմատում են մերձավորների և թշնամիների հանդեպ սեր դրսևորելու՝ ավելի վաղ արված կոչերի հետ: Մեր մեկնաբանները փորձում են որոշել, թե կարելի՞ է արդյոք դա գնահատել որպես քաղաքական ընթացքի փոփոխություն: Այլ չհաստատված աղբյուրներ խոսում են այնպիսի արտահայտությունների մասին, որոնք կոչ են անում հետևորդներին՝ վաճառել ողջ ունեցվածքը և ստացված միջոցները զոհաբերել հանուն Հիսուսի շարժման: Սպասե՛ք մեր հետագա հաղորդագրություններին»:

Աստվածաշնչի ուշադիր ուսումնասիրությունը և այն, թե ինչպես է օգտագործվում այստեղ «ատելություն» բառը, կօգնի պարզաբանելու, թե ինչ նկատի ուներ Հիսուսը: Երկրորդ Օրինաց 21.15-ում գրված Մովսեսի օրենքը վերաբերում է բազմակնության մեջ ներգրավված տղամարդկանց: Հակոբ թագավորի թարգմանության տարբերակը, փոխանցելով այդ կանանց հանդեպ զգացած բնական զգացումները, հետևյալ թարգմանությունն է առաջարկում. «մեկը՝ սիրված, իսկ մյուսն՝ ատելի»: Մովսեսը խոսում է այն մասին, որ եթե ամուսինը ամենից շատ սիրում է կանանցից մեկին, ապա նա պակաս սիրված կանանց չի կարող զրկել իրենց իրավունքներից: Թարգմանությունների մյուս տարբերակները փոխում են բառը և «սիրվածի» փոխարեն օգտագործում «սիրելի», իսկ «ատելիի» փոխարեն՝ «չսիրված» եզրույթը: Ակնհայտ է, որ խոսքը գնում հարազատական կապվածության մասին է: Տվյալ համատեքստում «ատել» նշանակում է «քիչ սիրել»: Զուգահեռ հատվածը՝ Մատթեոս 10.37-ը, անկասկած, ավելի համոզիչ է դարձնում տվյալ ենթադրությունը:

Հիսուսի միտքը պարզ է, սակայն լի է խոր իմաստով: Երբ ընտանիքը դրվում է առաջին տեղում, իսկ Քրիստոսը՝ երկրորդ, Հիսուսը հրաժարվում է Տեր լինելուց: Անհնար է ծառայել մի քանի տերերի: Իհարկե, Քրիստոսը սատարում է ընտանեկան ամուր փոխհարաբերությունները: Սակայն այդ փոխհարաբերությունները ուժ են ստանում, եթե խարսխվում են անսասան հիմքի վրա: Այդ հիմքը Աստծո հանդեպ աներկբա սերն է, երբ Նա առաջին տեղում է գտնվում: Աստված չի ցանկանում, որ մեր և իր մեջ որևէ խոչընդոտ և արգելք լինի, որպեսզի ինչ-որ բան չշեղի մեզ: Աշակերտությունը ամենաբարձր գինն է պահանջում՝ անբաժանելի հավատարմություն Քրիստոսին:

Ինչպե՞ս է ձեզ հաջողվում ամենօրյա գործնական կյանքում Քրիստոսին ամեն ինչից, նույնիսկ ձեր ընտանիքի անդամներից բարձր դասել: Ի՞նչ է դա նշանակում և ի՞նչ հետևանքների կարող եք սպասել:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, մարտի 24

Կրելով իր խաչը

«Եվ ով որ իր խաչը վեր չառնի և իմ հետևից գա, նա չի կարող Իմ աշակերտը լինել» (Ղուկաս 14.27):

Աշակերտությունը ենթադրում է ընդունել Քրիստոսին՝ որպես Փրկիչ և Տեր: Հետևել Հիսուսին՝ նշանակում է, որ դուք պատրաստ եք ենթարկվելու այն նույն տառապանքներին, ինչին և Նա: Այդ պատճառով մենք պետք է ազնիվ լինենք այն բանում, թե ինչպես ենք ներկայացնում մեր լուրը: Իհարկե, անհրաժեշտ է ուսուցանել նաև հավատով արդարացման, Քրիստոսի ներման, Նրա անվերապահ վերադարձի, երկնքի անհամեմատելի հրաշքների և Աստծո ձրի շնորհի մասին փառավոր ճշմարտությունները:

Սակայն եթե հավատացյալներն ուզում են հռչակել Աստծո լուրը իր ողջ լրիվությամբ, նրանք չեն կարող բաց թողնել խաչը կրելու մասին լուրը: Ցավալի է, սակայն որոշ հավատացյալներ սխալմամբ կարծում են, թե ցանկացած լուրի քարոզ, որը ենթադրում է, որ մարդը պետք է ինչ-որ բան անի իր կողմից, օրինապահություն է: «Աստվածային շնորհն ամեն ինչ արել է- հպարտ բացականչում են նրանք,- և մարդուց ոչինչ չի պահանջվում, բացի այդ շնորհքն ընդունելը»: Սակայն Հիսուսն այդպես չէր կարծում:

Կարդացե՛ք Մատթեոս 16.21-25, Ղուկաս 21.12-19, Հովհաննես 15.17-20, 16.1,2-ը: Ի՞նչ են ասում մեզ այս համարները Հիսուսին հետևելու գնի մասին: _____

_____

Նախքան մկրտվելը յուրաքանչյուր թեկնածու պետք է հասկանա, որ Քրիստոսն Ինքն է որոշել Նրա համար որոշել խաչը, առանց որի նրանք ոչ մի ձևով չեն կարող դառնալ Իր աշակերտները: Արդյո՞ք դա նվազեցնում է վերստին ծնվելու ուրախությունը: Անհոգ կյանքի անհիրական խոստումը կարո՞ղ է արդյոք ինչ-որ կերպ բազմապատկել այդ ուրախությունը: Դարձի գալը հավատացյալին ազատագրում է մեղքի բեռից, բայց ոչ աշակերտության պատասխանատվությունից: Ընդունելով Քրիստոսի անունը և մկրտության միջոցով հրապարակավ հաստատելով այդ ընտրությունը՝ յուրաքանչյուր հավատավոր պետք է հասկանա, որ աշակերտությունն ունի իր գինը: Սակայն ի՞նչ կարող է առաջարկել այս աշխարհը, որ արժեզրկի Քրիստոսի առաջարկությունը: Ոչի՛նչ:

Ե՞րբ եք վերջին անգամ ստիպված եղել կրելու ձեր խաչը: Կիսվե՛ք այդ փորձառությամբ: Ի՞նչ սովորեցիք դրանից, ինչո՞վ կարող եք օգնել այն մարդուն, ով նման դժվարություններ է ապրում:

ԵՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 25

Կարգապահ պատասխան

Վերլուծե՛ք հետևյալ հատվածները. Ղուկաս 14.31-33, Ա Կորնթացիս 9.24-27, Եբրայեցիս 12.1-4, Բ Պետրոս 1.5-11: Ի՞նչ են մեզ ասում այս համարները աշակերտի կյանքի մասին: Ձեր անձնական փորձառությամբ ինչպե՞ս եք զգացել իրականությունն այն բանի, ինչ ասում է այստեղ Աստվածաշունչը: ____

_____

_____

_____

Աշակերտության գնի մեջ է մտնում նաև կարգապահությունը: Յուրաքանչյուր մղում, յուրաքանչյուր պատկերացում, յուրաքանչյուր ձգտում և յուրաքանչյուր ցանկություն *պետք է* ենթարկվի Քրիստոսին: Այն ամենը, ինչ մենք ունենք՝ նյութական, թե անտեսանելի, յուրաքանչյուր տաղանդ և յուրաքանչյուր հնարավորություն, այն

ամենը, ինչը գին ունի, *պետք է* ղեկավարվի Քրիստոսի կողմից: Այն ամենը, ինչը մենք չենք նվիրաբերում Նրան, կարող է դառնալ կուռք և անխուսափելիորեն կդառնա այդպիսին՝ մեզ շեղելով ուղուց:

Քրիստոսն իսկապես ուժ է առաջարկում մեզ՝ հաղթահարելու մեր բնավորության թերությունները: Ցանկացած ցանկություն, հույզ և մտավոր հակում կարող է գտնվել Նրա Հոգու առաջնորդության ներքո:

Ուշադրություն դարձրեք մարզիկների օրինակներին, որոնք օգտագործում է Պողոսը այսօրվա որոշ համարներում: Ոչ մի մարզիկ չի ծրագրավորում վազել ավելի դանդաղ, թռչել ավելի ցածր կամ նետել ավելի մոտ տարածության վրա: Նույնպես և ոչ մի հավատացյալ չպետք է հետ նայի, հատկապես երբ «մրցության» ելքից է կախված հավիտենական ճակատագիրը՝ ի տարբերություն ցանկացած պարգևի, որ կարող է ստանալ երկրային մարզիկը իր ծանր ջանքերի և մարզումների արդյունքում:

«Վազորդները հրաժարվում են այն ամենից, ինչը կարող է թուլացնել իրենց ուժերը, և խիստ ինքնակարգապահության օգնությամբ մարզում են իրենց մկանները, զարգացնում դիմացկություն, որպեսզի մրցության օրը մինչև վերջ «քամեն» իրենց: Որքան ավելի կևևոր է հավիտենության ձգտող քրիստոնյայի համար, որ իր կրքերը և բնազդները ենթարկի Աստծո կամքին: Նա ոչ մի դեպքում չպետք է թույլ տա, որ զվարճությունը, շքեղությունը կամ անհոգ ժամանակ անցկացնելը գրավեն իր ուշադրությունը: Հարկավոր է խստորեն վերահսկել սեփական մղումները և սովորությունները: Աստծո Խոսքի ուսմունքով լուսավորված և Աստծո Հոգով առաջնորդվող բանականությունը պետք է զսպի կառավարման սանձերը» (Է. Ուայթ, «Գործք առաքելոց», էջ 311):

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, մարտի 26

Համեմատելով գները

Ձեռնարկությունները առաջարկվող նախագծերի կենսական կայունությունը ստուգում են կորուստների արդյունավետության վերլուծությամբ: Նախագծի մեջ կա՞ն արդյոք այնպիսի բաղկացուցիչներ, որոնք կարող են ապահովել ներդրման եկամտաբերությունը: Ծախսերը կծածկվե՞ն արդյոք: Հաճախակի օգտագործվող մեկ այլ չափում է երկարաժամկետությունը: Այդ նախագիծը ենթադրու՞մ է արդյոք կայուն արդյունքների առկայություն:

Աշակերտության պարգևը նույնպես կարող է չափվել կորուստների համեմատության մեջ: Այդ ծախսերի մեջ կարող են մտնել հուզական ապրումները, սոցիալական մերժումը, ֆիզիկական տանջանքները, դրամների կորուստը, բանտարկությունը և վերջապես մահը: Յուրաքանչյուր մարդ, որ վճռում է գնալ աշակերտության ճանապարհով, պետք է նախ խնամքով կշռադատի հնարավոր հետևանքները:

Ի՞նչ են ասում մեզ հետևյալ համարները այն գնի մասին, որ երբեմն ստիպված ենք լինում վճարել աշակերտության համար: Մատթեոս 18.8,9, Ղուկաս 6.35, Փիլիպպեցիս 2.3: _____

_____

_____

Ի՞նչ են ասում հետևյալ համարները աշակերտության առավելությունների մասին: Ղուկաս 18.28-30, Յովհաննես 14.1-3, Հայտնություն 22.1-5: _____

_____

Անկասկած է, որ Հիսուսին հետևելու գինը կարող է բարձր լինել, հնարավոր է, նույնիսկ հարկ լինի զոհաբերել ամեն ինչ:

Սակայն մեկ բան հաստատապես կարելի է ասել. ինչ էլ մենք ձեռք բերենք այս կյանքում, ինչի էլ որ հասնենք, ինչ էլ անենք մեզ համար, այդ բոլորը պարզապես ժամանակավոր է, և չի կարող հավերժ երկարաձգվել: Այն կանհետանա և կվերանա մեկընդմիշտ:

Այն, ինչ մենք ձեռք ենք բերում Հիսուսի միջոցով՝ հավիտենական կյանք Նոր երկնքում և Նոր երկրում, շատ ավելի կարևոր է այն ամենից, ինչ առաջարկում է մեզ այս աշխարհը:

Մտածե՛ք այս աշխարհի այն բոլոր բավականությունների, բոլոր ուրախությունների և լավ բաների մասին, որ առաջարկվում են մեզ այստեղ և հիմա: Բայց ի՞նչ են դրանք հավիտենության համեմատ, որ անց կկացնենք Քրիստոսի հետ: Ինչպե՞ս կարող ենք սովորել միշտ հիշել այդ հակասության մասին: Ինչո՞ւ է դա կարևոր մեզ համար:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, մարտի 27

Լավագույն հարությունը

Կարդացե՛ք Եբրայեցիս 11.32-12.4: Ի՞նչ են ասում այդ համարները հենց ձեզ՝ աշակերտության գնի և պարգևի մասին: ____

_____

Ի՞նչ հզոր հայեցակարգ է բացահայտվում այստեղ, հատկապես այս համարում, որտեղ ասվում է. «Կանայք իրենց մեռելներն ընդունեցին հարությունից. ուրիշներն էլ խիստ չարչարվեցին, ազատությունը չընդունելով, որ լավագույն հարությանը հասնեն» (Եբրայեցիս 11.35):

Որոշակի իմաստով, լինել աշակերտ և լինել նա, ով աշակերտ է դարձնում ուրիշներին, հանգում է մի բանի՝ «լավագույն հարությանը»: Մենք հետևում ենք Քրիստոսին, որովհետև խոստում ունենք, հույս, փրկագնում նոր կյանքի՝ նոր աշխարհում, ուր չկա մեղք, վիշտ և մահ: Միևնույն ժամանակ, քանի որ մեզ տրված է այդ հույսը, այդ խոստումը, որ հնարավոր դարձավ բացառապես Հիսուսի կյանքի, մահվան, հարության և քահանայապետական ծառայության շնորհիվ, մենք ձգտում ենք ուրիշներին էլ ցույց տալ այդ հույսը, այդ խոստումը: Վերջիվերջո, մինչև մեծ պայքարի ավարտվելը, եթե մենք կենդանի չմնանք մինչև Երկրորդ գալուստը, մենք կհառնենք կա՛մ առաջին հարության ժամանակ՝ բոլոր արդարների հետ միասին, կա՛մ երկրորդ հարության ժամանակ՝ բոլոր անարդարների հետ միասին: Կա՞ արդյոք ավելի նշանակալի մի բան, որ դրդում է մեզ՝ ոչ միայն ինքներս մասնակից լինենք առաջին հարությանը, նաև ներդնենք մեզանից կախված բոլոր ջանքերը՝ ուրիշներին էլ դրդելու համար:

Բերքը հասունացել է. միլիոնավոր մարդիկ են սպասում աշակերտության կոչին: Մենք օրհնված ենք ոչ միայն Ավետարանով, այլ նաև՝ Ավետարանով հետևյալ համատեքստում. «Ճշմարտություններ ներկա ժամանակի համար»՝ Հայտնություն 14 գլխի եռհրեշտակային լուրով, որն Աստծո՝ աշխարհին ուղղված նախազգուշական վերջին լուրն է:

Ինչպե՞ս կվարվենք մենք այդ ջերմորեն սիրված ճշմարտությունների հետ: Եվ այսպես, մենք հարցնում ենք՝ որտե՞ղ են հնձվորները: Ո՞ւր են նրանք, ովքեր ցանկանում են գնալ Քրիստոսի հետ միասին և մասնակից լինել աշակերտության վտանգներին: Կընդունե՞ք արդյոք Աստծո հրավերը՝ լինելու ոչ միայն պարզապես աշակերտ, այլ նաև մարդկանց տանել աշակերտության, ինչ էլ որ դա արժենա ձեզ համար:

Մտածե՛ք առաջին և երկրորդ հարությունների մասին: Այդ երկու տարբերակների լույսի ներքո արդյո՞ք որևէ բան ավելի մեծ նշանակություն ունի, քան այն, որ ինքներդ հնարավորություն ունենաք մասնակից լինելու «լավագույն» հարությանը և ուրիշներին էլ տանեք դրան:

Հետագա ուսումնասիրության համար

Է. Ուայթի «Գործք առաքելոց» գրքից կարդացեք «Փոքր Ասիայի սահմաններից դուրս», էջ 219,220, «Բերիա և Աթենք», էջ 241,242, գլուխները:

«Աստված երկնքից կրակ է իջեցնում: Երկիրը պատռվում է, և նրա խորքերում թաքնված զենքը վերև է բարձրանում: Բոլոր անդունդներից և խորխորատներից դուրս է ժայթքում ամենակուլ բոցը: Նույնիսկ ժայռերն են այրվում: Եկել է «այն օրը, որ վառված է թոնիրի պես»: «Եվ տարերքը կրակով վառված կհալվեն, և երկիրը և նրանում եղած բաներն էլ կայրվեն» (Մաղաքիա 4.1, Բ Պետրոս 3.10): Երկրի ողջ մակերևույթը մի ամբողջ հալված զանգված է թվում, հսկայական, եռացող և կրակ շնչող ծով: Եկել է դատաստանի և ամբարիշտների կործանման օրը, «որովհետև վրեժխնդրության օր է Տիրոջ համար, հատուցման տարի է Սիոնի վեճի համար» (Եսայիա 34.8):

Ամբարիշտներն ստանում են իրենց վարձքը երկրի վրա (տե՛ս Առակաց 11.31): Նրանք «հարդի պես են լինելու. և նրանց պետք է այրի այն եկող օրը, ասում է Զորաց Տերը» (Մաղաքիա 4.1): Մարդկանց մի մասը ակնթարթորեն է ոչնչանում, իսկ մյուսները տառապում են շատ օրեր: Բոլորը կպատժվեն իրենց գործերին համապատասխան:

Այժմ Աստծո արարչագործությունը մեկընդմիշտ ազատագրված է նրա ներկայությունից և գայթակղություններից: «Հանգստացել հանդարտել է ողջ երկիրը. նրանք գոչում են ցնծությամբ» (Եսայիա 14.7): Մեղք չգործած տիեզերքը փառաբանում է և ցնծում: Լսվում է «Իբր մի մեծ բազմության ձայն և իբր շատ ջրերի ձայն, սաստիկ որոտմունքի ձայնի նման. որ ասում էր. Ալելուի՜ա, որովհետև ամենակալ Տեր Աստվածը թագավորեց» (Հայտնություն 19.6) (Է. Ուայթ, «Մեծ պայքար», էջ 672,673):

Հարցեր քննարկման համար

1. Դիտրիխ Բոնհոֆերը, գերմանացի լութերական հովիվը, աստվածաբան, հականացիստական դավադրության մասնակից, ում քրիստոնեական հավատը մահվան տարավ նրան, գրել է մի հայտնի գիրք, որ կոչվում է «Աշակերտության գինը»: Ներքևում բերում ենք մի քանի մեջբերումներ այդ գրքից: Արդյոք համապատասխանու՞մ

են այս մտքերը այս շաբաթվա մտորումներին: «Հին կյանքը հետևում է մնացել և ամբողջովին արմատախիլ արվել: Աշակերտը դուրս է բերվում հարաբերական անվտանգությունից և խորասուզվում բացարձակ ոչ անվտանգության մեջ» (այսինքն ճշմարտության մեջ, Հիսուսի հետ հարաբերությունների բացարձակ պաշտպանության և անվտանգության մեջ), (էջ 62,63):

2. «Եթե մենք հետևում ենք Հիսուսին, պետք է կոնկրետ, որոշակի քայլեր նախաձեռնենք: Առաջին քայլը, որ հետևում է կոչին, կտրում է աշակերտին իր նախկին կեցությունից» (էջ 66,67):
3. «Յուրաքանչյուր քրիստոնյայի վրա խաչ է դրված: Առաջին տառապանքը, որ նա պետք է կրի նա, այս աշխարհից պոկվելու կոչն է: Երբ Քրիստոսը կոչ է անում մարդուն, Նա հրավիրում է նրան գալ և մահանալ» (էջ 99):

Շաբաթօրյա դպրոցի Աստվածաշնչի ուսումնասիրության ձեռնարկ
2014 թվականի առաջին եռամսյակ

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Դեն Սոլիս

Գլխավոր խմբագիր՝ Պավել Սարգսյան
Թարգմանությունը և
համակարգչային շարվածքը՝ Հովիկ Մխիթարյան
Վերստուգող՝ Մերինե Աթոյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Մաղոյան
Համակարգչային ձևավորող՝ Կորյուն Կակոյան